

**ՀԱՐՏԱՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**НАУЧНЫЕ ТРУДЫ НАЦИОНАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА
АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱ

Գլխավոր խմբագիր՝ Սարգիս Թովմասյան (ճ.դ., ՀՀ), tosar@mail.ru
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Միհրան Ստակյան (ս.գ.դ., ՀՀ),
stakyan.mihran@yandex.com
Պատասխանատու քարտուղար՝ Արմենուհի Ալեքսանյան, (ՀՀ),
aleksanyan.armenuhi@yandex.com

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գալինա Ամբրոսովա (ս.գ.թ., ՌԴ), galina-ambrosova@yandex.ru
Մարիամ Ավագյան (կ.գ.թ., ՀՀ), avagyan_mariam@yahoo.com
Բեկրիմժան Գաուդինով (ճ.դ., ՂՀ), abekga@mail.ru
Դիմիտրիս Դիամանտիդիս (ս.գ.դ., ԳԴՀ),
dimitris.diamantidis@oth-regensburg.de
Տիգրան Դադայան (ս.գ.դ., ՀՀ), tigran.dadayan@yahoo.com
Սուրեն Թովմասյան (ս.գ.թ., ՀՀ), suren.tovmasyan@gmail.com
Էմիլ Խաչատրյան (ս.գ.դ., ՀՀ), khachatryan@rambler.ru
Թագուշ Խաչատրյան (ճ.թ., ՀՀ), tagush.khachatryan@mail.ru
Լյուդմիլա Խոլոդովա (ճ.դ., ՌԴ), theory@usaaa.ru
Անատոլի Կովրով (ս.գ.թ., Ուկրաինա), list@ogasa.org.ua
Դարյա Կուբեչկովա (ս.գ.թ., ՉՀ), darja.kubeckova@vsb.cz
Պետրոս Համբարձումյան (ս.գ.դ., ՀՀ), hpv58@yandex.ru
Եղիսաբեթ Հայրապետյան (ս.գ.թ., ՀՀ), helizabet@yandex.ru
Կարեն Ռաշիդյան (ս.գ.թ., ՀՀ), rka1945@mail.ru
Վալերիկ Հարությունյան (ս.գ.թ., ՀՀ), vmh-1961@mail.ru
Արմեն Ղազարյան (արվ.դ., ՌԴ), armenkazaryan@yahoo.com
Արմինե Ղուկասյան (ս.գ.թ., ՀՀ), Ghulyanarmine@mail.ru
Մալին Մայոր (ս.գ.թ., ԼՀ), mmajor@bud.pcz.czyst.pl
Կրիստինա Մարանցի (ճ.թ., ԱՄՆ), christina.maranci@tufts.edu
Արտաշես Մելիքյան (ճ.թ., ՀՀ), artashesmelikyan@rambler.ru
Մուն Մին (ճ.դ., ՉԺՀ), ming.sun@ntu.ac.uk
Մայիդ Մուհեմմադի Նահավանդի (ճ.թ., ԻԻՀ),
saeid.nahavandi@deakin.edu.au
Դավիթ Նահատակյան (ճ.թ., ՀՀ), dnahatakyan@nuaca.am
Սամվել Շահինյան (ճ.դ., ՀՀ), samvel.shahinyan1954@gmail.com
Միխայիլ Շուբենկով (ճ.դ., ՌԴ), shubenkov@raasn.ru
Ջի Չենգժի (ս.գ.դ., ՉԺՀ), qichengzhi65@163.com
Մանվել Պողոսյան (ս.գ.դ., ՀՀ), pmanvel2010@yandex.ru
Պաոլա Պումա (ճ.թ., ԻՀ), paola.puma@unifi.it
Մարյենա Ռայչիկ (ս.գ.դ., ԼՀ), mrajczyk@bud.pcz.czyst.pl
Էմմա Սահակյան (ս.գ.դ., ՀՀ), shnikat15@mail.ru
Արտաշես Սարգսյան (ս.գ.թ., ՀՀ), ansargsyan@yahoo.com
Արեստակ Սարուխանյան (ս.գ.դ., ՀՀ), asarukhanyan51@mail.ru
Օլեգ Սուբբոտին (ճ.դ., ՌԴ), subbos@yandex.ru
Դմիտրի Տոպչի (ս.գ.դ., ՌԴ), mail@niexp.com
Գեորգի Ուստավիչ (ս.գ.դ., ՌԴ), ystavich@mail.ru
Աննա Քարամյան (ս.գ.թ., ՀՀ), annak@termoros.am
Դավիթ Քերթմենջյան (ճ.դ., ՀՀ), dakertmenjyan@gmail.com
Աննա Ֆրանցիպանե (ս.գ.դ., ԻՀ), anna.frangipane@uniud.it
Արմեն Տեր-Մարտիրոսյան (ս.գ.դ., ՌԴ), gic-mgsu@mail.ru
Լարիսա Մանուկյան (ս.գ.թ., ՀՀ), laradocent@gmail.com
Կիպիանի Գելա (ս.գ.դ., Վրաստան), gelakip@gmail.com

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Главный редактор – Саркис Товмасян (д.архит., РА),
tosar@mail.ru
Зам. главного редактора – Мигран Стакян (д.т.н., РА),
stakyan.mihran@yandex.com
Ответственный секретарь – Арменуи Алексанян, (РА),
aleksanyan.armenuhi@yandex.com
РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Галина Амбросова (к.т.н., РФ), galina-ambrosova@yandex.ru
Мариам Авагян (к.б.н., РА), avagyan_mariam@yahoo.com
Бекримжан Глаудинов (д.архит., РК), abekga@mail.ru
Димитрис Диамантидис(д.т.н., ФРГ),
dimitris.diamantidis@oth-regensburg.de
Тигран Дадаян (д.т.н., РА), tigran.dadayan@yahoo.com
Сурен Товмасян (к.т.н., РА), suren.tovmasyan@gmail.com
Эмиль Хачатрян (д.т.н.,РА), khachatryan@rambler.ru
Тагуш Хачатрян (к.архит.,РА), tagush.khachatryan@mail.ru
Людмила Холодова (д.архит., РФ), theory@usaaa.ru
Анатолий Ковров (к.т.н., Украина), list@ogasa.org.ua
Дарья Кубечкова (к.т.н., ЧР), darja.kubeckova@vsb.cz
Петрос Амбарцумян (д.т.н., РА), hpv58@yandex.ru
Егисабет Айрапетян (к.т.н., РА), helizabet@yandex.ru
Карен Рашидянц (к.т.н., РА), rka1945@mail.ru
Валерик Арутюнян (к.т.н., РА), vmh-1961@mail.ru
Армен Казарян (д.искусств., РФ), armenkazaryan@yahoo.com
Армине Гулян (к.т.н., РА), Ghulyanarmine@mail.ru
Мачие Майор (к.т.н., РП), mmajor@bud.pcz.czyst.pl
Кристина Маранци (к.архит., США), christina.maranci@tufts.edu
Арташес Меликян (к.архит., РА), artashesmelikyan@rambler.ru
Сунь Мин (д. архит., КНР), ming.sun@ntu.ac.uk
Саид Моаммади Нааванди (к.архит, ИРИ),
saeid.nahavandi@deakin.edu.au
Давид Наатакян (к.архит., РА), dnahatakyan@nuaca.am
Самвел Шаинян (д.архит., РА), samvel.shahinyan1954@gmail.com
Михаил Шубенков (д.архит., РФ), shubenkov@raasn.ru
Ки Ченгжи (д.т.н., КНР), armspeleo@yahoo.com
Манвел Погосян (д.т.н., РА), pmanvel2010@yandex.ru
Паола Пума (к.архит., ИР), paola.puma@unifi.it
Марлена Райчик (д.т.н., РП), mrajczyk@bud.pcz.czyst.pl
Эмма Саакян (д.т.н., РА), shnikat15@mail.ru
Арташес Саргсян (к.т.н.,РА), ansargsyan@yahoo.com
Арестак Саруханян (д.т.н., РА), asarukhanyan51@mail.ru
Олег Субботин (д.архит., РФ), subbos@yandex.ru
Дмитрий Топчий (д.т.н., РФ), mail@niexp.com
Георгий Уставич (д.т.н., РФ), ystavich@mail.ru
Анна Карамян (к.т.н., РА), annak@termoros.am
Давид Кертменджян (д.архит., РА), dakertmenjyan@gmail.com
Анна Франджипане (д.т.н., ИР), anna.frangipane@uniud.it
Армен Тер-Мартirosян (д.т.н., РФ), gic-mgsu@mail.ru
Лариса Манукян (к.т.н., РА), laradocent@gmail.com
Кипиани Гела (д.т.н., Грузия), gelakip@gmail.com

SCIENTIFIC PAPERS OF NATIONAL UNIVERSITY OF ARCHITECTURE & CONSTRUCTION OF ARMENIA

EDITORIAL COUNCIL

Editor-in-chief – Sargis Tovmasyan (Doctor of science (architecture), RA), tosar@mail.ru

Vice editor-in-chief - Mihran Stakyan (Doctor of science (engineering), RA), stakyan.mihran@yandex.com

Executive secretary – Armenuhi Aleksanyan, (RA), aleksanyan.armenuhi@yandex.com

EDITORIAL BOARD

Galina Ambrosova (Ph.D in engineering, RF),	galina-ambrosova@yandex.ru
Mariam Avagyan (Doctor of Philosophy (Ph.D) in biology, RA),	avagyan_mariam@yahoo.com
Bekrimzhan Glaudinov (Doctor of science (architecture), RK),	abekga@mail.ru
Dimitris Diamantidis (Doctor of science (engineering), FRG),	dimitris.diamantidis@oth-regensburg.de
Tigran Dadayan (Doctor of science (Engineering, RA),	tigran.dadayan@yahoo.com
Suren Tovmasyan (Ph.D in engineering, RA),	suren.tovmasyan@gmail.com
Emil Khachatryan (Doctor of science (engineering), RA),	khachatryan@rambler.ru
Tagush Khachatryan (Ph.D in architecture, RA),	tagush.khachatryan@mail.ru
Lyudmila Kholodova (Doctor of science (architecture), RF),	theory@usaaa.ru
Anatoli Kovrov (Ph.D in engineering, Ukraine),	list@ogasa.org.ua
Darya Kubechkova (Ph.D in engineering, CZ),	darja.kubechkova@vsb.cz
Petros Hambardzumyan (Doctor of science (engineering), RA),	hvp58@yandex.ru
Yeghisabet Hayrapetyan (Ph.D in engineering, RA),	helizabet@yandex.ru
Karen Rashidyants (Ph.D in Engineering, RA),	rka1945@mail.ru
Valerik Harutyunyan (Ph.D in engineering, RA),	vmh-1961@mail.ru
Armen Ghazaryan (Doctor of science (art), RF),	armenkazaryan@yahoo.com
Armine Ghulyan (Ph.D in engineering, RA),	Ghulyanarmine@mail.ru
Maciej Major (Ph.D in engineering, RP),	mmajor@bud.pcz.czest.pl
Christina Maranci (Ph.D in architecture, USA),	christina.maranci@tufts.edu
Artashes Melikyan (Ph.D in architecture, RA),	artashesmelikyan@rambler.ru
Sun Ming (Doctor of science (architecture), PRC),	ming.sun@ntu.ac.uk
Saeed Mohammadi Nahavandi (Ph.D in architecture, IRI),	saeid.nahavandi@deakin.edu.au
Davit Nahatanyan (Ph.D in architecture, RA),	dnahatanyan@nuaca.am
Samvel Shahinyan (Doctor of science (architecture), RA),	samvel.shahinyan1954@gmail.com
Mikhail Shubenkov (Doctor of science (architecture), RF),	shubenkov@raasn.ru
Qi Chengzhi (Doctor of science (engineering), PRC),	armspeleo@yahoo.com
Manvel Poghosyan (Doctor of science (engineering), RA),	pmanvel2010@yandex.ru
Paola Puma (Ph.D in architecture, IR),	paola.puma@unifi.it
Marlena Rajczyk (Doctor of science (engineering), RP),	mrajczyk@bud.pcz.czest.pl
Emma Sahakyan (Doctor of science (engineering), RA),	shnikat15@mail.ru
Artashes Sargsyan (Ph.D in engineering, RA),	ansargsyan@yahoo.com
Arestak Sarukhanyan (Doctor of science (engineering), RA),	asarukhanyan51@mail.ru
Oleg Subbotin (Doctor of science (architecture), RF),	subbos@yandex.ru
Dmitriy Topchiy (Doctor of science (engineering), RF),	mail@niiexp.com
Georgy Ustavich (Doctor of science (engineering), RF),	ystavich@mail.ru
Anna Karamyan (Ph.D in engineering, RA),	annak@termoros.am
David Kertmenjian (Doctor of science (architecture), RA),	dakertmenjian@gmail.com
Anna Frangipane (Doctor of science (engineering),	anna.frangipane@uniud.it
Armen Ter-Martirosyan (RF), Doctor of Science (Engineering),	gic-mgsu@mail.ru
Larisa Manukyan (Ph.D in engineering, RA),	laradocent@gmail.com
Kipiani Gela (Georgia), Doctor of science (Engineering),	gelakip@gmail.com

Հրատարակվում է ՃՇՀԱՀ Գիտատեխնիկական Խորհրդի որոշմամբ: Հիմնադրվել է 1996թ.:

Լույս է տեսնում տարին 3 անգամ, ծավալը՝ մինչև 15 հոդված:

Издается по решению Научно-технического Совета НУАКА. Основан в 1996г.

Выходит 3 раза в год, объем до 15 статей.

Is published by resolution of Academic and Technical Council of NUACA. Established in 1996.

Published 3 times a year, volume – up to 15 papers.

© ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, 2025

© Национальный университет архитектуры и строительства Армении, 2025

© National University of Architecture and Construction of Armenia, 2025

ISSN 1829-4200

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT, RA

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

НАУЧНЫЕ ТРУДЫ

НАЦИОНАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА
АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

SCIENTIFIC PAPERS OF

NATIONAL UNIVERSITY OF
ARCHITECTURE & CONSTRUCTION OF ARMENIA

ՀԱՏՈՐ ♦ TOM ♦ VOLUME

3 (93) 2025

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ,
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

АРХИТЕКТУРА, ГРАДОСТРОИТЕЛЬСТВО,
СТРОИТЕЛЬСТВО

ARCHITECTURE, URBAN PLANNING,
CONSTRUCTION

ԵՐԵՎԱՆ · ЕРЕВАН · YEREVAN

2025

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀՀ ԲՈԿ-Ի ՈՐՈՇՄԱՍԲ ԸՆԴԳՐԿՎԵԼ Է ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ
ՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ՇԱՐԱԴՐՎՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՎՆԻԻՆՏՊԻ
«ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՌԵՖԵՐԱՏԻՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ (ISSN 0233-8440)

**НАУЧНЫЕ ТРУДЫ
НАЦИОНАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА
АРМЕНИИ**

ПО РЕШЕНИЮ ВАК РА ВКЛЮЧЕН В ПЕРЕЧЕНЬ ПЕРИОДИЧЕСКИХ НАУЧНЫХ ИЗДАНИЙ,
ПРИНЯТЫХ ДЛЯ ПУБЛИКАЦИИ ОСНОВНЫХ РЕЗУЛЬТАТОВ И ПОЛОЖЕНИЙ
ДОКТОРСКИХ И КАНДИДАТСКИХ ДИССЕРТАЦИЙ

РЕФЕРИРУЕТСЯ В РЕФЕРАТИВНОМ ИНФОРМАЦИОННОМ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОМ
ЖУРНАЛЕ “СТРОИТЕЛЬСТВО И АРХИТЕКТУРА” (ISSN 0233-8440)
ВНИИНТПИ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

**SCIENTIFIC PAPERS OF
NATIONAL UNIVERSITY OF ARCHITECTURE & CONSTRUCTION OF ARMENIA**

BY THE DECISION OF SUPREME CERTIFYING COMMITTEE OF RA (SCC of RA) HAS BEEN
INCLUDED IN THE LIST OF PERIODIC SCIENTIFIC PUBLICATIONS ACCEPTED FOR PUBLISHING
THE MAIN RESULTS AND THE PROVISIONS OF DOCTORAL AND CANDIDATE DISSERTATIONS

ARE ABSTRACTED IN THE INFORMATIONAL SCIENCE AND TECHNOLOGY ABSTRACTS
JOURNAL OF “CONSTRUCTION AND ARCHITECTURE” (ISSN 0233-8440) OF VNIINTPI OF
RUSSIAN FEDERATION

**ԲԵՏՈՆԻ ԼԱՐՎԱԾԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ ԲԱԶՄԱՇԵՐՏ ԱԾԽԱԾՆԱՅԻՆ ՆԱՆՈՒՈՂՈՎԱԿՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Սուրեն Աշոտի Մալումյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ
surmalumyan@gmail.com*

Ածխածնային նանոխողովակների ներդրումը բետոնում և շաղախում նպաստում է նյութի մեխանիկական հատկությունների զգալի բարելավմանը: Այդ հատկությունների ուսումնասիրման համար, թեև փորձարարական մեթոդները տալիս են իրական արդյունքներ, դրանք պահանջում են մեծ նյութական ներդրումներ և զգալի ժամանակ: Ժամանակակից թվային մոդելավորման մեթոդները ծառայում են կանխատեսելու և օպտիմալացնելու փորձարարական հետազոտությունների արդյունքները: “ANSYS” թվային հաշվարկային ծրագրով, վերջավոր տարրերի մեթոդի կիրառմամբ, մոդելավորվել են տարբեր բազմաշերտ ածխածնային նանոխողովակների (ԲԱՆԽ) բերված կոնցենտրացիաներով և արտաքին տրամագծերով խորանարդ նմուշների տեսքով նյութեր: Թվային վերլուծության արդյունքում հետազոտվել է նմուշների առաձգականության մոդուլների (E_1 , E_2 , E_3) լարվածային վիճակն առանցքային սեղմման դեպքում: Միննույն սեղմման ուժի ազդեցության տակ նմուշների լայնական հատույթի միջին հատվածում բետոնի մատրիցում նորմալ լարումները 0-ական նմուշների նկատմամբ էականորեն նվազում են համեմատաբար փոքր տրամագծի ԲԱՆԽ դեպքում (6,25 %), իսկ անկյունային հատվածներում՝ ԲԱՆԽ-երի միջին չափի տրամագծի դեպքում (19,46 %): Ստացվածը հաստատում է ցեմենտային կապակցանյութով ԲԱՆԽ-երով նանոշաղախների և նանոբետոնների իրականացված փորձարարական հետազոտությունների արդյունքները: Կատարված ուսումնասիրությունները կարող են հիմք հանդիսանալ փորձարարական հետազոտությունների համար՝ խնայելով նյութական ռեսուրսներ և ժամանակ, ինչպես նաև նպաստել նանոշաղախների և նանոբետոնների մեխանիկական հատկությունների կատարելագործմանը:

Բանալի բառեր. ածխածնային նանոխողովակ, բետոն, վերջավոր տարրերի մեթոդ, սեղմում, արտաքին տրամագիծ

Ներածություն

Ցեմենտային կապակցանյութով բետոնն ու շաղախը հանդիսանում են ժամանակակից շինարարության հիմնարար նյութերը՝ շնորհիվ բարձր մեխանիկական և ֆիզիկաքիմիական հատկությունների [1, 2]: Վերջին տասնամյակներում մեծ ուշադրություն է դարձվում բետոնի միկրոկառուցվածքի կատարելագործմանը՝ նոր հավելանյութերի ներդրման միջոցով, որոնք կա-

րող են նպաստել ցեմենտային կապակցանյութով բետոնի և շաղախի սեղմման և ծոման ամրությունների, ինչպես նաև ճաքակայունության բարելավմանը: Այսօր շինարարական նյութագիտության մեջ լայն կիրառություն են գտնում տարբեր տեսակի և կազմի միկրոթելքեր (պոդպատե, ապակե, բազալտե, ածխածնային և այլն), ինչպես նաև ածխածնային նանոմասնիկներ (նանոգրաֆեններ, նանոգնդեր, նանոխողովակներ և այլն), որոնք, դիսպերսվելով կամ խառնվելով ցեմենտային կապակցանյութի մասնիկների հետ կամ լցնելով վերջինիս միջհատիկային խոռոչները, ապահովում են նյութի ավելի խիտ և մեխանիկապես ամուր կառուցվածք [3-5]: Նանոմասշտաբային հավելանյութերի մեջ լայն ուսումնասիրություն ունեն ածխածնային նանոխողովակները (ԱՆԽ), իրենց կապակցանյութում նանոամրանավորման հատկության շնորհիվ, ունեն մեծ երկարություն/արտաքին տրամագիծ կողմերի հարաբերակցություն (100-ից 1000 և ավելի)՝ *“aspect ratio”*, զգալի մեծ առաձգականության մոդուլ ($1 \text{ } S\mathcal{M}$) և ձգման մեծ ամրություն ($50...200 \text{ } G\mathcal{M}$) [6-10]:

Տարբեր փորձարարական հետազոտություններ ցույց են տվել, որ ցեմենտի զանգվածի նկատմամբ $0,01...0,30 \%$ կոնցենտրացիաների կիրառումը բերում է շաղախի և բետոնի մեխանիկական հատկությունների զգալի բարելավմանը: Ա. Սվիրգենը և այլոք ցույց են տվել, որ ցեմենտի զանգվածի նկատմամբ ԲԱՆԽ-երի $0,045 \%$ կոնցենտրացիայի կիրառումը հանգեցրել է ցեմենտային շաղախի 50% սեղմման ամրության աճի [11]: Ս.Ջ. Սուջաթան ցույց է տվել, որ ԲԱՆԽ-երի օպտիմալ կոնցենտրացիայի կիրառման դեպքում ցեմենտային կապակցանյութով բարձրամուր բետոնի սեղմման և ծոման ամրություններն աճել են, համապատասխանաբար, 16% և 20% [12]:

Էական կարևորություն ունի ԲԱՆԽ-երի արտաքին չափերի հարաբերակցության ազդեցությունը ցեմենտային կապակցանյութով նանոբետոնների և նանոշաղախների մեխանիկական հատկությունների վրա [13, 14]: ԲԱՆԽ-երի տարբեր արտաքին տրամագծերի և չափերի հարաբերակցության դեպքում ցեմենտային կապակցանյութով շաղախի և բետոնի մեխանիկական հատկությունների փորձարարական հետազոտությունները ցույց են տվել, որ վերջինիս միևնույն կոնցենտրացիայի և փոքր արտաքին տրամագծի դեպքում սեղմման ամրությունը զգալի կերպով բարելավվում է. նանոշաղախների դեպքում՝ $21,7 \%$, իսկ բետոնների դեպքում՝ $9,4 \%$ [13, 14]: Ընդ որում, երկու հետազոտություններում էլ ԲԱՆԽ-երի ամենափոքր արտաքին տրամագիծը չի անցնում $10 \text{ } \mu\text{m}$ -ը:

Փորձարարական հետազոտություններին զուգահեռ, այսօր լայն կիրառություն ունի թվային հետազոտությունը: Թեև փորձարարական մեթոդները տալիս են իրական արդյունքներ, դրանք պահանջում են նյութական, ռեսուրսային մեծ ներդրումներ և զգալի ժամանակ: Ժամանակակից եռաչափ թվային մոդելավորման մեթոդները ծառայում են կանխատեսելու և օպտիմալացնելու փորձարարական հետազոտությունների արդյունքները [6, 15-20]: Թվային հետազոտությունների համար լայն կիրառություն ունի վերջավոր տարրերի մեթոդը (ՎՏՄ), որի կիրառման հնարավարության տիրույթում նպատակահարմար է վերլուծել տարբեր հավելանյութերով ցեմենտային մատրիցների մեխանիկական հատկությունները (առաձգականության և սահքի մոդուլ, սեղմման, ձգման, ծոման ամրություն և այլն): Ի.Է. Կավվադիասը և այլոք ցույց են տվել, որ նանոշաղախների

մեխանիկական հատկությունների թվային վերլուծությամբ ստացված արդյունքները համապատասխանում են փորձարարական հետազոտությամբ ստացված արդյունքներին, որի դեպքում սեղմման, ծռման ամրությունը և առաձգականության մոդուլն աճել են մինչև 10 % [15]:

Նյութի կառուցվածքի թվային եռաչափ մոդելավորման համար կիրառվում է ՎՏՄ-ն՝ օգտագործելով ներկայացուցչական ծավալային տարրը (ՆՕՏ) “RVE”, որը նկարագրում է նյութի միջին կառուցվածքային հատկանիշները նանո- և միկրոմասշտաբներում, առանց որի հնարավոր չի լինի նկարագրել ցեմենտային մատրիցում պատահականության սկզբունքով բաշխված տարատեսակ հավելանյութերի ֆիզիկական առկայությունը: Հավելանյութերի մոդելավորման այլ մոտեցումը կհանգեցնի զգալի ժամանակի կորստի և ծրագրային խնդիրների, ուստի՝ վերլուծության անհնարինություն: Այս առումով դժվարություն է հանդիսանում նկարագրել ԲԱՆԽ-երի իրական մոդելը, իր ատոմական կառուցվածքի պատճառով, նաև ցեմենտային մարմնի ֆիզիկական ոչ գծայնությունը, քանի որ ՆՕՏ-ում նանոհավելանյութով նյութի մոդելը նանոմասշտաբային է և ՎՏՄ-ում նյութի ոչ գծային բնույթը նկարագրող և կիրառություն ունեցող “SOLID-65” վերջավոր տարրի կիրառումը զգալի կդժվարացնի հետագա մոդելավորման և վերլուծության ընթացքը:

Այնուամենայնիվ, օգտվելով առկա և արդի ծրագրային հնարավորություններից, կիրառելով “SOLID-186” վերջավոր տարրը, նանոխողովակները և ցեմենտային մատրիցը մոդելավորվել են, համապատասխանաբար, որպես հոծ, առաձգական պինդ մարմին: Նանոխողովակները փոխարինվել են կլոր հատվածքի անընդհատ նանոձողերով, որոնց գծային բերված կոշտությունը կհամապատասխանի ընտրված ԲԱՆԽ-երի գծային կոշտությանը: Ցեմենտային մատրիցի ֆիզիկամեխանիկական վարքագիծն առավել լիարժեք բնորոշելու համար վերջինիս ֆիզիկական ոչ գծայնությունը հաշվի կառնվի հետագա մակրոմասշտաբային հետազոտությունների ժամանակ: Ցեմենտային մատրիցի և նանոխողովակների միջև կապը մոդելավորվել է անընկրկելի: Նյութի իրական կառուցվածքային համակարգում այդ կապն ապահովվում է Վան դեր Վաալսյան միջմոլեկուլային ամուր փոխազդեցության ուժերով [3, 6]: Բազմաթիվ աշխատանքներ անդրադարձել են ցեմենտային մատրիցի և նանոխողովակների շաղկապման ամրությանը, որը հիմնականում կախված է միջատոմային փոխազդեցության գործոններից: Այնուամենայնիվ, շաղկապման ամրության թվային հետազոտություններն իրականացվում են ատոմային մասշտաբներում, որպես առանձին նանոխողովակի պոկման վերլուծություն (*pull-out analyses*) [3, 6]:

Սույն աշխատանքում “ANSYS” թվային հաշվարկային ծրագրով, ՎՏՄ-ի կիրառմամբ ՆՕՏ-ում մոդելավորվել են բերված կոնցենտրացիաներով (0,05 %, 0,10 % և 0,15 %՝ զանգվածի նկատմամբ) և արտաքին տրամագծերով (10 նմ, 20 նմ և 30 նմ) ԲԱՆԽ-երով B25 դասին համապատասխանող բետոնե խորանարդ նմուշներ: ՆՕՏ-ում նախապես որոշվել են նմուշների առաձգականության մոդուլները երեք ուղղություններով (E_1 , E_2 , E_3), գնահատելու վերջինիս կոշտության բնութագրերի փոփոխությունը: Թվային վերլուծության արդյունքում “SOLID-186” վերջավոր տարրերի կիրառ-

մամբ կատարվել է դիտարկվող 9 խորանարդ նմուշների համար լարվածային վիճակի վերլուծություն, կոնցենտրացիա-արտաքին տրամագիծ պարամետրերի փոփոխության ազդեցությունը ցեմենտային կապակցանյութով բետոնի սեղմման ամրության վրա գնահատելու նպատակով:

Նյութեր և մեթոդներ

Սույն հոդվածում թվային ԲԱՆՄ-երով բաղադրանյութի ֆիզիկամեխանիկական հատկությունների թվային վերլուծության համար օգտագործվել է “ANSYS” հաշվարկային ծրագիրը՝ կիրառելով ՎՏՄ: Նյութերի թվային նկարագրության նպատակով “Material Designer” ենթածրագրի միջոցով մոդելավորվել են $1500 \times 1500 \times 1500$ նմ չափերով խորանարդային նմուշներ, որոնց մեջ ընդունվել է չափային 5% պատահական շեղում: Բոլոր մոդելներում բետոնի մատրիցը դիտարկվել է որպես B25 դասի պինդ և համասեռ մարմին՝ իր ֆիզիկամեխանիկական հատկություններով: Հաշվարկների համար դիտարկվել են 9 նմուշներ, որոնցում ԲԱՆՄ-երը նկարագրելու համար մոդելավորվել են երեք տարբեր կոնցենտրացիաների (0,01, 0,02 և 0,03 %՝ նմուշի զանգվածի նկատմամբ) և երեք տարբեր տրամագծի (25, 33 և 40 նմ) կլոր հատվածով և հոծ կառուցվածքով ածխածնային թելքեր, որոնց գծային կոշտությունը համապատասխանում է նախատեսվող ԲԱՆՄ-երի բերված կոշտությանը (1) (աղ. 1): Նկ. 1-ում բերված են “Ansys” ծրագրի “Material Designer” ենթածրագրի մոդելավորված ածխածնային թելքերի չափերը և վերջինիս համարժեք ԲԱՆՄ-երի բերված արտաքին տրամագծերը.

$$E_{\text{ած}} \cdot A_{\text{ած}} = E_{\text{ԲԱՆՄ}} \cdot A_{\text{ԲԱՆՄ}}, \quad (1)$$

որտեղ $E_{\text{ած}}$ և $E_{\text{ԲԱՆՄ}}$ -ը ածխածնային թելքերի և նանոխողովակների առաձգականության մոդուլներն են, որոնք հավասար են, համապատասխանաբար, 230 և 1000 ԳՊա, $A_{\text{ած}}$ և $A_{\text{ԲԱՆՄ}}$ -ն՝ ածխածնային թելքերի և ԲԱՆՄ-երի լայնական հատվածքի մակերեսները: $A_{\text{ԲԱՆՄ}}$ -երի ստացման ժամանակ նանոխողովակների շերտերի քանակը պայամանականորեն ընդունվել է 10, ընդհանուր հաստությունը՝ 3,0...3,5 նմ:



Նկ. 1. Մոդելավորված ածխածնային թելքերի և դրան համապատասխանող ԲԱՆՄ-երի սխեման


Աղյուսակ 1

Նմուշների համարակալումն ըստ թելքերի տրամագծի և կոնցենտրացիայի (փակագծում՝ ԲԱՆԽ-երի բերված տրամագիծը և կոնցենտրացիան ցեմենտի զանգվածի նկատմամբ, ընդունելով 500 կգ 1 սՔ բետոնում)

Նմուշի անվանում	Տրամագիծ, նմ	Կոնցենտրացիա, %	Նմուշի անվանում	Տրամագիծ, նմ	Կոնցենտրացիա, %
Նմուշ0	-	-	Նմուշ5	33 (20)	0,02 (0,10)
Նմուշ1	25 (10)	0,01 (0,05)	Նմուշ6	40 (30)	0,02 (0,10)
Նմուշ2	33 (20)	0,01 (0,05)	Նմուշ7	25 (10)	0,03 (0,15)
Նմուշ3	40 (30)	0,01 (0,05)	Նմուշ8	33 (20)	0,03 (0,15)
Նմուշ4	25 (10)	0,02 (0,10)	Նմուշ9	40 (30)	0,03 (0,15)

Մոդելավորած նյութերի առանցքային սեղմումը նանոմասշտաբում

Նանոմասշտաբում ԲԱՆԽ-երի կոնցենտրացիայի և արտաքին տրամագծի փոփոխության ազդեցությունը բետոնի լարվածադեֆորմատիվ վիճակի վրա հետազոտելու համար մոդելավորած 9 խորանարդային նյութերը պայմանական $P = 1000$ ՄՊա հաստատուն ճնշման տակ ենթարկվել են սեղմման ազդեցության (նկ. 2): Նման մոտեցումը թույլ է տալիս համեմատաբար փոքրաչափ նմուշներում ապահովել բավարար լարվածադեֆորմատիվ դաշտ՝ նյութում նկատելի դարձնելով դեֆորմացիաների և լարումների փոփոխությունը: Ընտրված ճնշման արժեքից զգալի շեղումները՝ թե մեծացման և թե նվազեցման դեպքում, կարող են հանգեցնել, համապատասխանաբար, ոչ տեսանելի կառուցվածքային փոփոխությունների կամ սխալ արդյունքների: Հաշվարկների համար խորանարդ նմուշների հենարանային պայմաններն ընդունվել են անշարժ (նկ. 2): Այս կերպ ապահովվել է լարվածադեֆորմատիվ վիճակի սիմետրիկ մոդելավորում, ինչը նպաստում է բետոնի մեխանիկական վարքագծի առավել հուսալի համեմատական վերլուծությանը:



*Նկ. 2. Մոդելավորված նյութերը սեղմման ազդեցության տակ P ճնշմամբ.
ա - առանձնացված բետոնի մատրից, բ - առանձնացված ածխածնային թելքերի մատրից*

Արդյունքներ և քննարկում

Սույն բաժնում ներկայացված են “ANSYS” թվային հաշվարկային ծրագրով ՎՏՄ-ի կիրառմամբ ՆՕՏ-ում մոդելավորված, տարբեր բերված կոնցենտրացիաներով (0,05 %, 0,10 % և 0,15 % ցեմենտի բերված զանգվածի նկատմամբ) և արտաքին տրամագծերով (10 մմ, 20 մմ և 30 մմ) ԲԱՆԽ-երով B25 դասին համապատասխանող բետոնե խորանարդ նմուշների առաձգականության մոդուլների որոշումը, լարվածային վիճակի վերլուծությունը և դրանց ստացված արդյունքները:

Աղ. 2-ում ներկայացված են նանոմասշտաբում “Material Designer” ենթածրագրի միջոցով ՆՕՏ-ում մոդելավորված թվային հաշվարկված 9 տեսակ խորանարդաձև նմուշ-նյութերի առաձգականության մոդուլները երեք գլխավոր ուղղություններով՝ ԲԱՆԽ-երի տարբեր բերված կոնցենտրացիաների (ըստ ցեմենտի զանգվածի) և արտաքին տրամագծերի դեպքում: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ԲԱՆԽ-երի կոնցենտրացիայի աճին զուգահեռ բարելավվում են բաղադրանյութի կոշտության բնութագրերը բոլոր երեք ուղղություններով, մինչդեռ նանոխողովակների չափերի փոփոխությունն էական ազդեցություն չի թողնում:

Նմուշների լարվածային վիճակը դիտարկվել է միայն առանցքային սեղմման ազդեցությունից՝ միևնույն սեղմող ճնշումից: Սեղմման դեպքում բետոնի նորմալ լարումների գնահատման համար փորձարկվող նմուշները բաժանվել են ըստ բարձրության հավասար երկու մասի՝ լայնական հատույթներով: Լարումների վերլուծությունը կատարվել է հատույթի անկյունային և միջնամասային հատվածների համար: Բոլոր նմուշների վերլուծությունը կատարվել է, դիտարկելով միայն բետոնային մատրիցը նանոխողովակներից առանձնացված, ելնելով այն դիտարկումից, որ նյութի հնարավոր քայքայումը տեղի է ունենում առավել փոքր կոշտություն ունեցող նյութում՝ վերջինիս լարումների բեռնաթափումը և վերաբաշխումը հետագոտելու նպատակով: Նմուշ 0 -ի և ԲԱՆԽ-երով B25 դասի նանոբետոնե խորանարդ 1-9 նմուշների ՎՏՄ -ով սեղմման դեպքում լարվածային վիճակի թվային վերլուծության արդյունքները ներկայացված են նկ. 3-5 -ում:



ա)







բ)

**Նկ. 3. Նմուշ0-ի լարվածային վիճակի վերլուծությունը սեղմման դեպքում.
ա-նորմալ լարումները լայնական հատույթի միջին հատվածում,
բ-նորմալ լարումները լայնական հատույթի եզրային անկյունում**

Աղյուսակ 2

ԲԱՆԻ-երի տարբեր բերված կոնցենտրացիաների և արտաքին տրամագծերի դեպքում մոդելավորված խորանարդ նմուշների առաձգականության մոդուլները երեք գլխավոր ուղղություններով (E , ՄՊա)

Կոնցենտրացիա, %	Արտաքին տրամագիծ, նմ		
	10 (25*)	20 (33*)	30 (40*)
0,05 (0,01*)	 $E_1=30,30, E_2=30,29, E_3=30,30$	 $E_1=30,31, E_2=30,30, E_3=30,31$	 $E_1=30,27, E_2=30,25, E_3=30,26$
0,10 (0,02*)	 $E_1=30,57, E_2=30,55, E_3=30,56$	 $E_1=30,54, E_2=30,58, E_3=30,54$	 $E_1=30,55, E_2=30,65, E_3=30,59$
0,15 (0,03*)	 $E_1=30,78, E_2=30,51, E_3=30,76$	 $E_1=30,82, E_2=30,79, E_3=30,76$	 $E_1=30,76, E_2=30,88, E_3=30,72$
* Փակագծերում նշված արժեքները “Ansys” ծրագրում մոդելավորված ածխածնային թելքերի կոնցենտրացիաներն (ըստ նմուշի զանգվածի) ու արտաքին տրամագծերն են, իսկ առանց փակագծերի՝ ԲԱՆԻ-երի բերված կոնցենտրացիան (ցեմենտի զանգվածի նկատմամբ, վերջինս ընդունելով 500 կգ 1մ ³ բետոնի ծավալում) և արտաքին տրամագիծը			



Նմուշ1



Նմուշ2



Նմուշ3



Նմուշ4



Նմուշ5



Նմուշ6



Նմուշ7



Նմուշ8




Նմուշ9

Նկ. 4. Խորանարդ նմուշ (1- 9) -ի ($\approx 1550 \times 1550 \times 1550$ նմ) նորմալ լարումները լայնական հատույթի միջին հատվածում և անկյունում՝ ԲԱՆԽ-երի ցեմենտի զանգվածի նկատմամբ տարբեր բերված կոնցենտրացիաների և արտաքին տրամագծի դեպքում

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ միևնույն սեղմման ուժի ազդեցության տակ նմուշների լայնական հատույթի միջին հատվածում լարումներն առավելապես փոքրացել են համեմատաբար փոքր տրամագծի (10 նմ) ԲԱՆԽ-երի կիրառմամբ, ինչի արդյունքում էլ ԲԱՆԽ-երի 0,05 %, 0,10 % և 0,15 % կոնցենտրացիայի պարագայում նորմալ լարումը բետոնում փոքրացել է, համապատասխանաբար, 1,93, %, 4,39, % և 6,25 %: Լայնական հատույթի անկյունային հատվածներում ամենափոքր լարումները ստացվում են ԲԱՆԽ-երի միջին չափի տրամագծի (20 նմ) ԲԱՆԽ-երի կիրառմամբ, որի արդյունքում ԲԱՆԽ-երի 0,05 %, 0,10 % և 0,15 % կոնցենտրացիայի

դեպքում նորմալ լարումը բետոնում փոքրացել է, համապատասխանաբար, 5,62%, 6,79% և 19,46%: Այստեղ 10 և 30 նմ արտաքին տրամագծի դեպքում լարումները բետոնում ավելի մեծ են, համեմատած 20 նմ-ի հետ: Առաջինում մասնիկների խիտ դասավորությունը բերում է անկյունային հատվածների կոշտության աճին, առավել նկատելի դարձնելով լարումների կենտրոնացումը: Իսկ երկրորդ դեպքում ԲԱՆԽ-երի նոսր դասավորմամբ հատվածքի անկյունները բավարար կերպով չեն ամրանավորվում նանոմասնիկներով, ուստի լարումները կտրուկ կերպով մոտենում են 0-ական նմուշի համապատասխան արժեքին:



Նկ. 5. Խորանարդ նմուշ (1-9)-ի լայնական հատությունում նորմալ լարումները ԲԱՆԽ-երի 10, 20, 30 նմ արտաքին տրամագծի և 0,05, 0,10 և 0,15 % կոնցենտրացիայի դեպքում. ա - լայնական հատվածի միջին հատվածում, բ - լայնական հատվածի անկյուններում

Ստացվածից կարելի է եզրակացնել, որ ցեմենտային կոմպոզիտներում ԱՆԽ-երի միևնույն կոնցենտրացիայի և համեմատաբար փոքր տրամագծի պարագայում բետոնե մատրիցում նորմալ լարումները համեմատականորեն փոքրանում են: Թեև առանցքային սեղմման դեպքում նյութի մեխանիկական հատկությունների լիարժեք հետազոտում իրականացնելու համար բացի նորմալ լարումներից կարևոր դեր ունեն նաև ազդող ուժին ուղղահայաց ուղղությամբ զարգացող դեֆորմացիաների գնահատումը, բետոնային մատրիցում միևնույն ուժի ազդման պարագայում, վերջինիս ուղղությամբ գործող նորմալ լարումների նվազումն էական նշանակություն ունի նյութի սեղմման ամրության բարելավման համար, հաշվի առնելով նմուշում ներքին բարդ լարվածային վիճակի առկայությունն առանցքային սեղմման դեպքում [21]:

Ընդհանուր առմամբ, ստացված արդյունքները հաստատում են ԲԱՆԽ-երով նանոշաղախների և նանոբետոնների սեղմման ամրության փորձարական հետազոտության ստացված արդյունքները [13, 14]: Թեև փոքր տրամագծի ԱՆԽ-երը տեխնոլոգիապես ավելի դժվար են դիսպերսվում կապակցանյութում, դրանք առավել համասեռ են բաշխվում խառնուրդում և լցնում նանո- և

միկրոմասշտաբային դատարկությունները, որի շնորհիվ լարումներն ավելի հավասարաչափ են բաշխվում ցեմենտային մատրիցում [22, 23]:

Թվային վերլուծության մեջ նմուշների մեխանիկական հատկությունների բարելավումը ԲԱՆԽ-երի կոնցենտրացիայի աճին զուգահեռ, պայմանավորված է նաև մասնիկների դիսպերսման և ագլոմերացիայի փաստացի բացակայությամբ, քանի որ վերջինս առաջանում է միայն իրական-փորձարարական տեխնոլոգիական գործընթացի դեպքում [15]: Այստեղ մեխանիկական առավել բարձր հատկություններ ունեցող հավելանյութի կոնցենտրացիայի աճն ուղղակիորեն բերում է նյութի կրողունակության բարելավմանը: Փորձարարական հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ աճը տեղի է ունենում ոչ անընդհատ, որոշ սահմանից հետո սկսում է նվազել՝ ելնելով վերոնշյալ խնդիրներից [13, 15]:

Կարելի է եզրակացնել, որ ԲԱՆԽ-երի միևնույն կոնցենտրացիայի և փոքր արտաքին տրամագծի դեպքում բետոնի լարվածային վիճակը բարելավվում է, պայմանավորված նանոմասնիկների համասեռ ցրմամբ և լարումների առավել արդյունավետ վերաբաշխմամբ նյութի ծավալում: Ստացվածը կարող է նպաստել ցեմենտային կապակցանյութով նանոբետոնե խորանարդ նմուշների հետագա մակրոմասշտաբային հետազոտությունների շարունակությանը, հաշվի առնելով բետոնի ֆիզիկական ոչ գծայնությունը:

Եզրակացություն

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ միևնույն սեղմման ուժի ազդեցության տակ նանոաձխածնային խորանարդ նմուշների լայնական հատույթի միջին հատվածում լարումներն առավելապես փոքրացել են համեմատաբար փոքր տրամագծի (10 նմ) ԲԱՆԽ-երի կիրառմամբ, ինչի արդյունքում էլ ԲԱՆԽ-երի 0,05 %, 0,10 % և 0,15 % կոնցենտրացիայի պարագայում նորմալ լարումը բետոնում փոքրացել է, համապատասխանաբար, 1,93 %, 4,39 % և 6,25 %:

Լայնական հատույթի անկյունային հատվածներում ամենափոքր լարումները ստացվում են միջին չափի տրամագծի (20 նմ) ԲԱՆԽ-երի կիրառմամբ, որի արդյունքում ԲԱՆԽ-երի 0,05 %, 0,10 % և 0,15 % կոնցենտրացիայի դեպքում նորմալ լարումը բետոնում փոքրացել է, համապատասխանաբար, 5,62 %, 6,79 % և 19,46 %:

ԲԱՆԽ-երի կոնցենտրացիայի աճին զուգահեռ երեք գլխավոր ուղղություններով բարելավվում են բաղադրանյութի կոշտության բնութագրերը, մինչդեռ նանոխողովակների չափերի փոփոխությունն էական ազդեցություն չի թողնում:

Հաշվի առնելով կատարված փորձարարական և թվային հետազոտությունների ստացված արդյունքների համապատասխանությունը՝ կարելի է եզրակացնել, որ ԲԱՆԽ-երի միևնույն կոնցենտրացիայի և փոքր արտաքին տրամագծի դեպքում բետոնի լարվածային վիճակը բարելավվում է, պայմանավորված նանոմասնիկների համասեռ ցրմամբ և նյութի ծավալում լարումների առավել արդյունավետ վերաբաշխմամբ: Այս աշխատանքում կատարված ուսումնասիրությունները կարող են հիմք հանդիսանալ հետագա փորձարարական հետազոտությունների համար՝

խնայելով նյութական ռեսուրսներ և ժամանակ, ինչպես նաև նպաստել նանոշաղախների և նանո-բետոնների մեխանիկական հատկությունների կատարելագործմանը:

Գրականության ցանկ

- [1] **Y. Alvarez, M.I. Prieto, A. Cobo**, Mechanical Properties of Cement Mortars Reinforced with Polypropylene Fibers Subjected to High Temperatures and Different Cooling Regimes. *Buildings* 13 (2023) 1445.
- [2] **Dong-Hee Son, Dongsun Hwangbo, Heongwon Suh, Baek-Il Bae, Sungchul Bae, Chang-Sik Choi**, Mechanical properties of mortar and concrete incorporated with concentrated graphene oxide, functionalized carbon nanotube, nano silica hybrid aqueous solution. *Case Studies in Construction Materials* 18 (2023) e01603, <https://doi.org/10.1016/j.cscm.2022.e01603>.
- [3] **M. Yaghobian, G. Whittleston**, A critical review of carbon nanomaterials applied in cementitious composites – A focus on mechanical properties and dispersion techniques. *Alexandria Engineering Journal* 61 (5) (2022) 3417–3433, <https://doi.org/10.1016/j.aej.2021.08.053>.
- [4] **A. Peyvandi, L.A. Sbia, P. Soroushian, K. Sobolev**, Effect of the cementitious paste density on the performance efficiency of carbon nanofiber in concrete nanocomposite, *Constr. Build. Mater.* 48 (2013) 265–269. DOI: 10.1016/j.conbuildmat. 2013.06.094.
- [5] **S. Du, J. Wu, O. Alshareedah, and X. Shi**, Nanotechnology in cement-based materials: A review of durability, modeling, and advanced characterization, *Nanomaterials* 9 (9) (2019) 1213, <https://doi.org/10.3390/nano9091213>.
- [6] **Lai Yin Chan, Bassem Andrawes**, Finite element analysis of carbon nanotube/cement composite with degraded bond strength, *Computational Materials Science* 47 (2010) 995.
- [7] **Z. Yue-Feng, Z. Chan, W. Jing-Dong, S. Lei, L.Ji**, Influence of electric field on dispersion of carbon nanotubes in liquids. *J Disper Sci Technol* 27 (2006) 371–5.
- [8] **M.-F.Yu, O.Lourie, M.J.Dyer, K.Moloni, T.F.Kelly, R.S.Ruoff**, Strength and breaking mechanism of multiwalled carbon nanotubes under tensile load. *Science* 287 (2000) 637–40.
- [9] **X.-L. Xie, Y.-W. Mai, X.-P.Zhou**, Dispersion and alignment of carbon nanotubes in polymer matrix: a review. *Mater Sci Eng R Rep* 49 (2005) 89–112.
- [10] **A. Naqi, N. Abbasb, N. Zahra, A. Hussain, S. Q. Shabbi**, Effect of multi-walled carbon nanotubes (MWCNTs) on the strength development of cementitious materials. *Journal of Material Research and Technology* 8(1) (2019) 1203–1211.
- [11] **A. Cwirzen, K. Habermehl-Cwirzen, V.Penttala**, Surface decoration of carbon nanotubes and mechanical properties of cement/carbon nanotube composites. *Adv Cem Res* 20 (2008) 65–73.
- [12] **S.J. Sujatha, V.R. Ruban Daniel**, Effects of multi-wall carbon nanotubes (MWCNTs) on strength enhancement and microstructural changes in high-performance concrete. *Fullerenes, Nanotubes and Carbon Nanostructures* 33(10) (2025) 1042-1054.
- [13] **S.A. Malumyan, N.G. Muradyan, Y. Melikyan, D. Laroze, M.A. Kalantaryan, A.A. Arzumanyan, M.G. Barseghyan**, Simultaneous Effect of Diameter and Concentration of Multi-Walled Carbon Nanotubes on Mechanical and Electrical Properties of Cement Mortars: With and without Biosilica. *Nanomaterials* 14 (15) (2024) 1271, DOI: <https://doi.org/10.3390/nano14151271>.
- [14] **S. Malumyan, N. Muradyan**, The Effect of Different Multi-Walled Carbon Nanotubes Aspect Ratio on the Compressive Strength of the Cement-Based Concrete, *JAER* 8 (2025) 62-68, DOI: <https://doi.org/10.54338/27382656-2025.8-06>.

- [15] **I.E. Kavadias, K.Tsongas, K.E. Bantilas, M.G. Falara, A.K. Thomoglou, F.I. Gkountakou, A. Elenas**, Mechanical Characterization of MWCNT-Reinforced Cement Paste: Experimental and Multiscale Computational Investigation. *Materials* 16 (2023) 5379.
- [16] **B.S. Sindu, S. Sasmal, S. Gopinath**, A multi-scale approach for evaluating the mechanical characteristics of carbon nanotube incorporated cementitious composites. *Constr. Build. Mater.* 50 (2014) 317–327.
- [17] **V. Šmilauer, P. Hlaváček, P. Padevět**, Micromechanical analysis of cement paste with carbon nanotubes. *Acta Polytech.* 52 (2012) 22–28.
- [18] **M. Eftekhari, S. Mohammadi, M. Khanmohammadi**, A hierarchical nano to macro multiscale analysis of monotonic behavior of concrete columns made of CNT-reinforced cement composite. *Constr. Build. Mater.* 175 (2018) 134–143.
- [19] **V. Papadopoulos, M. Impraimakis**, Multiscale modeling of carbon nanotube reinforced concrete. *Compos. Struct.* 182 (2017) 251–260.
- [20] **C. Talayero, O. Ait-Salem, P. Gallego, A. Páez-Pavón, R.G. Merodio-Perea, I. Lado-Touriño**, Computational Prediction and Experimental Values of Mechanical Properties of Carbon Nanotube Reinforced Cement. *Nanomaterials* 11 (2021) 2997.
- [21] **I. Takamoto, S. Masao, M. Takahiro, N. Hiroshi, T. Masahiro**, Crack mode and life of Ti-6Al-4V under multiaxial low cycle fatigue. *Frattura ed Integrità Strutturale.* 34 (2015) 487-497.
- [22] **Fangfang Gao, Wei Tian, Zhen Wang, Feng Wang**, Effect of diameter of multi-walled carbon nanotubes on mechanical properties and microstructure of the cement-based material. *Construction and Building Materials.* 260 (2020) 1-11.
- [23] **R.K. Abu Al-Rub, A.I. Ashour, B.M. Tyson**, On the aspect ratio effect of multi-walled carbon nanotube reinforcements on the mechanical properties of cementitious nanocomposites. *Construction and Building Materials.* (2012) 647-655.

ЧИСЛЕННОЕ ИССЛЕДОВАНИЕ ВЛИЯНИЯ МНОГОСЛОЙНЫХ УГЛЕРОДНЫХ НАНОТРУБОК НА НАПРЯЖЕННОЕ СОСТОЯНИЕ БЕТОНА

Сурен Ашотович Малумян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
surmalumyan@gmail.com

Введение углеродных нанотрубок (УНТ) в состав бетона и раствора способствует значительному улучшению их механических свойств. Несмотря на то, что экспериментальные методы обеспечивают получение реальных результатов, они требуют значительных материальных затрат и времени. Современные методы численного моделирования позволяют прогнозировать и оптимизировать результаты экспериментальных исследований. С использованием расчетного программного комплекса “ANSYS” и метода конечных элементов были смоделированы материалы в виде кубических образцов с различными концентрациями и внешними диаметрами УНТ. В ходе численного анализа исследовались модули упругости образцов (E_1 , E_2 , E_3) и напряжённое состояние при осевом сжатии. При одинаковом усилии сжатия нормальные напряжения в средней части поперечного сечения бетонной матрицы существенно снижаются по сравнению с контрольными образцами: для УНТ меньшего диаметра — на 6,25%, а в угловых зонах — для трубок среднего диаметра — на 19,46%. Полученные результаты согласуются с экспериментальными данными, подтверждая эффективность применения нанорастворов и нанобетонов на основе цементного вяжущего с УНТ. Проведённые исследования

могут служить основой для последующих экспериментальных работ, позволяя экономить материальные ресурсы и время, а также способствовать совершенствованию механических свойств нанораст-
воров и нанобетонов.

Ключевые слова: углеродные нанотрубки, бетон, метод конечных элементов, сжатие, внешний диаметр

NUMERICAL STUDY OF THE MULTI-WALLED CARBON NANOTUBES EFFECT ON THE STRESS STATE OF CONCRETE

Suren Malumyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
surmalumyan@gmail.com

The incorporation of carbon nanotubes (CNTs) into concrete and mortar contributes to a significant improvement in their mechanical properties. Although experimental methods provide real and reliable results, they require considerable material resources and time. Modern numerical modeling techniques are employed to predict and optimize experimental outcomes. Using the ANSYS computational software and the Finite Element Method (FEM), cube specimens were modeled with various CNT concentrations and outer diameters. The numerical analysis focused on evaluating the elastic moduli of the specimens (E_1 , E_2 , E_3) and their stress distribution under uniaxial compression. Under the same compressive pressure, the normal stresses within the midsection of the concrete matrix significantly decreased compared to the reference specimens — by 6,25 % for smaller-diameter CNTs and by 19,46 % in the corner points for CNTs of medium diameters. The obtained results are in good agreement with experimental findings, confirming the effectiveness of CNT-reinforced cementitious nanomortars and nanoconcretes. The conducted study can serve as a foundation for further experimental research, helping to save material resources and time, as well as enhancing the mechanical performance of CNT-based mortars and concretes.

Keywords: carbon nanotubes, concrete, finite element method, compression, outer diameter

Մալումյան Սուրեն Աշոտի (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, ՄՇՄՖ դեպարտամենտ, ասիստենտ, կրտսեր գիտաշխատող, (+374)95229447, surmalumyan@gmail.com

Малумян Сурен Ашотович (РА, г. Ереван) - НУАСА, Департамент Математики, строительной механики и физики, ассистент, младший научный сотрудник, (+374)95229447, surmalumyan@gmail.com

Malumyan Suren (RA, Yerevan) - NUACA, MBMF department, assistant, junior researcher, (+374)95229447, surmalumyan@gmail.com

Ներկայացվել է՝ 06.10.2025թ.

Գրախոսվել է՝ 03.11.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 22.12.2025թ.

**ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲԱԶԱՆՏԵ ԹԵԼԻԿՆԵՐԻ ԶԱՓԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ
ՈՐՈՇՈՒՄՆ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐՈՒՄ**

Խաչիկ Միմոնի Զքոլյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

xachik.chqolyan@mail.ru

Ասֆալտբետոնե խառնուրդները ճանապարհաշինության հիմնարար բաղադրիչներն են, որոնց ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշիչ նշանակություն ունեն ճանապարհա-ծածկերի ամրության, երկարակեցության և շահագործման ընթացքում բեռնվածությունը դիմա-կայելու կարողության համար: Վերջին տարիներին բազալտե մանրաթելերի ներառումն ասֆալտ-բետոնե խառնուրդների կառուցվածքում դիտվում է որպես արդյունավետ ուղղություն՝ նպաստակ ունենալով բարձրացնել դրանց մեխանիկական և ճաքակայուն հատկությունները: Ներկայաց-ված հետազոտությունը հիմնված է Հայաստանի Հանրապետության տարածքում առկա բնական բազալտային հուվքի վրա, որն օգտագործվել է տեղական պայմաններում մանրաթելերի ստաց-ման և խառնուրդների պատրաստման ողջ գործընթացում: Այդ հանգամանքը նորարարական մոտեցման հիմնական առանձնահատկությունն է՝ հնարավորություն ընձեռելով կիրառել տեղա-կան ռեսուրսները բարձր արժեք ունեցող շինարարական նյութերի արտադրությունում: Լաբո-րատոր փորձարկումների ընթացքում ուսումնասիրվել են տարբեր երկարությամբ (5 մմ, 10 մմ և 20 մմ) բազալտե մանրաթելերով ասֆալտբետոնե խառնուրդների նմուշներ՝ նպաստակ ունե-նալով պարզել մանրաթելերի օպտիմալ չափերն ու դրանց ազդեցությունը խառնուրդի ամրու-թյան և ճաքակայունության վրա: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ տեղական բազալ-տից ստացված մանրաթելերի ճիշտ չափային ընտրությունը զգալիորեն նպաստում է ասֆալտ-բետոնե խառնուրդների մեխանիկական ցուցանիշների և ճաքակայունության բարելավմանը:

Բանալի բառեր. ասֆալտբետոն, բազալտե թելիկներ, ֆիզիկամեխանիկական հատկու-թյուններ, ճանապարհաշինություն, հավելանյութեր

Ներածություն

Համաշխարհային մակարդակով ճանապարհային ենթակառուցվածքների տեխնիկական վիճակի պահպանման և վերականգնման գործընթացները տարեցտարի դառնում են առավել կարևոր և արդիական, պայմանավորված ճանապարհաշինության ոլորտում առկա մարտահրա-վերներով: Բնակչության թվաքանակի կայուն աճը, տնտեսական առաջընթացը և տրանսպոր-տային հոսքերի մեծացումը վերջին տասնամյակներում նպաստել են ասֆալտբետոնե ծածկով ճանապարհների լայնածավալ և բարդ ցանցի ձևավորմանը: Այս ճանապարհներից շատերն այժմ մոտենում են իրենց շահագործման ժամկետի ավարտին կամ արդեն իսկ գերազանցել են այն՝ հաշվի առնելով այն ծանրաբեռնվածությունը, որին ենթարկվում են ժամանակակից տրա-

նսպորտային միջոցների կողմից: Ճանապարհային ցանցի զարգացման վաղ փուլերում հիմնական շեշտը դրվում էր ճանապարհների կառուցման սկզբնական ծախսերի վրա, մինչդեռ ներկայումս, երբ երթևեկության ծավալներն ու բեռնվածությունն աննախադեպ մակարդակի են հասել, առաջնային նշանակություն են ստացել գոյություն ունեցող ճանապարհային ծածկույթների պահպանման, նորոգման և վերականգնման խնդիրները: Ժամանակին իրականացվող վերականգնողական աշխատանքները կարևոր դեր են խաղում ճանապարհների ընդհանուր ծառայության ժամկետի երկարացման գործում՝ միաժամանակ նվազեցնելով ֆինանսական ծախսերը [1]: Հաշվի առնելով ասֆալտբետոնի լայն կիրառությունը ճանապարհաշինության, շինարարության և այլ ոլորտներում, ինչպես նաև դրա որակի և ամրության բարելավման անհրաժեշտությունը՝ բազմաթիվ գիտնականներ, ինժեներներ և հետազոտողներ ակտիվորեն ներգրավված են ուսումնասիրություններ և փորձեր իրականացնելու գործընթացում: Նրանց հիմնական նպատակն է բացահայտել և մշակել նորարարական հավելանյութեր, որոնք կարող են խառնվել ասֆալտբետոնի հետ՝ բարձրացնելու նյութի ֆիզիկամեխանիկական հատկությունները, որի արդյունքում կերկարացվի ասֆալտբետոնե շերտի շահագործման ժամկետը: Նախորդ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ասֆալտբետոնե խառնուրդների մեջ անհրաժեշտ է ավելացնել տարբեր տեսակի նյութեր, օրինակ՝ մանրաթելեր: Ուսումնասիրություններն իրականացվել են տարբեր ժամանակահատվածներում և տարբեր քաղաքներում, օրինակ՝ Ա. Իբրահիմը, 2009 թ., Հորդանանի քաղաքներում ասֆալտի խառնուրդի նախագծման մեջ որպես հավելանյութ օգտագործել է տարբեր տեսակի մանրաթելեր [2], Ն. Մորովան, 2013 թ., օգտագործելով մանրաթելերը տաք խառնուրդով ասֆալտբետոնում, կարողացել է ստանալ ասֆալտի ամրության աճ՝ 0...2 %-ով [3], կամ Չժենգը, 2014 թ., որը ևս ուսումնասիրել է մանրաթելերի հատկությունները և կիրառել ասֆալտբետոնե խառնուրդի մեջ, ստացել է դրական ցուցանիշներ [4], և այդպիսի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մանրաթելերի կիրառումը կարող է բարելավել ասֆալտի դինամիկ հատկությունները [5]: Այս ուղղությամբ կատարվող աշխատանքները ներառում են ոչ միայն նոր հավելանյութերի մշակում, այլև դրանց կիրառման առավել արդյունավետ տեխնոլոգիաների ստեղծում, որոնք թույլ կտան օպտիմալացնել արտադրական գործընթացները, նվազեցնել ծախսերը և բարձրացնել էկոլոգիական անվտանգությունը: Այս ջանքերն ուղղված են ժամանակակից ճանապարհաշինության պահանջներին համապատասխանող ավելի դիմացկուն, էկոնոմիկայի տեսանկյունից ձեռնտու և բնապահպանական առումով կայուն լուծումներ առաջարկելուն, ինչը կնպաստի ենթակառուցվածքների որակի բարելավմանը և դրանց երկարաժամկետ օգտագործմանը [6]:

Ներկայացված ուսումնասիրությունները նպատակ ունեն գնահատելու Հայաստանի Հանրապետության տարածքում առկա բազալտային հումքի կիրառման արդյունավետությունն ասֆալտբետոնե խառնուրդների արտադրության մեջ՝ ուսումնասիրելով, թե ինչպես է տեղական հումքից ստացված բազալտե մանրաթելերի կառուցվածքային և մեխանիկական ազդեցությունն արտահայտվում երկրի կլիմայական և շահագործման առանձնահատկություններին համապատասխան պայմաններում:

Նյութեր և մեթոդներ

Բազալտե թելիկների հատկությունները և արտադրությունը: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում բազալտե մանրաթելերը դիտարկվել են որպես կոմպոզիտային նյութերի ամրացման միջոց: Բազալտը տարածված հրաբխային ապար է, որը կարելի է գտնել աշխարհի տարբեր հատվածներում: Բազալտե թելիկներն արտադրվում են բնական բազալտի հալեցումից $1300...1700\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում, որին հաջորդում է թելերի ձգումը բարձր արագությամբ պտտվող գլանների միջոցով: Բազալտի քիմիական կազմը ներառում է՝ SiO_2 (45...55 %), Al_2O_3 (15...20 %), Fe_2O_3 (5...15 %), CaO (5...10 %) և այլ օքսիդներ, որոնք ապահովում են բարձր կայունություն [7-9]:

- **Առաձգականություն:** 3000...4000 ՄՊա , 20...30 % ավելի բարձր, քան ապակե թելիկներինը (2500...3000 ՄՊա) և պողպատինը (3500...4500 ՄՊա):
- **Առաձգականության մոդուլ:** 85...100 ԳՊա , ապահովում է կոշտություն, որը կանխում է դեֆորմացիան ծանր բեռների դեպքում:
- **Խտություն:** 2,6...2,8 գ/սմ^3 , 3 անգամ ավելի թեթև, քան պողպատը (7,8 գ/սմ^3), ինչը հեշտացնում է տեղափոխումը և կիրառումը:
- **Ջերմակայունություն:** Դիմակայում է մինչև $700\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի՝ առանց կառուցվածքի փոփոխության, ի տարբերություն սինթետիկ թելիկների, որոնք հալվում են $200...300\text{ }^{\circ}\text{C}$ -ում:
- **Կոռոզիոն կայունություն:** Քիմիապես կայուն է ալկալային ($\text{pH } 12...14$) և թթվային ($\text{pH } 2...4$) միջավայրերում, ի տարբերություն պողպատի, որը ենթակա է ժանգոտման [10-14]:

Նախորդ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բազալտե մանրաթելերի ավելացումը բարձրացնում է ասֆալտբետոնի ճաքակայունությունը և իրենց կատարած հետազոտություններից պարզ է դառնում, որ 0,4 %-ը օպտիմալ չափաբաժինն է ասֆալտբետոնի համար [15]:

Արդյունքներ և քննարկում

Հետազոտությունն իրականացվել է լաբորատոր պայմաններում՝ օգտագործելով վերամշակման գործընթացի միջոցով ստացված աղացած ասֆալտբետոնն նյութ: Լաբորատոր պայմաններում իրականացվել է նյութի հատիկաչափական կազմի որոշում՝ օգտագործելով ստանդարտացված մեթոդներ, որոնք թույլ են տվել ճշգրիտ բնութագրել նմուշի ֆիզիկական հատկությունները (նկ. 1):



Նկ. 1. Աղացած ասֆալտբետոն

Հետազոտության ընթացքում պատրաստվել են չորս նմուշների խմբաքանակ, յուրաքանչյուր խմբում՝ երեք նմուշ, որի ընդհանուր քաշը 5400 գ է: Առաջին խմբաքանակում ավելացվել է նյութի զանգվածի 0,4 % -ի չափով բազալտե թելիկներ 5 մմ երկարությամբ, երկրորդում՝ նույն չափով 10 մմ երկարությամբ, երրորդում՝ նույն չափով 20 մմ երկարությամբ և չորրորդ խմբում միայն ասֆալտբետոն է (նկ. 2):




Նկ. 2. Բազալտե թելիկներ

Բոլոր նմուշներին ավելացվել է չորս՝ նյութի ընդհանուր զանգվածի 2 % -ի չափով, ինչը նպաստել է խառնուրդի միատարրության ապահովմանը և խոնավացման գործընթացին (նկ. 3):




Նկ. 3. Աղացած ասֆալտրետոնը խոնավ վիճակում

Նմուշների պատրաստման համար օգտագործվել են գլանաձև կաղապարներ, որոնց միջոցով ստացվել են 10 սմ բարձրությամբ և 10 սմ տրամագծով նմուշներ: Խառնուրդը մանրակրկիտ խառնվել է՝ բաղադրիչների միասնական և հավասարաչափ բաշխումն ապահովելու համար: Այնուհետև նյութը տեղադրվել է կաղապարներում՝ աստիճանական խտացմամբ, ինչը հաստատել է խոռոչների առաջացումը և նյութի միատեսակ խտությունը (նկ. 4):




Նկ. 4. Կաղապարի չափերը

Խտացման գործընթացը կատարվել է 160 կՆ ճնշման ներքո՝ 3 ր տևողությամբ: Նշված պայմաններն ընտրվել են՝ հաշվի առնելով ճանապարհաշինական նյութերի փորձարկման ստանդարտ պահանջները (նկ. 5):



Նկ. 5. Խտացման գործընթացը

Գլանաձև նմուշները պահպանվել են 7 օր՝ խստորեն կարգավորվող ջերմաստիճանային պայմաններում, ինչը նպաստել է նոր ստացված նյութի կապակցման գործընթացին (նկ. 6):



Նկ. 6. Պատրաստված նմուշներ

Պահպանման ժամկետի ավարտից հետո նմուշները մանրամասնորեն ենթարկվել են ճնշման փորձարկման՝ նյութի ճնշման դիմակայության և ամրության բնութագրերը ճշգրտորեն գնահատելու համար: Նախքան ճնշման փորձարկում կատարելը, յուրաքանչյուր նմուշ, որը պահվել էր խստորեն կարգավորվող հատուկ միջավայրում, մինչև հատուկ սեղմման սարքի մեջ դնելը կշռվել է: Այնուհետև նմուշները տեղադրվել են սեղմման փորձարկման համար նախատեսված սարքի մեջ (նկ. 7):



Նկ. 7. Նմուշի սեղմում

Փորձարկման նպատակով պատրաստվել է ընդհանուր առմամբ տասներկու նմուշ, որոնցից առաջին երեքի կազմում որպես հավելանյութ օգտագործվել են բազալտե 5 մմ երկարությամբ թելիկներ, երկրորդ խմբաքանակում՝ բազալտե 10 մմ երկարությամբ թելիկներ, երրորդ խմբաքանակում՝ բազալտե 20 մմ երկարությամբ թելիկներ, մինչդեռ վերջին երեք նմուշների մեջ չի օգտագործվել ոչ մի հավելանյութ: Փորձարկումների արդյունքները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ

Բազալտե թելիկների ազդեցությունը նմուշների սեղմման ամրության վրա

№	Անվանում	Զանգված, գ	Սեղմման ամրություն, ՄՊա
1	Առանց հավելումների պատրաստված 1-ին նմուշ	1750	1,60
2	Առանց հավելումների պատրաստված 2-րդ նմուշ	1747	1,70
3	Առանց հավելումների պատրաստված 3-րդ նմուշ	1752	1,60
4	Բազալտե 5 մմ երկարությամբ թելիկով պատրաստված 1-ին նմուշ	1725	1,75
5	Բազալտե 5 մմ երկարությամբ թելիկով պատրաստված 2-րդ նմուշ	1730	1,76
6	Բազալտե 5 մմ երկարությամբ թելիկով պատրաստված 3-րդ նմուշ	1728	1,75
7	Բազալտե 10 մմ երկարությամբ թելիկով պատրաստված 1-ին նմուշ	1777	1,79
8	Բազալտե 10 մմ երկարությամբ թելիկով պատրաստված 2-րդ նմուշ	1770	1,77
9	Բազալտե 10 մմ երկարությամբ թելիկով պատրաստված 3-րդ նմուշ	1785	1,79
10	Բազալտե 20 մմ երկարությամբ թելիկով պատրաստված 1-ին նմուշ	1771	1,80
11	Բազալտե 20 մմ երկարությամբ թելիկով պատրաստված 2-րդ նմուշ	1774	1,80
12	Բազալտե 20 մմ երկարությամբ թելիկով պատրաստված 3-րդ նմուշ	1780	1,82

Առանց հավելումների պատրաստված նմուշների սեղմման միջին ամրությունը հավասար է 1,633 ՄՊա, բազալտե 5 մմ երկարությամբ թելիկով պատրաստված նմուշներին՝ 1,753 ՄՊա, բազալտե 10 մմ երկարությամբ թելիկով պատրաստված նմուշներին՝ 1,783 ՄՊա, բազալտե 20 մմ երկարությամբ թելիկով պատրաստված նմուշներին՝ 1,807 ՄՊա:

Տեխնիկական պայմանները և փորձարարական մեթոդներն իրականացված են ըստ Հայաստանի Հանրապետությունում գործող նորմերի՝ ԳՕՍՏ 9128-2013, ԳՕՍՏ 12801-98, ՀՀՇՆ 32-01-2022 և ՇՊ 78.13330.2012:

Նկ. 8-ում ներկայացված է ամրության փոփոխությունը մանրաթելերի երկարության աճին զուգընթաց, ինչպես նաև ներկայացված է տոկոսային փոփոխությունները:



Նկ. 8. Ամրության փոփոխությունն ըստ մանրաթելերի երկարության

Եզրակացություն

Բազալտե թելիկների կիրառումն ասֆալտբետոնե խառնուրդների կազմում ժամանակակից ճանապարհաշինության ոլորտում դիտվում է որպես նորարարական տեխնոլոգիական լուծում, որն էականորեն բարելավում է ճանապարհային ծածկերի ֆիզիկամեխանիկական հատկությունները: Այս մոտեցման առանձնահատկությունն այն է, որ հետազոտության համար օգտագործվել է Հայաստանի Հանրապետության տարածքում առկա բնական բազալտային հումք, որը մշակվել և վերափոխվել է մանրաթելային ձևի՝ տեղական տեխնոլոգիական պայմաններում: Ստացված նյութի կիրառումը նպաստել է ասֆալտբետոնե խառնուրդների սեղմման ամրության և ճաքակայունության բարձրացմանը: Փորձարկումները ցույց են տվել, որ բազալտե թելիկների օգտագործումը, մասնավորապես, 0,4% քանակությամբ և 20 մմ երկարությամբ, ապահովում է ասֆալտբետոնե խառնուրդի օպտիմալ բաղադրություն: Այս պարամետրերը հնարավորություն են ընձեռում հասնել նյութի առավելագույն արդյունավետության՝ համատեղելով բարձր ամրությունն ու երկարակեցությունը: Այս արդյունքներն առանձնահատուկ կարևորություն ունեն Հայաստանի Հանրապետության ճանապարհաշինության ոլորտի համար, որտեղ ճանապարհա-

յին ենթակառուցվածքների որակը և դիմացկունությունը կարևոր դեր են խաղում երկրի և սոցիալատնտեսական զարգացման գործում: Բազալտե թելիկներով ամրացված ասֆալտբետոնե ծածկերը թույլ են տալիս ստեղծել ճանապարհներ, որոնք ունակ են դիմակայելու էլ ավելի մեծ բեռնվածքների:

Գրականության ցանկ

- [1] **Հ. Հ. Գյուլզադյան, Ա.Ս. Ղազարյան**, Ասֆալտբետոնային ծածկերի վերաօգտագործման տեխնոլոգիայի կիրառության միջազգային փորձի վերլուծություն, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ III (66) (2017) 32-39:
- [2] **A. Ibrahim, S. Faisal, N. Jamil**, Use of basalt in asphalt concrete mixes. Construction and Building Materials 23(1) (2009) 498-506.
- [3] **N. Morova**, Investigation of usability of basalt fibers in hot mix asphalt concrete. Construction and Building Materials 47 (2013) 175-180.
- [4] **Y. Zheng, Y. Cai, G. Zhang, H. Fang**, Fatigue property of basalt fiber-modified asphalt mixture under complicated environment. Journal of Wuhan University of Technology-Mater. Sci. Ed. 29(5) (2014) 996-1004.
- [5] **M. Arabani**, Effect of glass cullet on the improvement of the dynamic behaviour of asphalt concrete. Construction and Building Materials 25(3) (2011) 1181-1185.
- [6] **Հ.Հ. Գյուլզադյան, Խ.Ս. Չքոյան**, Ճանապարհային պատվածքների ամրող խորությամբ վերաօգտագործելու փորձի վերլուծություն, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ I (82) (2022) 31-40:
- [7] **Q. Liu, M.T. Shaw, R.S. Parnas**, Investigation of Basalt Fiber Composite Mechanical Properties for Applications in Transportation, Polym. Compos. 27 (2006) 41-48.
- [8] **T. Czigány**, Discontinuous Basalt Fiber-reinforced Hybrid Polymer Composites, in: K. Friedrich (Ed.), Polymer Composites: from Nano to Macro-scale, Springer Verlag, München, Germany, 2005, pp. 309-328.
- [9] **T. Czigány**, Trends in Fiber Reinforcements – the Future Belongs to Basalt Fiber, Express Polym. Lett. 1 (2) (2007) 59.
- [10] **A. Dorigato, A. Pegoretti**, Fatigue resistance of basalt fibers-reinforced laminates. J Compos Mater 46 (15) (2012) 1773-1785.
- [11] **T. De'ak, T. Czig'any**, Chemical composition and mechanical properties of basalt and glass fibers: A comparison. Text Res J 79 (7) (2009) 645-651.
- [12] **V.V. Gur'ev, E.I. Neproshin, G.E. Mostovoi**, The effect of basalt fiber production technology on mechanical properties of fiber. Glass Ceram 58 (2001) 62-65.
- [13] **V. Dhand, G. Mittal, K.Y. Rhee, S.J. Park, D. Hui**, A short review on basalt fiber reinforced polymer composites. Compos Part B Eng 73 (2015) 166-180.
- [14] **K. Singha**, A short review on basalt fiber. Int J Text Sci 1 (4) (2012) 19-28.
- [15] **Xin Yan, Ronghua Ying, Jian Jin and Yuntai Zhang**, Study on Cracking Resistance of Basalt Fiber-Reinforced Microbond Asphalt Macadam. Advances in Civil Engineering. Volume 2021, Article ID 6647766, 9 pages, <https://doi.org/10.1155/2021/6647766>.

ОПТИМАЛЬНОЕ ОПРЕДЕЛЕНИЕ РАЗМЕРОВ БАЗАЛЬТОВЫХ ВОЛОКОН ДЛЯ АСФАЛЬТОБЕТОННЫХ СМЕСЕЙ В ЛАБОРАТОРНЫХ УСЛОВИЯХ

Хачик Симонович Чколян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
xachik.chqolyan@mail.ru

Асфальтобетонные смеси являются одним из фундаментальных компонентов дорожного строительства, физико-механические свойства которых играют решающую роль в обеспечении прочности, долговечности и способности дорожных покрытий выдерживать эксплуатационные нагрузки. В последние годы включение базальтовых волокон в структуру асфальтобетонных смесей рассматривается как эффективное направление, направленное на повышение их механических и трещиностойких характеристик. Настоящее исследование основано на использовании природного базальтового сырья, имеющегося на территории Республики Армения, которое применялось в процессе получения волокон и приготовления смесей в локальных условиях. Этот фактор представляет собой ключевую особенность инновационного подхода, обеспечивая возможность использования местных ресурсов для производства строительных материалов с высокой добавленной стоимостью. В ходе лабораторных испытаний были исследованы образцы асфальтобетонных смесей с базальтовыми волокнами различной длины (5 мм, 10 мм и 20 мм) с целью определения оптимальных размеров волокон и их влияния на прочностные и трещиностойкие свойства смеси. Полученные результаты показали, что правильный выбор размеров волокон, полученных из местного базальта, значительно способствует улучшению механических показателей и трещиностойкости асфальтобетонных смесей.

Ключевые слова: асфальтобетон, базальтовые волокна, физико-механические свойства, дорожное строительство, добавки

ANALYSIS OPTIMAL DETERMINATION OF THE SIZES OF BASALT FIBERS IN LABORATORY CONDITIONS FOR ASPHALT CONCRETE MIXTURES

Khachik Chkolyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
xachik.chqolyan@mail.ru

Asphalt concrete mixtures represent one of the fundamental components of road construction, with their physicomachanical properties playing a decisive role in determining the strength, durability, and load-bearing capacity of pavements during operation. In recent years, the incorporation of basalt fibers into the structure of asphalt concrete mixtures has been recognized as an effective approach aimed at enhancing their mechanical and crack-resistant properties. The present study is based on the use of natural basalt raw materials available within the territory of the Republic of Armenia, which were utilized throughout the entire process of fiber production and mixture preparation under local conditions. This aspect represents the main feature of the innovative approach, enabling the application of local resources in the production of high-value construction materials. During laboratory testing, asphalt concrete mixture samples containing basalt fibers of various lengths (5 mm, 10 mm, and 20 mm) were examined to determine the optimal fiber

dimensions and their influence on the strength and crack resistance of the mixtures. The results revealed that the proper dimensional selection of fibers derived from local basalt significantly contributes to the improvement of the mechanical performance and crack resistance of asphalt concrete mixtures.

Keywords: asphalt concrete, basalt fibers, physicommechanical properties, road construction, additives

Չրոլյան Խաչիկ Միմոնի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Ճանապարհների և կամուրջների ամբիոն, ասպիրանտ, «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Чколян Хачик Симонович (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Дорог и мостов, аспирант, ООО «ХАЛДИ Консалт», (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Chkolyan Khachik (RA, Yerevan) – NUACA, Chair of Roads and Bridges, PhD student, HALDI Consult LLC, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Ներկայացվել է՝ 25.09.2025թ.

Գրախոսվել է՝ 08.10.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 22.12.2025թ.

**ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԽԱՌՆՈՒՐՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԲԱԶԱԼՏԵ ԹԵԼԻԿՆԵՐԻ
ԵՎ ՑԵՄԵՆՏԻ ՀԱՎԵԼՈՒՄՈՎ**

Խաչիկ Միմոնի Չքոլյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

xachik.chqolyan@mail.ru

Հետազոտական աշխատանքում ներկայացվում է բազալտե թելիկների և ցեմենտի համակցված ազդեցությունն ասֆալտբետոնե խառնուրդների ամրության, ճաքակայունության և ընդհանուր կայունության բնութագրերի վրա՝ լաբորատոր վերահսկվող պայմաններում: Փորձարկումների ընթացքում օգտագործվել են տեղական հումքից ստացված բազալտե թելիկներ, որոնք ստացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում առկա բնական բազալտից: Խառնուրդների պատրաստման ժամանակ ասֆալտբետոնային բաղադրության մեջ ավելացվել են 20 մմ երկարությամբ և 0,4 % չափաբաժնով բազալտե թելիկներ, ինչպես նաև 4 % ցեմենտ: Այս մոտեցումը ոչ միայն հնարավորություն է տալիս կիրառել տեղական ռեսուրսները՝ բարձր արժեք ունեցող շինարարական նյութերի արտադրության մեջ, այլ նաև ապահովում է ասֆալտբետոնե խառնուրդների ֆիզիկամեխանիկական ցուցանիշների նկատելի բարելավում: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ տեղական բազալտից ստացված թելիկների և ցեմենտի համատեղ կիրառումը զգալիորեն ուժեղացնում է խառնուրդի ամրությունն ու ճաքակայունությունը՝ ապահովելով բարձր դիմադրություն և երկարաժամկետ կայունություն ճանապարհային ծածկերի շահագործման ընթացքում:

Բանալի բառեր. ասֆալտբետոն, բազալտե թելիկներ, ցեմենտ, ֆիզիկամեխանիկական հատկություններ, հավելանյութեր

Ներածություն

Ժամանակակից ճանապարհաշինության ոլորտում, որտեղ երթևեկության ծանրաբեռնվածության և բնապահպանական պահանջների մակարդակն անընդհատ աճում է, հետազոտողները և մասնագետները ձգտում են գտնել նորարարական, ծախսարդյունավետ և էկոլոգիապես կայուն նյութեր, որոնք կարող են բավարարել այդ խիստ պայմանները: Այդպիսի նյութերից մեկը, որն առանձնանում է իր յուրահատուկ հատկություններով, բազալտե մանրաթելն է, որն աստիճանաբար դառնում է ճանապարհաշինության մեջ կիրառվող կարևոր բաղադրիչ: Բազալտե մանրաթելն առանձնանում է իր բարձր մեխանիկական ամրությամբ, որը թույլ է տալիս դիմակայել մեծ բեռնվածություններին, ցածր ջրակլանմամբ, ինչը նվազեցնում է խոնավության հետևանքով առաջացող վնասները, և կայուն քիմիական հատկություններով, որոնք ապահովում են երկարաժամկետ դիմացկունություն [1]:

Այս նյութը կարևոր դեր է խաղում բիտումի ներթափանցման կանխարգելման գործում, ինչը հատկապես կարևոր է այն ասֆալտային խառնուրդների համար, որոնք պարունակում են բարձր բիտումային բաղադրիչներ: Բիտումի ներթափանցման կանխարգելումը նպաստում է ճանապարհային ծածկույթի ամրության և կայունության բարձրացմանը [2]: Բացի այդ, բազալտե մանրաթելի ավելացումը մեծապես բարձրացնում է ասֆալտային խառնուրդների մածուցիկությունը, ինչը նպաստում է նյութի ռելոգիական հատկությունների բարելավմանը: Այս բարելավումը հանգեցնում է ճանապարհային ծածկույթի ավելի լավ դիմադրության մշտական դեֆորմացիաներին, ինչպիսիք են ճանապարհի մակերևույթի խորքային փոփոխությունները կամ ճաքերի առաջացումը: Հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ բազալտե մանրաթելով ամրացված ասֆալտային խառնուրդներն ունեն բարձր դիմադրություն ճաքերի նկատմամբ, ինչն էական նշանակություն ունի ճանապարհի երկարաժամկետ կայունության և ամրության ապահովման համար [3]:

Բացի վերոնշյալ առավելություններից, բազալտե մանրաթելն ապահովում է նաև ջերմային կայունություն, ինչը նշանակում է, որ այն կարող է դիմակայել ջերմաստիճանային ծայրահեղ տատանումներին առանց կառուցվածքային վնասների: Դրա ցածր ջերմային ընդարձակման գործակիցը նվազեցնում է ջերմաստիճանային փոփոխությունների հետևանքով առաջացող ճանապարհային ծածկույթի վնասումը, օրինակ՝ ճաքերի կամ դեֆորմացիաների ձևով [4]: Այս հատկությունները բազալտե մանրաթելը դարձնում են իդեալական նյութ ճանապարհաշինության համար, հատկապես այնպիսի տարածաշրջաններում, որտեղ ջերմաստիճանային տատանումները մեծ են:

Բազալտե մանրաթելի օգտագործումը ոչ միայն բարելավում է ճանապարհների որակը, այլև նպաստում է ծախսերի օպտիմալացմանը՝ նվազեցնելով պահպանման և վերանորոգման ծախսերը, ինչպես նաև խթանում է բնապահպանական կայունությունը՝ համապատասխանեցնելով ճանապարհաշինությունը ժամանակակից էկոլոգիական պահանջներին [5]:

Նյութեր և մեթոդներ

Բազալտե թելիկների հատկությունները և արտադրությունը

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում բազալտե մանրաթելերը դիտարկվել են որպես կոմպոզիտային նյութերի ամրացման միջոց: Բազալտը տարածված հրաբխային ապար է, որը կարելի է գտնել աշխարհի տարբեր մասերում: Բազալտե թելիկներն արտադրվում են բնական բազալտի հալեցումից 1300...1700 °C ջերմաստիճանում, որին հաջորդում է թելերի ձգումը բարձր արագությամբ պտտվող զլանների միջոցով: Բազալտի քիմիական կազմը ներառում է՝ SiO_2 (45...55 %), Al_2O_3 (15...20 %), Fe_2O_3 (5...15%), CaO (5...10 %) և այլ օքսիդներ, որոնք ապահովում են բարձր կայունություն [6-8]:

- **Առաձգականություն:** 3000...4000 $U\%$, 20...30 % ավելի բարձր, քան ապակե թելիկներինը (2500...3000 $U\%$) և պողպատինը (3500...4500 $U\%$):

- **Առաձգականության մոդուլ:** 85...100 *ԳՊա*, ապահովում է կոշտություն, որը կանխում է դեֆորմացիան ծանր բեռների դեպքում:
- **Խտություն:** 2,6...2,8 *գ/սմ³*, 3 անգամ ավելի թեթև, քան պողպատը (7,8 *գ/սմ³*), ինչը հեշտացնում է տեղափոխումը և կիրառումը:
- **Ջերմակայունություն:** Դիմակայում է մինչև 700 °C ջերմաստիճանի՝ առանց կառուցվածքի փոփոխության, ի տարբերություն սինթետիկ թելիկների, որոնք հալվում են 200...300 °C-ում:
- **Կոռոզիոն կայունություն:** Քիմիապես կայուն է ալկալային (*pH* 12...14) և թթվային (*pH* 2...4) միջավայրերում, ի տարբերություն պողպատի, որը ենթակա է ժանգոտման [9-12]:

Հետազոտությունները ցույց են տվել, որ բազալտե մանրաթելերի կիրառումը զգալիորեն բարձրացնում է ասֆալտբետոնե խառնուրդների ճաքակայունության մակարդակը և ընդհանուր ամրությունը: Իրականացված գիտական փորձերի և վերլուծությունների արդյունքները բացահայտում են, որ 0,4 % չափաբաժինը համարվում է ամենահարմար և օպտիմալ քանակություն ասֆալտբետոնե խառնուրդների համար՝ ապահովելու առավելագույն արդյունավետություն և կայունություն [13-15]:

Ցեմենտ

Ցեմենտը (սովորաբար Պորտլանդ ցեմենտ) օգտագործվում է FDR-ում որպես կապակցող նյութ՝ բարձրացնելով խառնուրդի կոշտությունն ու կրողունակությունը: Ցեմենտի քիմիական կազմը ներառում է *CaO* (60...65 %), *SiO₂* (20...25 %), *Al₂O₃* (5...7 %) և *Fe₂O₃* (2...4 %):

- o Սեղմման ամրություն՝ 5...10 *ՄՊա*:
- o Կոշտություն՝ 10...15 *ԳՊա* [16]:

Արդյունքներ և քննարկում

Հետազոտությունն իրականացվել է լաբորատոր պայմաններում՝ օգտագործելով վերամշակման գործընթացի միջոցով ստացված և աղացած ասֆալտբետոնե նյութ: Այս նյութը ծառայել է որպես հիմնական բաղադրիչ, որի վրա կատարվել են փոփոխություններ՝ տարբեր հավելանյութերի ներմուծմամբ (նկ. 1):



Նկ. 1. Աղացած ասֆալտբետոն

Նյութի ընդհանուր զանգվածի 4 % -ի չափով ավելացվել է ցեմենտ՝ նպատակ ունենալով բարձրացնել նյութի կապակցող հատկությունները և ամրությունը:

Հետազոտության ընթացքում պատրաստվել են երկու տեսակի նմուշներ: Առաջին խմբում (երեք նմուշ, որի ընդհանուր քաշը 5400 գ է) (նկ. 2) նյութի զանգվածի 0,4 % -ի չափով 20 մմ երկարությամբ ավելացվել են բազալտե թելիկներ (նկ. 3):



Նկ. 2. Աղացած ասֆալտբետոն ցեմենտով




Նկ. 3. Բազալտե թելիկներ

Երկրորդ խմբի երեք նմուշներում օգտագործվել է միայն ցեմենտ՝ առանց բազալտե թելիկների: Բոլոր նմուշներին ավելացվել է ջուր՝ նյութի ընդհանուր զանգվածի 2 % -ի չափով, ինչը նպաստել է խառնուրդի միատարրության ապահովմանը և խոնավացման գործընթացին (նկ. 4):



Նկ. 4. Աղացած ասֆալտբետոնի մեջ ցեմենտի և բազալտե թելիկների խառնում և ջրում

Նմուշների պատրաստման համար օգտագործվել են գլանաձև կաղապարներ, ինչի արդյունքում ստացվել են 10 սմ բարձրությամբ և 10 սմ տրամագծով նմուշներ: Խառնուրդը մանրակրկիտ խառնվել է՝ ապահովելու բաղադրիչների հավասարաչափ բաշխումը: Այնուհետև նյութը տեղադրվել է կաղապարներում՝ աստիճանաբար խտացնելով, որպեսզի խուսափվի խոռոչների առաջացումը և ապահովվի նյութի միատեսակ խտությունը (նկ. 5):



Նկ. 5. Աղացած ասֆալտրետտոնի խտացման աշխատանքներ

Խտացման գործընթացն իրականացվել է 160 կՆ ճնշման ազդեցությամբ՝ 3 ընթացքով տևողությամբ: Այս պայմաններն ընտրվել են՝ ելնելով ճանապարհաշինական նյութերի ստանդարտ փորձարկման պահանջներից (նկ. 6):



Նկ. 6. Աղացած ասֆալտրետտոնի խտացում

Պատրաստված գլանաձև նմուշները պահպանվել են 7 օր՝ խստորեն վերահսկվող ջերմաստիճանային պայմաններում, ինչը թույլ է տվել ապահովել ցեմենտի կապակցման գործընթացի օպտիմալ ընթացքը (նկ. 7):



Նկ. 7. Լաբորատոր պայմաններում ստացված նմուշ

Պահպանման ժամանակահատվածի ավարտից հետո նմուշները մանրակրկիտ կերպով ենթարկվել են սեղմման փորձարկման՝ նյութի սեղմման դիմացկունության և ամրության հատկությունները ճշգրիտ գնահատելու նպատակով: Նախքան սեղմման փորձարկումն իրականացնելը յուրաքանչյուր նմուշ, որը պահվել էր խստորեն վերահսկվող հատուկ պայմաններում, կշռվել է ճշգրիտ կշեռքի միջոցով՝ տվյալները գրանցելու համար: Այնուհետև նմուշները տեղադրվել են սեղմման փորձարկման համար նախատեսված սարքավորման մեջ (նկ. 8):



Նկ. 8. Նմուշի սեղմում

Փորձարկման նպատակով պատրաստվել է ընդհանուր առմամբ 6 նմուշ, որոնցից երեքի կազմում օգտագործվել են բազալտե թելիկներ և ցեմենտ որպես հավելանյութ, մինչդեռ մյուս երեք նմուշների մեջ որպես հավելանյութ օգտագործվել է միայն ցեմենտ: Փորձարկումների արդյունքները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ

Բազալտե թելիկների և ցեմենտի ազդեցությունը նմուշների սեղմման ամրության վրա

№	Անվանում	Զանգված, գ	Սեղմման ամրություն, ՄՊա
1	Ցեմենտով պատրաստված 1-ին նմուշ	1771	3,50
2	Ցեմենտով պատրաստված 2-րդ նմուշ	1779	3,55
3	Ցեմենտով պատրաստված 3-րդ նմուշ	1767	3,51
4	Ցեմենտով և բազալտե թելիկով պատրաստված 1-ին նմուշ	1780	4,20
5	Ցեմենտով և բազալտե թելիկով պատրաստված 2-րդ նմուշ	1767	4,01
6	Ցեմենտով և բազալտե թելիկով պատրաստված 3-րդ նմուշ	1794	3,99

Ցեմենտով պատրաստված նմուշների սեղմման միջին ամրությունը հավասար է 3,52 ՄՊա, իսկ ցեմենտով և բազալտե թելիկով պատրաստված նմուշների սեղմման միջին ամրությունը՝ 4,09 ՄՊա:

Տեխնիկական պայմանները և փորձարարական մեթոդներն իրականացված են ըստ Հայաստանի Հանրապետությունում գործող նորմերի՝ ԳՕՍՏ 9128-2013, ԳՕՍՏ 12801-98, ՀՀՇՆ 32-01-2022 և СП 78.13330.2012:

Եզրակացություն

Բազալտե թելիկների կիրառումն ասֆալտբետոնե խառնուրդներում էականորեն բարելավում է նյութի ֆիզիկամեխանիկական բնութագրերը՝ ներառյալ սեղմման ամրության բարձրացումը, ճաքակայունության մեծացումը և ընդհանուր դիմացկունության բարելավումը: Իրականացված փորձարկումները հաստատել են, որ 0,4 % բազալտե թելիկների՝ 20 մմ երկարությամբ, և 4 % ցեմենտի համադրումն ասֆալտբետոնի հետ ապահովում է ավելի օպտիմալ արդյունքներ, որի սեղմման միջին ամրությունը հավասար է՝ 4,09 ՄՊա, քան երբ օգտագործվում է միայն 4 % ցեմենտ: Այս համամասնությունները թույլ են տալիս ստանալ առավել արդյունավետ խառնուրդ, որը զգալիորեն գերազանցում է ավանդական ասֆալտբետոնե ծածկույթների ցուցանիշները: Այս արդյունքները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության ճանապարհաշինության ոլորտի համար, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում կառուցել ավելի ամուր, երկարակյաց և ծանրաբեռնված պայմաններին դիմակայող ճանապարհային ծածկույթներ: Նման նյութերի կիրառումը նպաստում է ճանապարհների շահագործման ժամկետի երկարաձգմանը և սպասարկման ծախսերի կրճատմանը՝ ապահովելով տնտեսական և տեխնիկական առավելություններ:

Գրականության ցանկ

- [1] **N. Morova**, Investigation of usability of basalt fibers in hot mix asphalt concrete, *Construction and Building Materials* 47 (2013) 175–180,
- [2] **E.R. Brown, L.A. Cooley**, Designing Stone Matrix Asphalt Mixtures for Rut-Resistant Pavements, National Cooperative Highway Research Program, Washington, DC, USA, Rep. NCHRP 425, 1999.
- [3] **S. Wu, Q. Ye, N. Li**, Investigation of rheological and fatigue properties of asphalt mixtures containing polyester fibers, *Construction and Building Materials* 22(10) (2008) 2111–2115.
- [4] **K. Liu, W.H. Zhang, F. Wang**, Research on Cryogenic Properties of Different Fiber Asphalts and Mixtures, *Advanced Materials Research* 146–147 (2011) 238–242.
- [5] **Z.H. Liu, C.Y. Chen, R.J. Qin, X.T. Zou**, Research to Performance of Basalt Fibre Strengthened SBS Modified Asphalt Mixture, *Advanced Materials Research* 446–449 (2012) 191–195.
- [6] **Q. Liu, M.T. Shaw, R.S. Parnas**, Investigation of Basalt Fiber Composite Mechanical Properties for Applications in Transportation, *Polym. Compos.* 27 (2006) 41–48.
- [7] **T. Czirány**, Discontinuous Basalt Fiber-reinforced Hybrid Polymer Composites, in: K. Friedrich (Ed.), *Polymer Composites: From Nano to Macro-scale*, Springer Verlag, München, Germany, 2005, pp. 309–328.

- [8] **T. Czigány**, Trends in Fiber Reinforcements – the Future Belongs to Basalt Fiber, Express Polym. Lett. 1 (2007) 59.
- [9] **A. Dorigato, A. Pegoretti**, Fatigue resistance of basalt fibers-reinforced laminates. J Compos Mater 46 (15) (2012) 1773-1785.
- [10] **T. De'ak, T. Czig'any**, Chemical composition and mechanical properties of basalt and glass fibers: A comparison. Text Res J 79 (7) (2009) 645–651.
- [11] **V.V. Gur'ev, E.I. Neproshin, G.E. Mostovoi**, The effect of basalt fiber production technology on mechanical properties of fiber. Glass Ceram 58(1-2) (2001) 62-65.
- [12] **V. Dhand, G. Mittal, K.Y. Rhee, S.J. Park, D. Hui**, A short review on basalt fiber reinforced polymer composites. Compos Part B Eng 73 (2015) 166-180.
- [13] **K. Singha**, A short review on basalt fiber. Int J Text Sci 1 (4) (2012) 19-28.
- [14] **Xin Yan, Ronghua Ying, Jian Jin and Yuntai Zhang**, Study on Cracking Resistance of Basalt Fiber-Reinforced Microbond Asphalt Macadam. Advances in Civil Engineering. Volume 2021, Article ID 6647766, 9 pages, <https://doi.org/10.1155/2021/6647766>.
- [15] **Altan Cetin, Burak Evirgen, Asena Karslioglu, Ahmet Tuncan**, The Effect of Basalt Fiber on the Performance of Stone Mastic Asphalt. Periodica Polytechnica Civil Engineering 65(1) (2021) 299-308,
- [16] **S.P. Dunuweera, R.M.G. Rajapakse**, Cement Types, Composition, Uses and Advantages of Nanocement, Environmental Impact on Cement Production, and Possible Solutions. Advances in Materials Science and Engineering (Wiley Online Library), 2018-04-04.

УЛУЧШЕНИЕ АСФАЛЬТОБЕТОННЫХ СМЕСЕЙ ПРИ ДОБАВЛЕНИИ БАЗАЛЬТОВЫХ ВОЛОКОН И ЦЕМЕНТА

Хачик Симонович Чколян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
xachik.chqolyan@mail.ru

В исследовательской работе представлено совместное влияние базальтовых волокон и цемента на показатели прочности, трещиностойкости и общей стабильности асфальтобетонных смесей в контролируемых лабораторных условиях. В ходе экспериментов использовались базальтовые волокна, полученные из местного сырья — природного базальта, добываемого на территории Республики Армения. При приготовлении асфальтобетонных смесей в их состав добавлялись базальтовые волокна длиной 20 мм в количестве 0,4 % и цемент в дозировке 4 %. Такой подход не только способствует эффективному использованию местных ресурсов при производстве строительных материалов с высокой добавленной стоимостью, но и обеспечивает заметное улучшение физико-механических характеристик асфальтобетонных смесей. Полученные результаты показали, что совместное применение цемента и базальтовых волокон местного происхождения значительно повышает прочность и трещиностойкость смеси, обеспечивая высокую долговечность и эксплуатационную устойчивость дорожных покрытий.

Ключевые слова: асфальтобетон, базальтовые волокна, цемент, физико-механические свойства, добавки

IMPROVEMENT OF ASPHALT CONCRETE MIXTURES THROUGH THE ADDITION OF BASALT FIBERS AND CEMENT

Khachik Chkolyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
xachik.chqolyan@mail.ru

The research presents the combined effect of basalt fibers and cement on the strength, crack resistance, and overall stability characteristics of asphalt concrete mixtures under controlled laboratory conditions. During the experiments, basalt fibers derived from locally sourced raw materials—natural basalt found within the territory of the Republic of Armenia—were utilized. In the preparation of the asphalt concrete mixtures, 20-millimeter-long basalt fibers at a dosage of 0,4 % and 4,0 % cement were added to the asphalt composition. This approach not only enables the use of local resources in the production of high-value construction materials but also ensures a significant improvement in the physico-mechanical properties of asphalt concrete mixtures. The obtained results demonstrated that the combined use of locally produced basalt fibers and cement considerably enhances the mixture's strength and crack resistance, ensuring the high durability and long-term stability of road pavements during operation.

Keywords: Asphalt concrete, basalt fibers, cement, physicommechanical properties, additives

Չոկոլյան Խաչիկ Միմոնի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Ճանապարհների և կառուցողների ամբիոն, ասպիրանտ, «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Чколян Хачик Симонович (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Дорог и мостов, аспирант, ООО «ХАЛДИ Консалт», (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Chkolyan Khachik (RA, Yerevan) – NUACA, Chair of Roads and Bridges, PhD student, HALDI Consult LLC, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Ներկայացվել է՝ 25.09.2025թ.

Գրախոսվել է՝ 08.10.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 22.12.2025թ.

ՏԵՂ ԳՅՈՒՂԻ ՄԵԼԻՔԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՏԱՐԲԵՐԱԿ

Դավիթ Սամվելի Նահատակյան^{1,2}, Գոհար Վահեի Նուրբեկյան²,

Արմենուհի Ալբերտի Ալեքսանյան¹

¹Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

²Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն, ք. Գյումրի, ՀՀ

^{*}dnahatakyan@nuaca.am

Հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ իր ուրույն տեղն ունի աշխարհիկ ճարտարապետությունը, որտեղ կարևոր դեր են խաղում ուշ միջնադարյան ամարաթները կամ մելիքական ապարանքները: Հետազոտությունը ներառում է ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղի Մելիք-Բարխուդարի որդի Դավիթ Բեկի մելիքական ապարանքի հատակագծային, ծավալատարածական և կառուցվածքային համեմատական վերլուծություններ: Նշված կառույցի առանձնահատկությունները համեմատվել են Արցախի և Սյունիք նահանգների, նախկին մելիքական նստավայրերում պահպանված, 15-18-րդ դդ. պալատ-ամրոցների հետ: Քննության են առնվել նաև նմանատիպ կառույցների համաչափությունները, ճարտարապետական փոքր ձևերը (բուխարիներ, պատուհաններ, խորշեր, զարդարարական հարդարանքներ): Այս կառույցների պահպանությունն ու վերականգնումը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելն ու ինքնատիպ միջամտություններ իրականացնելը ներկայումս կարևոր հրամայական է, քանի որ դրանք լուռ ապացույց են սյունեցիների բնիկության, ինչպես նաև՝ հայոց ինքնիշխանության ձգտման անկոտրում կամքի: Հետազոտության նպատակն է ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղի Դավիթ Բեկի մելիքական ապարանքի ուսումնասիրությունը, վերլուծությունն ու ամրակայումը, ինչպես նաև դրա մշակութային և պատմական արժեքի վերաարժևորումը: Կատարված համալիր ուսումնասիրությունների արդյունքներով մշակվել են կառույցի վերականգնման և շարունակական վերաարժևորման նպատակային առաջարկներ:

Բանալի բառեր. մելիքական շրջան, ամարաթ, Արցախի և Սյունիքի մելիքություններ, ապարանք, գլխատուն, վերականգման տարբերակ

Ներածություն

Սյունիքի (ներառյալ՝ Արցախը) Մելիքական շրջանը հայոց պատմության հետաքրքիր դրվագներ պարունակող և հայ մարդու անկախության ձգտման կարևոր ուղիներից մեկն է, իսկ այդ շրջանի կոթողներն, ի դեմս ամարաթների և պալատ-ամրոցների, մեր կողմից վերլուծության և պահպանության առանձնահատուկ ուշադրության կարիք ունեն [1]:

«Մելիք» բառը ծագում է արաբերեն malik բառից՝ տեղ, իշխան: «Մելիքություն» բառը ծագում է «մալիք» (արաբ.՝ ملك՝ թագավոր) տիտղոսից: Վերջինս հայկական ժառանգական ազնվական

տիտղոս էր: Արևելյան Մելիքները ներկայացնում էին հայ ազնվականության վերջին մնացորդները [2]:

Հայոց մելիքությունների պատմական ժամանակաշրջանի սկիզբն ընդունված է համարել 16-րդ դ. վերջերը և 17-րդ դ. սկզբները, երբ իր պետականությունը կորցրած հայ ժողովրդի բնօրրանը՝ Հայաստանը, բաժանվեց Թուրքիայի և Իրանի միջև:

1600-ական թթ. Մեֆյան Իրանի շահ Աբբաս I-ը, չվստահելով իր իշխանությանը ենթակա Արևելյան Հայաստանում տնօրինություն անող՝ թուրքական ծագում ունեցող ցեղապետերին, հատուկ հրովարտակով Մելիքական իրավունք շնորհեց ոչնչացված հայ իշխանական տների շառավիղների ներկայացուցիչներին, որոնք դարձան պարսից շահի հուսալի հակառակ ընդդեմ Օսմանյան թուրքերի [3]:

Արևելյան Հայաստանում մելիքությունները 16-18-րդ դարերի ձևավորված իշխանության վարչաձևերից էին: Ամենահայտնի և հզոր կազմավորումներից էին Արցախի և Սյունիքի մելիքությունները: Հայտնի են Գյուլիստանի, Տաթևի, Խաչենի, Ջրաբերդի, Վարանդայի, Ծարի, Սողքի, Քաշաթաղի, Անգեղակոթի, Բեխի մելիքությունները [4]:

Մելիքական ապարանքների ճարտարապետությանն անդրադարձել են հիմնականում երկու հեղինակներ՝ Ն. Պապուխյանը և Ա. Ղուլյանը: Ն. Պապուխյանն իր աշխատության մեջ, անդրադառնալով Սյունիքի ժողովրդական տներին, անդրադարձել է նաև Տեղ գյուղի մելիքական ապարանքին՝ տալով նաև սխեմատիկ չափագրություններ: Ամառաթին ավելի մանրամասն անդրադարձել է Ա. Ղուլյանը՝ տալով նաև վերակազմության տարբերակ: Ավելի համեստ անդրադարձներ կան Հ. Խալփախյանի, Վ. Հարությունյանի և այլոց մոտ: Հոդվածում կատարված են բոլոր նյութերի համալիր վերլուծություններ՝ ներառելով Ն. Պապուխյանի, Ա. Ղուլյանի հետազոտությունները, հավաքագրված արխիվային չափագրությունները, ինչպես նաև տեղում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

Նյութեր և մեթոդներ

Աշխատանքում կիրառվել են ճարտարապետական տիպաբանական համեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդները:

Մելիքական ապարանքի վերականգնման գոյություն ունեցել նախագծերը և առաջարկվող տարբերակը քննվելու են «ԻԿՕՄՕՍ»-ի ընդունված չափանիշներով և «Քարի քայքայումների պատկերագարդ աղյուսակ»-ի մեթոդով [5]:

Տեղ գյուղը գտնվում է Գորիս քաղաքից մոտ 12 կմ դեպի հյուսիս-արևելք՝ Գորիս-Ստեփանակերտ նախկին մայրուղու վրա, ծովի մակարդակից մոտ 1350...1400 մ բարձրության վրա: Մելիքական ապարանքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ գյուղի կենտրոնական մասում, Սուրբ Գևորգ եկեղեցու հյուսիսարևելյան կողմով անցնող ճանապարհների միջև՝ հարավային լանջի վրա [6]:

Ստեփան Օրբելյանի վկայությամբ՝ Տեղ գյուղը հիմնել է Սյունիքի թագուհի Շահանդուխտ II-ը՝ 10-րդ դարում: Մինչ այդ Տեղի տարածքում եղել է քարանձավային բնակատեղի, իսկ ուշ միջնադարում հայտնի է դարձել որպես մելիքանիստ գյուղ [7]:

Ռուսական կայսրության ժամանակաշրջանում Տեղ գյուղն ընդգրկվել է Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի գավառում: Խորհրդային Միության տարիներին այն մասն է կազմել Խորհրդային Հայաստանի Ջանգեզուրի գավառի, իսկ 1930 թ.-ից՝ Գորիսի շրջանին: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, վարչատարածքային նոր բաժանմամբ, 1995 թ.-ից այն մտնում է Սյունիքի մարզի մեջ [8]:

Մելիքական ամարաթի մասին առկա է վիճաբանություն՝ մուտքի բարավորի վրա: Ըստ Դիվան վիճագրության 2-րդ պրակի վերձանության, այն կառուցել է Մելիք-Բարխուդարի որդի Դավիթ Բեկը՝ 1783 թ.: Կառուցման մասին մեկ այլ արձանագրության պատառիկ նույնպես պահպանվել է՝ «*Ի վայելումն շինեցի...*» [8]:

Դավիթ Բեկը Մելիք-Բարխուդարի որդին էր, որը հիշատակվում է որպես ապարանքը կառուցող: Դավիթ Բեկը՝ 1783 թ.-ի մի փաստաթղթում, հայոց ազատամարտի նոր վերելքը գլխավորողների շարքում, հիշատակվում է որպես «Ղափանու Դավիթ մելիք Բարխուտարեան Տեղու»: Մեկ այլ տեղեկությամբ հայտնի է որպես «ազնուազգի և խոհմամիտ Դավիթ Բեկ, որ էլ գլխավոր բնակչաց Տեղոյ յսկիզբն դարուս» [8]:

Դավիթ Բեկ Մելիք-Բարխուդարյանը, 1748 թ. մելիքական աթոռին հաջորդել է հորը, 1783 թ. կառուցել իր նստոց-ապարանքը Տեղ գյուղում և այնտեղ իշխել մինչև հաջորդ դարի սկիզբը:

Տեղ գյուղի մելիքական ապարանքի ճարտարապետության մասին արժեքավոր տեղեկություններ են տալիս Ա. Ղուլյանի [9] և Ն. Պապուխյանի [10] հրատարակված աշխատությունները: Դավիթ Բեկի մելիքական ապարանքը բաղկացած է արևելք-արևմուտք ուղղությամբ մի շարքով դասավորված երկու կից գլխատնից, դրանց երկու կողմի մեկական դահլիճից և շարքի հարավային, բակահայաց ճակատը բռնող միասնական սրահից, որը լայնական պատերով մասնատված և մասամբ փակված է հետագա վերակառուցումների հետևանքով: Ընդհանուր հատակագծում մեկ ուղղանկյան մեջ ամփոփված (արտաքուստ՝ 13,0 x 26,5 մ) այս շինությունները ետնամասով խորացած են լանջի մեջ և, ըստ պահպանված մնացորդների, բակի հետ միասնական, պարսպապատ համակառույց են կազմել [9]:

Տեղի մելիքական ապարանքն իր ճարտարապետական հորինվածքի զույգ քարակերտ-գմբեթավոր գլխատներով, թաղածածկ դահլիճներով, սյունազարդ կամարասրահով ու պարսպափակ ամբողջականությամբ 18-րդ դ. վերջի պալատաշինության հուշարձան է և այդ շրջանից մեզ հասած միակ լավ պահպանված հուշարձանն է Սյունիքում:

Ամարաթի հատակագծային հորինվածքը հասկանալու համար իրականացվել են առկա նմանատիպ կառույցների համեմատական վերլուծություններ: Այս նպատակով հիմնական աղբյուր են ծառայել Ա. Ղուլյանի աշխատությունում ներկայացված Սյունիքի և Արցախի մելիքական ապարանքների հատակագծերը: Ինչպես ցույց են տալիս դիտարկումները՝ խնդրո առարկա

ապարանքին հատակագծով ամենամոտն Ակնաբերդի, Գյուլիստանի և Խնձորեսկի ամարաթներն են: Ի դեպ, նման են նաև ապարանքերի տարածական հորինվածքները: Բոլոր օրինակներում համակառույցները պարփակված են եղել պարսպապատերի մեջ: Բնորոշ է պարագծային կառուցապատումը. շենքերի կիսագետնափոր ու պարսպակից շարքերով կազմվել է ներքին բակը: Ապարանքները հիմնականում եղել են միահարկ, որոշ դեպքերում՝ կրկնահարկ մասերով: Սենյակները լուսավորվում են երդիկներով կամ բակահայաց փոքր պատուհաններով: Համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ապարանքներին բնորոշ են թոնիրներով սրահները: Ակնաբերդի, Գյուլիստանի, Խնձորեսկի ամարաթներում պատերի հաստությունները բավական նման են՝ 0,8 մ, 1,0 մ, և 1,2 մ, ինչպես նաև գլխատների չափերը՝ 6,3x6,7 մ և 7,10x7,15 մ: Տեղի մեղիքական ապարանքը կառուցված է հիմնականում կոպտատաշ քարից, սրբատաշ են միայն մուտքերի և խորշերի եզրաքարերը: Պատերն ունեն 1,1...1,2 մ հաստություն: Ակնաբերդի մեղիքական ապարանքը կառուցված է 0,8 մ հաստությամբ պատերից, որն ըստ ուսումնասիրության՝ ամենաբարակն է, ինչպես նաև այն ունի ամենափոքր գլխատուն-սրահը՝ 6,3 x 6,7 մ:

Արդյունքներ և քննարկում

Տեղ գյուղի մեղիքական ապարանքի և Ակնաբերդի, Խնձորեսկի, Գյուլիստանի մեղիքական ապարանքների և ընդհանրապես պահպանված մեղիքական ապարանքների համեմատական վերլուծության հիման վրա առանձնացվել են հիմնականում երկու հատակագծային սկզբունքներ, որոնցով կառուցվել են դրանք.

1. Գլխատնավոր ապարանքներ՝ ճարտարապետական-հորինվածքային առանցքը քարակերտ գլխատունն է՝ քառակուսի հատակագծով, երդիկավոր, քարաշեն գմբեթաթաղով ծածկված կենտրոնական դահլիճը, որի երկու կողմում դահլիճներն են, իսկ առջևում՝ բակահայաց կամարասրահը, ինչպես, օրինակ, Մոխրաթաղի և Ակնաբերդի մեղիքական ապարանքները:
2. Կրկնահարկ դահլիճով ապարանքների ճարտարապետական-հորինվածքային առանցքն է միահարկ, սյունազարդ, կամարասրահով ու փայտածածկ սենյակաշարը, կից քարաշեն-թաղակապ ծածկերով կրկնահարկ շինությունը, երեսաբաց-ընդունարանով երկհարկանի, թաղածածկ և ճակտոնազարդ դահլիճը, ինչպես օրինակ՝ Խնձորեսկի և Քաշաթաղի մեղիքական ապարանքները:

Ըստ համեմատական վերլուծության՝ նմանատիպ պատկեր առկա է վերոնշյալ ապարանքների ծավալատարածական և կառուցվածքային հորինվածքներում: Ապարանքների կառուցման հիմնական շինանյութը քարն է. Արցախի օրինակներում շարվածքը բացառապես եղել է կոպտատաշ քարից, իսկ Սյունիքում սրբատաշ քարերը հիմնականում օգտագործվել են ճակատապատերի պատասխանատու հատվածներում: Որմնաշարը հիմնականում իրականացվել է կավահողային շաղախով, իսկ միջհարկային ծածկերի, պատշգամբների, աստիճանավանդակների և

այլնի մեջ առատորեն կիրառվել են փայտանյութեր: Պատերի շարվածքն իրականացվել է ժապավենաձև կառուցվածքով հիմնային շարվածքի վրա: Բուն որմնաշարը կատարվել է հայկական ավանդական «Միդիս» շարվածքով: Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքների սրահների տանիքները, ըստ համալիր դիտարկման, ունեցել են որոշակի թեքություններ, սակայն, հեռվից հարթ են ընկալվում, օրինակ՝ Հոռեկավանքի և Մոխրաթաղի ապարանքներում: Գլխավոր սրահները հաճախ բլուրանման են լիցք արվել՝ ինչպես Տոդի և Քաշաթաղի համալիրներում: Բլուրանման ծածկը տրամաբանական է, քանի որ ներքուստ երդիկի առկայություն կա՝ ինչպես հայկական ավանդական բնակելի տներում: Տանիքները ծածկված են եղել հաստ կավային հողաշերտով և բնականոն կերպով առաջացած բուսականությամբ, որոնք ապահովել են ջրա-ջերմամեկուսացում:

Դեկորատիվ հարդարանքի տեսանկյունից մելիքական ապարանքները, ընդհանուր առմամբ, գուսպ են, սակայն, Տեղ գյուղի մելիքական ապարանքն առաջիններից էր, որտեղ նկատվել է ընդհանրացված ձևերով, բավականաչափ գեղեցիկ գույգ խորշերով բուխարին: Ուշագրավ է մեծ վարպետությամբ մշակված հատկապես արևմտյան դահլիճի բուխարին: Կիսաբոլորաձև օջախախորշի բարձր և գծագարդ եզրաքարերն ավարտվում են երկաղեղ-սրագագաթ կամարաքարով, որի հետ մի կտոր քարից կերտված է նաև սաղավարտաձև ոճավորված ծխանցածածկ քարը [9]: Ուշագրավ են նաև պահարանախորշերը, որոնց պարզ կիրառությունը հաճախ գեղարվեստական հնչեղություն է ստացել: Լավագույն օրինակը՝ Գյուլիստանի և Հոռեկավանի ապարանքներն են:


Դիտարկելով Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքների տարածաշինական, հատակագծային, ծավալատարածական և հարդարանքային լուծումները՝ հարց է առաջանում դրանց ակունքների մասին: Արդյոք դրանք տեղական կամ ներմուծված լուծումներ են: Ճիշտ մոտեցում է ցույց տվել Ն. Պապուխյանը՝ մելիքական ապարանքները դիտարկելով հայկական ժողովրդական տների (ավելի տեղին է հայկական ավանդական բնակելի տուն ձևակերպումը) հետ: Համալիր դիտարկումները նույնպես ցույց են տալիս, որ մելիքական ապարանքների հիմնական լուծումների համար հիմք են հանդիսացել հայկական ավանդական բնակելի տներն ու համալիրները: Համեմատական ուսումնասիրությունները վկայում են, որ մելիքական համալիրների համար հիմք են հանդիսացել հայկական ավանդական բնակելի համալիրները, որոնցով հավանաբար շրջապատված է եղել մեր խնդրո առարկա ապարանքը և որոնց մնացորդները մինչ օրս պահպանվել են Տեղ գյուղում:

Օրինակ, պատմական Գուգարք նահանգի Զավախք գավառում պահպանված բազում հայկական ավանդական բնակելի տներ և համալիրներ կան, որտեղ նմանատիպ ճարտարապետական լուծումներ են պահպանվել: Այս կառույցներն ունեն նմանատիպ որմնաշար (միդիս), սակայն, փայտաշեն, հարթ և հազարաշեն տանիքներով: Առկա են մեկ և ավել գլխաներով (օղա/օթյակ), եռաերթիկ գոմերով, նախասրահներով (օդին առաջ/օթյակին առաջ), շվաքներով և այլ սրահներով հագեցած հայկական ավանդական բնակելի համալիրներ, որոնք մինչ օրս տնօրինում են հայ ժառանգները [11]:


Նմանատիպ պատկեր առկա է նաև պատմական Տայք նահանգի գրեթե բոլոր գավառներում պահպանված հայկական ավանդական բնակելի տների և համալիրների ճարտարապետական լուծումներում, սակայն այն տարբերությամբ, որ դրանց այժմ տնօրինում են իրենց կառուցողների կամ ինքնությունն ուրացածները կամ ընդհնարապես կապ չունեցողները: Ավելին, Տայքում պահպանվել է բնակելի տների զարգացումը՝ մեկ հարկանի բնակելի տներից և համալիրներից դեպի կրկնահարկ և եռահարկ անցումը [12]: 17-20-րդ դդ. կրկնահարկ և եռահարկ բնակելի տներ առկա են նաև պատմական Տուրուբերանում, Վասպուրականում և այլուր: Ենթադրվում է, որ այս լուծումն ավելի հին ակունքներ ունի, այսինքն, Սյունիքի և Արցախի մելիքական ապարանքների կրկնահարկությունը, հավանաբար, նույնպես ժառանգված է հայկական ավանդական բնակելի համալիրներից:

Վերակազմության վերլուծություն և առաջարկ

Ն. Պապուխյանի և Ա. Ղուլյանի աշխատությունների, ինչպես նաև իրականացված արխիվային նյութերի ուսումնասիրության հիման վրա պարզ է դառնում, որ Դավիթ Բեկի ամարաթի դահլիճի առջևի կամարակապ նախամուտքն ակնհայտորեն հետագա վերակառուցման արդյունք է և բնորոշ է կրկնահարկ-հարթածածկ ճարտարապետական լուծումներով կառույցներին (նկ. 1): Չնայած այն հանգամանքին, որ Ն. Պապուխյանը նկատել է վերակառուցումների առկայությունը, իր նկարագրության մեջ ապարանքի հնագույն մասը ներկայացնում է «2 քարակերտ գլխատուն, մի թաղակապ սենյակ և մի թաղակապ նախամուտք» [10]: Ըստ նրա՝ համակառույցի մյուս մասերը հետագա հավելումներ են: Ա. Ղուլյանը հիշատակում է այն մասին, որ Ն. Պապուխյանը չի նկատել, որ արևմտյան կողմի դահլիճն արևելյանի ձևերը կրկնող մուտք ունի գլխատնից և պատկանում է ապարանքի նախնական հորինվածքին: Ա. Ղուլյանը նշում է նաև, որ համալիրի նախնական հորինվածքն ունեցել է բակահայաց սյունազարդ հորինվածք և կամարակապ սրահ՝ մեկ միասնական թաղով, որի ապացույցն են երկայնական թաղի մնացորդը և գլխատների ճակատամասում գտնվող խորշերը [9]: Ուսումնասիրված արխիվային նյութերի համաձայն՝ 1984 թ. իրականացվել է վերակառուցման նախագիծ, կազմված Ա. Մանասյանի և Հ. Հովսեփյանի կողմից: Նախագծի համաձայն նախատեսվում էր կատարել բոլոր սենյակների վերականգնում և հարավարևելյան նախասրահի թաղի վերաշարում: Արդյունքում՝ վերակառուցման ժամանակ պահպանվել է երկրորդ հարկի միայն ճակատային մասը: Փայտե 4 սյուների վրա կանգնեցվել է պատշգամբը, որի մուտքը լուծված է բազալտե քարերից շարված աստիճաններով, իսկ սենյակին կից երկու գլխատներ տանող թաղակապ նախասրահը նախատեսվում էր քանդել, վերաշարել: 2022 թ. «Ուրբան» կայուն զարգացման կենտրոնի կողմից իրականացվել է կառույցի ծածկի թիթեղապատ լուծում, որը դրական ժամանակավոր լուծում է, քանի որ կառույցն ուներ խոնավության խնդիրներ (նկ. 1):



Նկ. 1. Տեսական վերլուծությունների արդյունքները



Նկ. 2. Առաջարկվող տեսական վերակազմության տարրերակ

Վերականգնման առաջարկ

Տեղում կատարված ուսումնասիրությունների, նմանօրինակ կառույցների, պատմամատենագրական նյութերի վերլուծության և համադրման հիման վրա առաջարկվում է վերականգնման տարրերակ: Այն մշակվել է Դավիթ Բեկի մելիքական ապարանքի բակահայաց սյունազարդ հորիվածքի և կամարակապ սրահի, թոնիքների, բուխարիների և շվաքի համար: Առաջարկվում է իրականացնել հուշարձանի պահպանական գոտիների նոր առաջարկ, քանի որ առկա գոտիներն իրենց մեջ չեն ներառում ամբողջ հուշարձանը, չունեն լանդշաֆտի և կառուցապատման պահպանման գոտիներ: Ըստ առաջարկի՝ ապարանքը ստանալու է իր սկզբնական տեսքը՝ երկերդիկ գլխատներով: Տանիքը վերականգնվելու է, ինչպես նախկինում՝ հողածածկ և կանաչապատ: Հեռացվելու են խորհրդային շրջանում ի հայտ եկած ավելորդ հավելումները (նկ. 2):

Կառույցի վերաարժևորման առաջարկով նախատեսվում է ստեղծել մեղիքական շրջանի պատմությունը ներկայացնող թանգարան, որը հագեցած կլինի ժամանակակից տեխնոլոգիաներով: Յուրաքանչյուր սենյակ կստանա նոր ֆունկցիա, նոր հնարավորություններ՝ դրանց հնարավորինս բազմազան օգտագործելու համար: Ըստ նախագծի նախատեսվում է իրականացնել գրադարան, թանգարան, ինչպես նաև վերաօգտագործ ավանդական թոնիրները՝ վերածելով ճաշասենյակի, որտեղ կախված կլինեն հայկական գորգեր, ինչը բնորոշ է եղել մեղիքական ապարանքներին: Ամբողջովին պահպանվելու է ապարանքի խորհրդավորությունը՝ ապահովելով լուսավորությունը հիմնականում երդիկներից: Առաջարկվում է հավելել լոկ երկրորդական և երրորդական լուսավորություն՝ այսինքն լուսավորությունը լինելու է խորշերի մեջ կամ գետնին դրված փոքր լուսատուների միջոցով:

Նախագծի շրջանակներում նախատեսվում է թեթև նյութերից նոր ծավալ հավելել՝ հասարակական սանհանգույցներ, որոնք կկցվեն գոյություն ունեցող կառույցի հյուսիսային հատվածին: Հավելվում է նաև ամարաթի դիմացի մասի շվաքը թեյարանի գործածությամբ, ամբողջովին կից ապարանքի արևելյան հատվածից: Այն նախատեսվում է իրականացնել ապակեպատ, սակայն տաք եղանակին բացելու հնարավորությամբ: Երկու գլխատներում ժամանակին գործել են թոնիրներ, որոնք նախագծի շրջանակներում նախատեսվում է վերաօգտագործել: Նախատեսվում է նաև բացել գլխավոր սրահներին կից թաղակապ սրահների բուխարիների ծխնելույզները և վերաօգտագործել (նկ. 3):

Տարածքը պահպանվելու է էլեկտրական հովիվներով, որը թույլ չի տա կենդանիների մուտքը դեպի մեղիքական ապարանք: Նախատեսվում է ստեղծել էկո-կայանատեղի, որի նպատակն է, պահպանելով կանաչապատ տարածքները, ունենալ ավտոկայանատեղի: Իրականացվելու են ճանաչողական զբոսաշրջային բացօթյա ճամբարներ:



Նկ. 3. Իրավիճակային լուսանկար, առաջարկվող վերականգնման եռաչափ տարբերակ

Եզրակացություն

1. Արցախի և Սյունիքի մեղիքական ապարանքներն իրենց ճարտարապետական լուծումներով առաջնորդվել են որոշակի հետաքրքիր սկզբունքներով, սակայն հիմնականում գտնվում են հայկական լեռնաշխարհում առկա հայկական ավանդական բնակելի տների և համալիրների ծիրում, տալով հետաքրքիր ճարտարապետական մեկնաբանություններ:

2. Վերլուծելով Մելիքական ապարանքի երկու վերակազմության տարբերակները և վերականգնման նախագծերը, ինչպես նաև տեղում իրականացված աշխատանքները՝ ի հայտ են բերված տեսական և գործնական խնդիրներ ու մոտեցումներ, կապված 1980-ականների քիչ հիմնավորված ծավալային լուծումների և 2022 թ. ժամանակավոր ծածկի իրականացման հետ, որոնք այս կամ այն ձևով ազդել են կարևոր հուշարձանի կերպարի վրա:
3. Առաջարկվում է վերականգնման և վերաաժևորման էսքիզ, որտեղ պահպանելով և վերականգնելով հինը՝ սահմանափակ նոր ծավալներ հավելելով, ներմուծելով նոր կիրառելիություն՝ վերաօգտագործել սահմանապահ Տեղ գյուղի նշանավոր Դավիթ Բեկի մելիքական ապարանքը, որը 1783 թ. ի վեր բազմակի փոփոխություններ է կրել, սակայն իր պահպանված հիմնական հորինվածքային կորիզով հասել է մեզ (նկ. 3):

Գրականության ցանկ

- [1] **Լեռ**, Երկերի Ժողովածու, 3 հատոր, Երևան, 1973, էջ 71:
- [2] **Ստ.Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչություն, Երևան, 1944, էջ 289:
- [3] **Ե.Լալայան**, Ազգագրական հանդես, Զանգեզուր, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 38- 40:
- [4] **Վ.Հարությունյան**, Հայկական ճարտարապետություն պատմություն. բուհական ձեռնարկ, «Լույս» հրատ., Երևան, 1992, էջ 492-495:
- [5] **ICOMOS ISCS**, Illustrated glossary on stone deterioration patterns, Monuments and Sites 15 (Paris, 2008) 78.
- [6] **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 95:
- [7] **Ստ.Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ. 251-252, 399:
- [8] **Հ.Օրբելի** (գլխ. խմբ.), Դիվան հայ վիմագրության, պրակ 2. Գորիսի, Միսիանի և Ղափանի շրջաններ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1960, էջ 70:
- [9] **Ա.Ղուլյան**, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001, էջ 116-117, 138-117, 128, 118:
- [10] **Ն.Պապուխյան**, Սյունիքի ժողովրդական ճարտարապետություն, Երևան, 1972, էջ 68-69:
- [11] **Դ.Նահատակյան, Ա.Քոչյան**, Դիլիսկայի բնակելի համալիրի ճարտարապետական առանձնահատկությունները, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 12-րդ նստաշրջանի նյութեր, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2018, էջ 180-190:
- [12] **Ա.Գրիգորյան, Ա.Գրիգորյան, Դ.Նահատակյան**, Պատմական Տայքի Արսյացփոր և Ոքաղե գավառների ավանդական բնակելի տների և համալիրների ճարտարապետական առանձնահատկությունները և զուգահեռները, Տայքը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ), հոդվածների ժողովածու, Գյումրի, 2024, էջ 129-139:

АРХИТЕКТУРНЫЙ АНАЛИЗ МЕЛИКСКОГО ДВОРЦА СЕЛА ТЕХ: ПРЕДЛАГАЕМЫЙ ВАРИАНТ ВОССТАНОВЛЕНИЯ

Давид Самвелович Наатакян^{1,2*}, Гоар Вагеевна Нурбекян²,
Арменуи Альбертовна Алексанян¹

¹Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

²Ширакский центр арменоведческих исследований, г. Гюмри, РА

*dnahatakyan@nuaca.am

Светская архитектура занимает особое место в средневековой архитектуре Армении, где важную роль играют позднесредневековые амараты или меликские дворцы. В рамках данного исследования был осуществлен систематический анализ меликского дворца Давида Бека, сына Мелик-Бархударя, в селе Тех марза Сюник РА. Анализ включал плановый, пространственный и конструктивный подходы для выявления особенностей этого дворца и сравнения его с другими объектами архитектуры. Основной акцент делался на сравнительном анализе и уникальности данного сооружения. Особенности упомянутого сооружения сравнивались с сохранившимися постройками 15-18 веков: дворцами и замками бывших меликских поселений Арцахской и Сюникской областей. В ходе исследования также были изучены особенности симметрии подобных сооружений, а также малые архитектурные элементы (камины, окна, ниши, декоративные украшения). Сохранение и реставрация этих сооружений с особым вниманием и применением оригинальных решений в настоящее время являются важной задачей, поскольку они представляют собой безмолвное свидетельство самобытности народа Сюника, а также непоколебимой воли к борьбе за армянский суверенитет. На основе результатов проведенных комплексных исследований были разработаны целенаправленные предложения по реставрации и непрерывной переоценке сооружения с учетом его исторической и архитектурной значимости.

Ключевые слова: эпоха меликства, амарат, меликства Арцаха и Сюника, особняк, глхатун, вариант восстановления

ARCHITECTURAL ANALYSIS OF THE MELIKAL PALACE OF TEGH VILLAGE PROPOSED RESTORATION OPTION

Davit Nahatakyan^{1,2*}, Gohar Nurbekyan², Armenuhi Aleksanyan¹

¹National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

²Shirak Center of Armenological Studies, Gyumri, RA

*dnahatakyan@nuaca.am

The medieval architecture holds a distinctive position, particularly with regard to secular architecture, where late medieval amarats or Melikian palaces assume a significant role. This research entails comprehensive analyses, including plan, spatial, and structural comparisons, focusing on the melik palace owned by Davit Bek, the son of Melik-Barkhudar, in the village of Togh. The characteristics of this structure were juxtaposed with those from the 15th to 18th centuries that have been preserved in the former Melik settlements of Artsakh and Syunik provinces, encompassing palaces and castles. The study delved into the symmetry of analogous structures and scrutinized small architectural features such as fireplaces, slits, niches, and decorative embellishments. Through a meticulous and thorough analysis, the research proposes an option for the restoration and reevaluation of the structure, considering its historical and architectural significance.

Keywords: Melikdom period, Amarat, Artsakh and Syunik Meliks, mansion, glkhatun, vaulted, restoration concept

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 25RG-6A091 գիտական թեմայի շրջանակում:

Նահատակյան Դավիթ Սամվելի, ճարտ. թեկն. (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, ճարտարապետության տեխնոլոգիաների, պատմության և ժառանգության ամբիոն, ասիստենտ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, գիտաշխատող, dnahatakyan@nuaca.am, (+374)95875626, **Նուրբեկյան Գոհար Վահեի** (ՀՀ, ք. Գյումրի) - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, գիտաշխատող, ճարտարապետ, nurbekyan00@gmail.com, (+374)44992982, **Ալեքսանյան Արմենուհի Ալբերտի** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Դիզայն ամբիոն, դասախոս, հայցորդ, aleksanyan.armenuhi@yandex.com (+374) 94477434

Наатакян Давид Самвелович, канд.архит. (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Теории, истории и наследия архитектуры, ассистент, Ширакский центр арменоведческих исследований, научный сотрудник, dnahatakyan@nuaca.am, (+374)95875626, **Нурбекян Гоар Вагеевна** (РА, г. Гюмри) - Ширакский центр арменоведческих исследований, научный сотрудник, архитектор, nurbekyan00@gmail.com, (+374)44992982, **Алексанян Арменуи Альбертовна** (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Дизайна, преподаватель, соискатель, aleksanyan.armenuhi@yandex.com, (+374)94477434

Nahatakyan Davit, Ph.D. in Arch. (RA, Yerevan) – NUACA, Chair of Theory, History, and Heritage of Architecture, assistant, Shirak Center for Armenian Studies, researcher, dnahatakyan@nuaca.am, (+374)95875626, **Nurbekyan Gohar** (RA, Gyumri) - Shirak Center for Armenian Studies, Researcher, Architect, nurbekyan00@gmail.com, (+374)44992982, **Aleksanyan Armenuhi** (RA, Yerevan) – NUACA, Design Department, Lecturer, applicant, aleksanyan.armenuhi@yandex.com, (+374) 94477434

Ներկայացվել է՝ 20.10.2025թ.

Գրախոսվել է՝ 03.11.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 22.12.2025թ.

ԽՍՀՄ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՌՈՂՋԱՐԱՆՆԵՐԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Մարիամ Ավետիսի Ավագյան*, Սյուզաննա Վարդանի Վարդանյան,
Քրիստինե Սուրենի Սահակյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

*mavagyan@nuaca.am

Առողջարանային զբոսաշրջությունը կարևոր ուղղություն է, որն ապահովում է ոչ միայն հանգիստ, այլև վերականգնողական և բուժական ծառայություններ: Հայաստանում այս ոլորտն ունի մեծ ներուժ, հատկապես այնպիսի մարզերում, որոնք հարուստ են բնական ռեսուրսներով և բարենպաստ կլիմայով: Գեղարքունիքի մարզը, իր յուրահատուկ աշխարհագրական դիրքով, Սևանա լճի և հանքային աղբյուրների առկայությամբ, կարևոր դեր ունի առողջարանային զբոսաշրջության զարգացման մեջ: Թեև առողջարանային զբոսաշրջության զարգացման խնդիրն արդիական է, բայց որևէ վերլուծություն չի հանդիպում, առավել ևս՝ համալիր: Այս աշխատանքի նպատակն է ներկայացնել Գեղարքունիքի մարզի խորհրդային տարիներից ժառանգություն մնացած չգործող կամ ոչ լիարժեք գործող առողջարանների վիճակի և գործունեության վերլուծությունը, դրանց համադրումը բնական միջավայրի հետ և առողջարանային զբոսաշրջության ներուժի գնահատումը: Խորհրդային տարիներին մարզում գործում էին մի շարք հանգստյան տներ և առողջարաններ, որոնք ապահովում էին վերականգնողական և հանգստի ծառայություններ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այդ կառույցներից շատերը դադարեցին գործել կամ ենթարկվեցին վերափոխման: Սևանի ափին գտնվող կիսակառույց առողջարանային շինությունները, «Արևիկ», Գեղամավան գյուղի լքված ու Հայրավանքի առողջարանները մարզի առողջարանային ներուժի մի կարևոր հատվածն են: Մարզի առողջարանային զբոսաշրջության ներուժի և նշանակության գնահատումը և պետական մշակված ռազմավարությունը խթան կլինեն ոլորտի կայուն զարգացման համար:

Բանալի բառեր. առողջարանային զբոսաշրջություն, Գեղարքունիքի մարզ, «Արևիկ» առողջարան, Հայրավանքի առողջարան

Ներածություն

Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը համարվում է 20-րդ դարի նշանակալի ֆենոմեն, սակայն դրա զարգացման պատմությունը սկիզբ է առել դեռ հնագույն ժամանակներից [1]: Այսօր առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը դարձել է այդ բնագավառի առավել պահանջված տեսակներից մեկը, որը միավորում է հանգիստն ու առողջական

վերականգնումը: Արժանահիշատակ օրինակ է Իսրայելի Մեռյալ ծովը, որը դարձել է համաշխարհային հայտնի առողջարանային կենտրոն՝ իր յուրահատուկ բնական հատկությունների շնորհիվ:

Առողջարանային գործունեությունը գիտակիրառական քայլերի կազմակերպման ու իրականացման միջոցով կանխարգելում է հիվանդությունները, բուժում և վերականգնում՝ օգտագործելով հայրենի բուժական պաշարները, դրանց հատկությունները և ազդեցության մեխանիզմները: Նման գիտակիրառական քայլեր են՝ բալնոլոգիան, կլիմատոլոգիան, հելիոլոգիան, աերոլոգիան, թալասոլոգիան, դիետոլոգիան, կինեզիոթերապիան, ֆիզիոթերապիան: Այս ուղղություններն ապահովում են առողջության վերականգնում՝ բնական պայմանների և մեթոդների միջոցով: Դրանց համադրմամբ ձևավորվում է առողջարանային զբոսաշրջության գիտաբժշկական հիմքը, որը կիրառվում է ամբողջ աշխարհում, նաև՝ Հայաստանում [2]:

21-րդ դարում առողջարանային տուրիզմը զարգանում է մի քանի նոր ուղղություններով: Լայն տարածում է ստացել wellness տուրիզմը՝ առողջ ապրելակերպի, յոգայի, մեդիտացիայի և դետոքսի վրա հիմնված: Բժշկական տուրիզմը կենտրոնացած է մասնագիտական միջամտությունների վրա, իսկ ավանդական առողջարանները շարունակում են պահպանել իրենց նախկին դերակատարումը: Աղյուսակում ներկայացված է առողջարանային զբոսաշրջության համեմատականը համաշխարհային շուկայում և Հայաստանում, համաձայն միջազգային և հայկական վիճակագրության: Ինչպես երևում է, Հայաստանում գերակշռում են ավանդական առողջարանները՝ 70 %, իսկ նոր ուղղությունները դեռ զարգանալու կարիք ունեն:

Աղյուսակ

Առողջարանային զբոսաշրջությունն ըստ ուղղությունների, % (2023 թ.)

Ոլորտ	Համաշխարհային շուկա, [3]	Հայաստան, [4]
Բժշկական զբոսաշրջություն	18	5
Wellness զբոսաշրջություն	42	25
Ավանդական առողջարաններ	40	70

Առողջարանային արդյունաբերության գիտաբժշկական հիմքն առողջարանագիտությունն է: Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության նպատակն է մարդու ֆիզիկական, մտավոր և զգայական ուժերի ընդլայնված վերարտադրությունը և օրգանիզմի կենսական ուժերի վերականգնումը: Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունն ապահովում է մարդկանց մշտական բնակության վայրից ժամանակավոր ելք առողջարանային վերականգնողական նպատակներով: Առողջարանները պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝ ամբողջական առողջարաններ և բուժական պանսիոնատներ:

Հայաստանում առողջարանային և վերականգնողական զբոսաշրջության զարգացումն ունի երկար պատմություն: Դրա զարգացման համար հանրապետության տարածքում ավելի քան 800 հանքային աղբյուրներ են հայտնի, որոնց մեծ մասն ինքնահոս դուրս են գալիս երկրի մակերես:

Հայտնաբերված հանքային ջրերից 625-ը հետազոտվել են, իսկ 17-ը երկրաբանների կողմից մանրագննին հետախուզվել են [5-7]: Հանքային ջրերը բազմազան են ըստ ջերմաստիճանի և որակական հատկանիշների: Հայաստանը Ռուսաստանի կազմում հայտնվելուց հետո՝ 1828 թ., գեներալ Պասկևիչի հանձնարարությամբ կատարվեց Արգնիի ջրերի քիմիական վերլուծությունը: Արգնի առողջարանի պատմությունը սկսվում է 1925 թ.՝ ջրաբուժական հիմնարկների և երեխաների առողջարանների կառուցմամբ: Իսկ Ջերմուկի հանքային ջրերը գիտականորեն նկարագրվեցին առաջին անգամ 1831թ.՝ Գ. Վոսկոբոյնիկովի կողմից: 1938թ. պրոֆեսոր Ա. Մելիք-Աղամյանի ղեկավարությամբ անցկացված հետազոտությունները հաստատեցին Ջերմուկի ջրերի բուժիչ հատկությունները: Բացի Ջերմուկից և Արգնիից, Հայաստանում կան ևս 8 առողջարանային գոտիներ՝ Հանքավան, Դիլիջան, Վանաձոր, Սևան, Բջնի, Արզական, Աղվերան և Ծաղկաձոր, որոնք հարուստ են բնական բուժիչ ռեսուրսներով [2, 5, 6]:

Հայաստանում առողջարանային և բժշկական ծառայությունները, համեմատած այլ երկրների հետ, մատչելի են: Հայաստանի առողջարանային գոտիները գտնվում են էկոլոգիապես մաքուր միջավայրում, որտեղ բացակայում են արդյունաբերական մեծ կենտրոնները, առողջարանային համալիրները հագեցած են ժամանակակից տեխնոլոգիաներով: Առողջարանային զբոսաշրջությունը Հայաստանում համադրվում է մշակութային զբոսաշրջության հետ [7, 8]:


Գեղարքունիքի մարզը հարուստ է հանքային ջրերով, որոնք ունեն բացառիկ բուժական հատկություններ և բարենպաստ ազդեցություն առողջության վրա: Վարդենիսի շրջանի հանքատորֆերը, համեմատած հանրապետության մյուս նմանատիպ հանքատորֆերի հետ, առանձնապես են իրենց յուրահատկությամբ, մարզի բնակչության պայմանները լրացուցիչ նպաստում են բուժական արդյունքին: Սևանի առողջարանային նշանակությունն անգնահատելի արժեք է Գեղարքունիքի մարզի համար [9-12]:

Այս աշխատանքի նպատակն է գնահատել Գեղարքունիքի մարզի առողջարանային զբոսաշրջության, խորհրդային տարիներից ժառանգություն մնացած չգործող կամ ոչ լիարժեք գործող առողջարանների ներկա վիճակը, առանձնահատկությունները, զարգացման հեռանկարները և առողջարանային զբոսաշրջության ներուժը:

Նյութեր և մեթոդներ

Աշխատանքի իրականացման ընթացքում ուսումնասիրվել են նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային տարիներին Հայաստանում առողջարանային զբոսաշրջության մասին գիտական և մասնագիտական գրականությունը, հիմնական ուշադրությունը դարձնելով Գեղարքունիքի մարզի առողջարանային զբոսաշրջության պատմական զարգացմանը: Մարզի առողջարանային ներուժը, ենթակառուցվածքները, բնական պայմանները և կլիմայական առանձնահատկությունները կարող են նպաստել զբոսաշրջության զարգացմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդային տարիների Գեղարքունիքի մարզի առողջարանային զբոսաշրջության ռեսուրսներն այժմ մասնավոր սեփականություն են, մարզի բնակիչների մոտ կան հոգեբանական

արգելքներ գրավոր հարցումներ անցկացնելու համար, իրականացվել են բանավոր հարցումներ Գեղարքունիքի մարզում՝ թե բնակչության շրջանում, թե եղել են հանդիպումներ մասնավոր սեփականատերերի և մարզային կառավարման օղակների հետ (նկ. 1):



Նկ. 1. Մեանի համայնքապետարանի պատասխան նամակը մեր նամակ-հարցմանը

Դաշտային հետազոտության ժամանակ տեղում կատարվել են ուսումնասիրություն առողջարանների գործունեության վերաբերյալ, վերլուծվել են մատուցվող ծառայությունները, ենթակառուցվածքները և այցելուների հոսքը, ինչպես նաև հավաքագրվել են տվյալներ տարածքի պատմական անցյալի, ֆունկցիոնալ փոփոխությունների և ներկա վիճակի վերաբերյալ: Նշված մեթոդաբանությունը թույլ է տվել համակարգված ուսումնասիրել Գեղարքունիքի մարզի առողջարանային զբոսաշրջության ներկա վիճակը, առկա խնդիրները և զարգացման հնարավոր ուղիները:

Արդյունք և վերլուծություն


Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի հարուստ բնական ու պատմական ժառանգությամբ օժտված շրջաններից մեկում՝ Մեանի ավազանում, որը համարվում է հանրապետության ամենագեղեցիկ և բնապատկերային վայրերից մեկը: Գեղարքունիքի մարզը ոչ միայն բնության ռեսուրսներով է հարուստ, այլ նաև պատմամշակութային ժառանգությամբ է աչքի ընկնում: Մարզում պահպանված նախաուրարտական և ուրարտական ժամանակաշրջանների բերդերն ու ամրոցները, բնակավայրերի հետքերը և սեպագիր արձանագրությունները վկայում են տարածքի պատմական կարևորության մասին: Գեղարքունիքի մարզի առողջարանային զբոսաշրջության առանձնահատկությունները, զարգացման հեռանկարները և ներուժը գնահատելու համար դիտարկենք խորհրդային տարիներից ժառանգություն մնացած չգործող կամ ոչ լիարժեք գործող առողջարանները ու դրանց ներկա վիճակը:

«Արևիկ» առողջարան: Արևիկ առողջարանը գտնվում է Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի ափին՝ Սևան-Ճամբարակ ճանապարհահատվածի 8-րդ կմ-ի վրա: Անվանումն ինքնին՝ «Արևիկ», պայմանավորված է նրանով, որ այստեղ գրեթե ամբողջ օրն արևոտ է:



Նկ. 2. «Արևիկ» պիոներական ճամբար


1968 թ. այն գործել է որպես «Արևիկ» պիոներական ճամբար (նկ. 2), որն իր ժամանակաշրջանում մեծ հռչակ ունեցող մանկական հանգստի կազմակերպման կենտրոն էր: Սակայն հետագա տասնամյակների ընթացքում ճամբարը վերափոխվեց, 1983 թ. այն վերանվանվեց և դարձավ առողջարան, որն արդեն ծառայում էր ոչ միայն երեխաների, այլև մեծահասակների վերականգնման և բուժման նպատակին: Խորհրդային տարիներին «Արևիկ» առողջարանը մասնագիտացված էր տարբեր բուժական մեթոդների վրա՝ առաջարկելով ֆիզիոթերապիա, ջրաբուժություն, մերսում և դեղորայքային էլեկտրոֆորեզ, աղաբուժություն, բուժում գերբարձր հաճախականությամբ, գալվանացում, դարսոնվալիզացիա, պարաֆինոթերապիա: Այստեղ բուժվում էին մի շարք հիվանդություններ, այդ թվում՝ բրոնխային ասթմա, նյարդային համակարգի հիվանդություններ, հենաշարժական խնդիրներ, մանկական ուղեղային կաթված, օրթոպեդիկ և ալերգիկ հիվանդություններ, բերանի խոռոչի լորձաթաղանթի հիվանդություններ, հայմորիտ, հենաշարժական ապարատի, հոդատապի, ճարպակալման, մանկական ալերգիկ հիվանդություններ, ողնաշարի հիվանդություններ, քիթ-կոկորդ-ականջի մանկական հիվանդություններ:



Նկ. 3. «Արևիկ» առողջարան

Այսօր «Արևիկ» առողջարանում զբոսաշրջության վերածննդի ուղղությամբ կատարվում են քայլեր, այն վերանորոգվել և հարմարեցվել է առողջարանային ժամանակակից պահանջներին, գործում է որպես առողջարանային կենտրոն՝ ամառային սեզոնին, իսկ տարվա մնացած ժամանակահատվածում գործում է որպես հյուրանոցային համալիր (նկ. 3): «Արևիկ» առողջարանը, տեղակայված լինելով Սևանա լճի ափին, բարենպաստ պայմաններ ունի ինչպես վերականգնողական, այնպես էլ հանգստի զբոսաշրջության զարգացման համար: Առողջարանն իր այցելուներին առաջարկում է ժամանակակից հարմարություններով կացարաններ, մաքուր ջուր, բացօթյա սրճարան, ռեստորան, բացօթյա բեմ և տաղավարներ, որտեղ կազմակերպվում են տարբեր միջոցառումներ: Չնայած տարածքում բուսականությունը սակավ է, առողջարանի միջավայրը նպաստավոր է ինչպես կարճատև, այնպես էլ երկարատև հանգստի համար:

Սևանի ափին գտնվող կիսակառույց առողջարանային շինություններ: 1980-ական թվականներին Սևանի ափին նախատեսվում էր կառուցել առողջարաններ և հանգստյան բազաներ՝ նպաստելու առողջարանային զբոսաշրջության զարգացմանը: Սակայն Խորհրդային Միության փլուզման հետևանքով բազմաթիվ նախագծեր կիսատ մնացին: Այդպիսի օբյեկտներից է չկառուցված առողջարանը, որի ճարտարապետի և պաշտոնական անվան վերաբերյալ հստակ տվյալներ չեն պահպանվել: Որոշ աղբյուրներում նշվում է, որ այն կարող էր պատկանել ЛНПО-Лечебно-научно-производственное объединение «Ավանգարդ» հանգստյան բազայի ցանցին, սակայն այդ տեղեկությունը փաստագրական հաստատում չունի [13, 14]: Չնայած անավարտ շինարարությանը, առողջարանի լքված կառույցը շարունակում է գրավել այցելուներին իր անսովոր տեսքով, հիշեցնելով Խորհրդային առողջարանային ծրագրերի և չիրականացված զբոսաշրջային զարգացման հնարավորությունների մասին (նկ. 4): Սևանի հյուսիսարևմտյան ափին գտնվող այս օբյեկտները կարող են վերաիմաստավորվել և ինտեգրվել ժամանակակից զբոսաշրջային և առողջարանային ծրագրերին՝ վերածվելով մշակութային ու զբոսաշրջային նշանակության կետերի: Այս կառույցները Սևանի զբոսաշրջային ժառանգության կարևոր մաս են կազմում՝ վկայելով անցյալի մեծամեծ ծրագրերի և ժամանակակից զբոսաշրջության զարգացման հնարավորությունների մասին:



Նկ. 4. Զբոսաշրջային բազան, բազայի հյուսիսային հատված

Գեղամավան գյուղի լքված առողջարանը: Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գեղամավան գյուղում 1940-ական թվականների վերջին հիմնադրվել է առողջարանային կենտրոն, որը Խորհրդային Հայաստանի համար կարևոր նշանակություն է ունեցել որպես թոքային և մազաթափության խնդիրներով տառապող հիվանդների բուժման վայր: Առողջարանը սպասարկել է ՀԽՍՀ տարբեր շրջաններից ժամանած քաղաքացիներին՝ դառնալով ոլորտում մասնագիտացված և գիտականորեն հիմնավորված բուժման ուղղություն ունեցող հաստատություն:

1950-ականների կեսերից մինչև 1990 թ. առողջարանը վերակազմակերպվել է որպես մանկական առողջարան, որն ամառային ամիսներին ընդունել է դպրոցահասակ երեխաների՝ ապահովելով առողջության վերականգնման և հանգստի համար անհրաժեշտ պայմաններ: Այս շրջանը կարելի է դիտարկել որպես հաստատության գործունեության առավել ակտիվ և արդյունավետ փուլ, որի ընթացքում առողջարանը միաժամանակ իրականացրել է ինչպես բժշկական, այնպես էլ կրթամշակութային գործառնություն:

Ներկայումս առողջարանը չի գործում: Այն գտնվում է «Սևան» զբոսաշրջային և առողջության կենտրոն ՓԲԸ-ի սեփականության տակ: Տարածքը զբաղեցնում է շուրջ 15,2 հա, որն ամբողջությամբ ցանկապատված է և հարուստ է դեկորատիվ ու մրգատու ծառատեսակներով, ստեղծելով տեսականորեն բարենպաստ միջավայր հանգստի և առողջական վերականգնման համար:

Այնուամենայնիվ, դաշտային հետազոտության ընթացքում արձանագրվել է, որ շինությունները գտնվում են անմխիթար վիճակում, և դրանց տեխնիկական վիճակը բացառում է ներկայումս շահագործման հնարավորությունը: Տարիների անգործության, ներդրումների բացակայության և բնական մաշվածության արդյունքում շենքերն ունեն հիմնանորոգման անհրաժեշտություն և առանց պատշաճ վերականգնման չեն կարող ծառայել նպատակային օգտագործման համար (նկ. 5):

Հայրավանքի առողջարան: Առողջարանը գտնվում է Հայրավանքի տարածաշրջանում, անմիջապես Սևանա լճի հարավային ափին, բացառիկ բնապատկերային և մշակութային միջավայրում: Խորհրդային ժամանակաշրջանում այստեղ կառուցվել էին նաև զբոսաշրջային բազա և մանկական պիոներական ճամբար, սակայն 2000-ական թվերին, Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով, տարածքի 8 շինություններից 7-ը հայտնվել են ջրի տակ: Մինչ այդ տարածքը ժամանակավորապես օգտագործվել է նաև կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ֆերմայի համար:



Նկ. 5. Առողջարանի ցուցանակը



Նկ. 5. Հայրավանքի առողջարանը և միջանցքի պատերին քանդակված պատկերները

Այսօր պահպանված միակ շինությունը հենց առողջարանն է, որը կառուցված է ամրոցի ոճով, հարևանությամբ գտնվում են անավարտ լողավազանն ու սպորտսրահը: Շինությունը բարեկեցիկ վիճակում է, վերանորոգումից հետո հնարավոր է այն օգտագործել որպես առողջարանային կամ զբոսաշրջային կենտրոն:

Շենքի ներքին հարդարանքում առանձնանում են խորհրդային ժամանակաշրջանի ճարտարապետական մոտեցումները: Առաստաղները ձևավորված են ԽՍՀՄ մոդեռնիստական ոճին համահունչ, իսկ միջանցքների պատերին տեղադրված են Հայրավանքի շրջանին բնորոշ ավանդույթների թեմատիկ քանդակներ, ինչպես նաև աստղագիտական խորհրդանշաններ, որոնք տարածքին հաղորդում են նաև մշակութային և խորհրդանշային խորություն (նկ. 5): Հատկապես նշանակալի է այն փաստը, որ առողջարանի սենյակների պատուհանները նայում են դեպի Հայրավանքի հինավուրց եկեղեցին, ինչը ոչ միայն ապահովում է տեսողական բացառիկ փորձառություն, այլ նաև ստեղծում է հոգևոր հանգստության մթնոլորտ՝ հարմար առողջարանային գործունեության համար:

Առողջարանի առաջին հարկում գործել է հատուկ բարձր դաշնամուրով, որտեղ ամեն երեկո կազմակերպվել են խնջույքներ և մշակութային երեկոներ՝ տրամադրելով ինչպես ժամանցային, այնպես էլ սոցիալական շփման միջավայր:

Բուժական ծառայությունների մասին մանրամասներ ստանալու նպատակով դիմվել է Գեղարքունիքի մարզպետարան, սակայն պատասխանեցին, որ նրանք չունեն մանրամասն տեղեկություններ, իսկ սեփականատերը գտնվում է երկրի սահմաններից դուրս և նրա հետ կապ հաստատել չհաջողվեց, ուստի բուժագործության վերաբերյալ տեղեկատվություն ստանալ հնարավոր չեղավ:

Եզրակացություն

Գեղարքունիքի մարզի՝ խորհրդային տարիներից ժառանգություն ստացած չգործող կամ ոչ լիարժեք գործող առողջարանների դիտարկումը հիմք է տալիս գնահատելու մարզի առողջարանային զգալի ներուժը: Սևանի ափին գտնվող կիսակառույց առողջարանային շինությունները,

«Արևիկ», Գեղամավան գյուղի լքված ու Հայրավանքի առողջարանները մարզի առողջարանային ներուժի մի հատվածն են:

Մարզում առողջարանային զբոսաշրջության զարգացման համար կարիք կա մշակելու ռազմավարություն՝ տնտեսական քայլերի առաջնահերթությամբ: Առողջարանային զբոսաշրջության զարգացման մեջ իր ուրույն տեղը կունենա խորհրդային ճարտարապետաշինարարական հզոր ժառանգությունը: Այդ ռազմավարության մեջ առանցքային պետք է լինի Սևանա լճի էկոլոգիական վիճակի բարելավման հարցը և Սևանա լճի նշանակության վերագնահատումը:

Գեղարքունիքի մարզի առողջարանային զբոսաշրջության նշանակությունը մնում է պետական համակարգի կողմից չգնահատված և չարժևորված: Առաջարկվում է՝

1. Խորհրդային ժառանգության վերափոխում.

• լքված առողջարանների վերականգնում: Խորհրդային շրջանի լքված առողջարանները (օրինակ՝ Հայրավանք, Գեղամավան) կարող են վերածվել էկո-ռեզորտների՝

- պահպանելով պատմական ճարտարապետությունը,
- ավելացնելով ժամանակակից բուժական և հանգստի ենթակառուցվածքներ (սպա-կենտրոններ, յոգայի ստուդիաներ),

• օգտագործելով արևային էներգիա և ջրի վերամշակման համակարգեր, օրինակ, Գեղամավանի մանկական առողջարանի հիման վրա ստեղծել բարձրակարգ wellness-կենտրոն՝ շեշտը դնելով բնապահպանական կայունության վրա, կամ վերածել այն մանկական ճամբարի:

2. Պետական-մասնավոր գործընկերություն.

• հարկային արտոնություններ. մասնավոր ներդրողներին տրամադրել հարկերի նվազեցում՝ Սևանի ափին առողջարաններ կառուցելու դեպքում,

• միջազգային կապեր. Համագործակցել Վրաստանի և Ռուսաստանի առողջարանային կենտրոնների հետ՝ փորձի փոխանակման նպատակով:

3. Մշակութաառողջարանային թեմատիկ փաթեթների մշակում.

- համատեղել բնությունը, պատմությունը և առողջարանային ծառայությունները,
- «Սևանա լճի թերապիա», 7-օրյա ծրագիր՝ ներառելով լճի ափին յոգա, ցեխաբուժություն և պատմական վանքերի այցելություն,
- «Հայկական հանքաջրերի ուղի», այցելություն Ջերմուկ, Արզնի և Գեղարքունիքի հանքային աղբյուրներ՝ բժշկի խորհրդատվությամբ,
- կիրառել «դանդաղ տուրիզմ» սկզբունքները՝ խթանելով երկարատև հանգիստը բնության գրկում:

4. Բնապահպանական նախաձեռնություններ.

- Սևանա լճի պահպանում,
- առողջարաններում տեղադրել արևային էներգիայի պանելներ և անձրևաջրերի հավաքման համակարգեր,

- ներդնել «զրոյական աղտոտում» ստանդարտ՝ արգելելով միանգամյա պլաստիկի օգտագործումը,
 - Էկո-հավատարմագրվածություն,
 - ստեղծել «Կանաչ առողջարան» նշանը՝ շնորհելով այն հաստատություններին, որոնք համապատասխանում են Էկոլոգիական չափանիշներին:
5. Համայնքային ներգրավվածություն.
- տեղացիների ուսուցում. կազմակերպել դասընթացներ բուժական զբոսաշրջության, հյուրասիրության և Էկոլոգիայի վերաբերյալ,
 - տեղական արտադրանքի առաջխաղացում.
 - առողջարաններում առաջարկել տեղական մթերքներ (Սևանի հանքային ջուր, Գեղարքունիքի մեղր, Նորատուսի պանիր և այլն) և արհեստավորների աշխատանքներ (գորգեր, խեցեղեն):
6. Գիտահետազոտական համագործակցություն.
- համագործակցել Երևանի Բժշկական Համալսարանի և ԳԱԱ-ի հետ,
 - ուսումնասիրել Գեղարքունիքի հանքային ջրերի բուժական ազդեցությունը քրոնիկ հիվանդությունների վրա,
 - հրապարակել հետազոտություններ միջազգային ամսագրերում՝ գրավելով օտարերկրյա հիվանդների ուշադրությունը:

Գրականության ցանկ.

- [1] **Л. Журавлева**, Курортное дело с основами курортологии, Сочи, 2008, 250 с.
- [2] **Գ. Աղաջանյան, Ժ. Թովչյան**, Հայաստանի առողջարանները և առողջավայրերը, Երևան, 1968, 277 էջ:
- [3] Global Wellness Institute. <<https://globalwellnessinstitute.org/industry-research/global-wellness-institute-2023-global-wellness-economy-monitor/>> (21.04.2025)
- [4] Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն <<https://www.mineconomy.am/>> (03.05.2025)
- [5] **Հ. Ավագյան**, Հայաստանի հանքային ջրերը, Երևան, 2006, 67 էջ:
- [6] **Մ. Համբարձումյան**, Հայաստանի բուժիչ հանքային ջրերը, Երևան, 1982, 42 էջ:
- [7] **Գ. Թովմասյան**, Առողջարանային-վերականգնողական ու բժշկական զբոսաշրջությունը ՀՀ-ում և աշխարհում, Երևան, 2024, 264 էջ:
- [8] Санаторий и турбаза в Айраванке. <<https://urban3p.ru/object25377>> (21.04.2025)
- [9] Հայաստանի Գեղարքունիքի մարզը թվերով. Վիճակագրական ժողովածու. Երևան, 2024, 124 էջ:
- [10] **Մ. Շահբաջյան**, Հայաստանի մարզերը, Երևան, 2011, 100 էջ:
- [11] «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ, <<https://sevan-park.am>> (01.11.2025)
- [12] Թթուջուր բնական հանքային ջուր, <<http://geggharkunik.ruraltourism.am/hy/ttujur/>> (21.04.2025)
- [13] **Ժ. Թովչյան**, Օգտվիր Հայաստանի առողջավայրերից, Երևան, 1981, 20 էջ:
- [14] Հայկական ՄՄՀ Արհմիությունների առողջարանները. Համառոտ տեղեկագիրք, Երևան, 1972, 66 էջ:

ОЦЕНКА ТУРИСТИЧЕСКОГО ПОТЕНЦИАЛА САНАТОРИЕВ ПЕРИОДА СССР В ГЕХАРКУНИКСКОЙ ОБЛАСТИ

Мариям Аветисовна Авакян*, Сюзанна Вардановна Варданян, Кристине Суреновна Саакян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

*mavagyan@nuaca.am

Санаторно-курортный туризм является важным направлением, обеспечивающим не только отдых, но и восстановительные и лечебные услуги. В Армении данный сектор обладает значительным потенциалом, особенно в регионах, богатых природными ресурсами и благоприятным климатом. Гехаркуникская область, благодаря своему уникальному географическому положению, наличию озера Севан и минеральных источников, играет важную роль в развитии санаторно-курортного туризма. Хотя проблема развития санаторно-курортного туризма актуальна, до настоящего времени отсутствуют аналитические исследования, особенно комплексные. Цель данной работы — представить анализ состояния и функционирования санаториев и курортов Гехаркуникской области, оставшихся с советских времен и ныне частично или полностью не действующих, их взаимодействие с природной средой, а также оценку туристического потенциала региона в сфере санаторно-курортного туризма. В советский период в области функционировало множество домов отдыха и санаториев, предоставлявших восстановительные и рекреационные услуги. После распада СССР многие из этих учреждений прекратили деятельность или подверглись реконструкции. Незавершённые здания санаториев на побережье Севана, санатории “Аревик”, заброшенные объекты в селе Гегамаван и санатории Айраванка представляют собой важную часть санаторного потенциала региона. Оценка потенциала и значимости санаторно-курортного туризма в области, а также разработанная государством стратегия будут способствовать устойчивому развитию этой сферы.

Ключевые слова: оздоровительный туризм, Гехаркуникский район, санаторий “Аревик”, санатории Айраванка

ASSESSMENT OF THE TOURISM POTENTIAL OF SOVIET-ERA SANATORIA IN THE GEGHARKUNIK REGION

Mariam Avagyan*, Syuzanna Vardanyan, Kristine Sahakyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

*mavagyan@nuaca.am

Health resort tourism is an important sector that provides not only recreation but also restorative and medical services. In Armenia, this sector has significant potential, particularly in regions rich in natural resources and favorable climate. Gegharkunik Province, due to its unique geographical location, the presence of Lake Sevan, and mineral springs, plays a key role in the development of health resort tourism. Although the issue of developing health resort tourism is highly relevant, analytical studies, especially comprehensive ones, are currently lacking. The aim of this study is to present an analysis of the condition and functioning of health resorts in Gegharkunik Province, inherited from the Soviet era, many of which are now partially or completely inactive, their integration with the natural environment, and an assessment of the region's potential in health

resort tourism. During the Soviet period, the province had numerous holiday homes and health resorts that provided restorative and recreational services. Following the collapse of the USSR, many of these facilities ceased operation or underwent restructuring. The unfinished health resort buildings on the shores of Lake Sevan, the “Arevik” resort, the abandoned sites in Geghamavan village, and the Hayravank health resorts represent a significant part of the province’s health resort potential. Assessing the potential and significance of health resort tourism in the province, together with state-developed strategies, will promote the sustainable development of this sector.

Keywords: Health Tourism, Gegharkunik Province, “Arevik” Resort, Resorts of Hayravank

Ավագյան Մարիամ Ավետիսի, կ.գ.թ., դոց. (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Շրջակա միջավայրի կառավարում, սերվիսի և տուրիզմի ամբիոն, (+374)93438756, mavagyan@nuaca.am, **Վարդանյան Սյուզաննա Վարդանի** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, բալնաբուժություն, (+374)94845756, vardanyan_2003@internet.ru, **Սահակյան Քրիստինե Սուրենի, տ.գ.թ., դոց.** (ՀՀ, Երևան) - ՃՇՀԱՀ, Շրջակա միջավայրի կառավարում, սերվիսի և տուրիզմի ամբիոն, (+374)91529327, sks091279@gmail.com

Авакян Мариам Аветисовна, к.б.н., доцент (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Управления окружающей средой, сервиса и туризма, (+374)93438756, mavagyan@nuaca.am, **Варданян Сюзанна Вардановна** (РА, г. Ереван) - НУАСА, бакалавр, (+374)94845756, vardanyan_2003@internet.ru, **Саакян Кристине Суреновна, к.т.н., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Управления окружающей средой, сервиса и туризма, (+374)91529327, sks091279@gmail.com

Avagyan Mariam, doctor of philosophy (PhD) in Biology, Associate Professor (RA, Yerevan) - NUACA, Department of Environmental Management, Service, and Tourism, (+374)93438756, mavagyan@nuaca.am, **Vardanyan Syuzanna** (RA, Yerevan)- NUACA, bachelor, (+374)94845756, vardanyan_2003@internet.ru, **Sahakyan Kristine, doctor of philosophy (PhD) in Engineering, Associate Professor** (RA, Yerevan) - NUACA, Department of Environmental Management, Service, and Tourism, (+374)91529327, sks091279@gmail.com

Ներկայացվել է՝ 16.10.2025թ.

Գրախոսվել է՝ 14.11.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 22.12.2025թ.

ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐԺԵՔՈՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԾԱԽՄԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Սիրանուշ Արամայիսի Գալստյան*, Արա Արամի Հովհաննիսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

*galstyansiranush@nuaca.am

Շինարարության ոլորտը, որպես տնտեսության ռազմավարական ճյուղ, հաճախ բախվում է բյուջետային վերահսկողության, ժամանակի կորուստների և ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման խնդիրներին: Այս մարտահրավերներին արձագանքելու նպատակով ձևավորվել են նորարարական մոտեցումներ, այդ թվում՝ «Անթափոն շինարարությունը» (Lean Construction/LC), որի կարևորագույն գործիքներից մեկը Սահմանված արժեքով նախագծումն է (Target Value Design/TVD): Վերջինս առաջարկում է հակադարձ նախագծման մոդել՝ նախատեսված բյուջեին համապատասխանեցված լուծումների մշակմամբ, ինչը խթանում է շահագրգիռ կողմերի համագործակցությունը և թույլ է տալիս առավել արդյունավետ կառավարել ծախսերը: Հնդկաժամանակակից վերլուծվել է TVD մեթոդի կիրառման փորձը շինարարական նախագծերում՝ դիտարկելով դրա հիմնական սկզբունքները, գործարկման մեխանիզմները, ինչպես նաև առավելություններն ու առկա սահմանափակումները: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ներկայացված առաջարկությունները կնպաստեն TVD մեթոդի արդյունավետ կիրառմանը, ինչը կնպաստի շինարարական նախագծերի ֆինանսական կառավարման բարելավմանը, արժեքի կորստի նվազեցմանը և ներդրումային գրավչության բարձրացմանը:

Բանալի բառեր. ծախսերի վերահսկում, TVD, շինարարություն, արժեքի կառավարում, ինտեգրված նախագծում, շահագրգիռ կողմերի համագործակցություն

Ներածություն

Շինարարության ոլորտը հանդիսանում է ազգային տնտեսության ռազմավարական ուղղություններից մեկը՝ էական ազդեցություն ունենալով կապիտալ ներդրումների, աշխատատեղերի ստեղծման և ենթակառուցվածքային զարգացման վրա [1]: Սակայն ոլորտում ի հայտ եկող բյուջետային գերազանցումները, նախագծման փուլում անորոշությունները, ինչպես նաև ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը շարունակում են հրատապ խնդիրներ մնալ ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային շուկաներում:

Շինարարական ցանկացած նախագիծ իրականանում է երեք հիմնական սահմանափակումների ներքո. ինչ ծավալ պետք է արվի, ինչքան ժամանակում և ինչ բյուջեով: Նախագծի հաջողությունը պայմանավորված է այս երեք տարրերի արդյունավետ կառավարմամբ, քանի որ ցանկացած մեկի փոփոխությունը պահանջում է մյուս երկուսի կամայական ճշգրտում:

Աշխատանքի շրջանակ՝ նախագծի վերջնական արդյունքի կամ մատակարարման ենթակա օբյեկտի բոլոր որակական, քանակական և ֆունկցիոնալ պահանջների ամբողջություն է:

Ժամանակ՝ նախագծի ավարտի համար սահմանված ժամանակացույցի պարտադիր պահանջներն են:

Ծախսեր՝ նախագծի իրականացման համար հատկացված ֆինանսական ռեսուրսների (բյուջեի) սահմանափակումը:

Ակադեմիական աղբյուրները փաստում են, որ շինարարական ոլորտին բնորոշ է ժամանակի և ծախսերի զգալի շեղումների հաճախականությունը: Ներկայումս նախագծերի ավելի քան 70 %-ը գերազանցում է բյուջեն և իրականացվում է ժամանակացույցի խախտումներով [2]:

Ծախսերի գերազանցման հիմնական կառուցվածքային պատճառներից մեկն ավանդական «Նախագծում-մրցույթ-կառուցում» (Design-Bid-Build/DBB) մատակարարման մոդելն է: Այս մոդելը ստեղծում է թանկարժեք մրցակցային հարաբերություններ սեփականատիրոջ և նրա կապալառուների միջև, որտեղ ծախսերը հաճախ սպասվածից ավելի են լինում նախագծի պատրաստ լինելուց հետո [3]: Այս գործընթացային սեգմենտացիան և հակասական շահերը նվազեցնում են վաղ համագործակցության հնարավորությունները և խթանում են ֆինանսապես անարդյունավետ վերանախագծման անհրաժեշտությունը:

Մինևույն ժամանակ, շինարարության ոլորտը համարվում է համաշխարհային մասշտաբով մեծ միջոցներ պահանջող ճյուղերից մեկը, այն օգտագործում է աշխարհի հողային ռեսուրսների, հումքի, էներգիայի և քաղցրահամ ջրի զգալի բաժինը: Ըստ միջազգային գնահատականների՝ շինարարությունը պատասխանատու է համաշխարհային էներգիայի սպառման շուրջ 36% -ի, ածխաթթու գազի արտանետումների մոտ 37% -ի, հումքային ռեսուրսների օգտագործման ավելի քան 50% -ի, ինչպես նաև ծանր թափոնների շուրջ 35% -ի համար: Բացի այդ, այն սպառում է քաղցրահամ ջրի մոտ 15...20%-ը: Այս ցուցանիշները վկայում են, որ շինարարական գործընթացների ազդեցությունը բնապահպանական համակարգերի վրա չափազանց մեծ է, ուստի կայունության ապահովումը և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը դառնում է ոլորտի առաջնախնդիրը [4]:

Այս կառուցվածքային և բնապահպանական մարտահրավերները շտկելու նպատակով առաջ է քաշվել անթափոն շինարարության (LC) փիլիսոփայությունը, որի գլխավոր մարտավարական գործիքներից մեկը սահմանված արժեքով նախագծումն (TVD) է: TVD-ն առաջարկում է էական փոփոխություն՝ ծախսը դիտարկելով ոչ թե որպես նախագծման արդյունք, այլ որպես դրա սահմանափակող գործոն: Այսինքն, նախագծումը պետք է իրականացվի այնպես, որ այն համապատասխանի նախապես սահմանված բյուջեին, այլ ոչ թե բյուջեն ձևավորվի արդեն պատրաստ նախագծից հետո: Այս ինտեգրված մոտեցումը մեծացնում է նախագծի բյուջեի պահպանման հավանականությունը՝ միաժամանակ նպաստելով ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և կայունության չափանիշների բավարարմանը:

Այս մարտահրավերները հաղթահարելու համար անհրաժեշտ են հիմնարար լուծումներ: Այդ նպատակով ձևավորվել են հիմնարար մոտեցումներ, այդ թվում՝ LC, որի կարևորագույն գործիքներից է TVD-ն [5]: Վերջինս առաջարկում է հակադարձ նախագծման մոդել՝ նախատեսված բյուջեին համապատասխանեցված լուծումների մշակմամբ, ինչը խթանում է շահագրգիռ կողմերի համագործակցությունը և թույլ է տալիս առավել արդյունավետ կառավարել ծախսերը:

LC փիլիսոփայությունը, որը ծագել է արտադրական ոլորտից, նպատակ ունի նվազեցնել թափոնները և բարձրացնել արդյունավետությունը [6]: Այն շինարարական ոլորտ է ներմուծվել՝ հաղթահարելու ծախսերի, ժամանակի և որակի հետ կապված մարտահրավերները [7]: LC-ն նպաստում է ծախսերի հաշվառման և ֆինանսական կառավարման բարելավմանը շինարարական նախագծերում [8]: Գրականության մեջ քննարկվում են LC-ի տարբեր գործիքներ և մոտեցումներ, որոնք ուղղված են շինարարական նախագծերում ուշացումների և ծախսերի գերազանցումների նվազեցմանը [7]: Օրինակ՝ բյուջետավորումը, հիմնված անթափոն արտադրության սկզբունքների վրա, կարող է բարելավել շինարարական կազմակերպությունների գործունեության տնտեսական արդյունավետությունը՝ բարձրացնելով որակը և արտադրողականությունը [9]:

TVD-ն LC-ի կարևորագույն գործիքներից մեկն է, որը ուղղված է բյուջեի արդյունավետ կառավարմանը դեռևս նախագծման փուլում [10]: TVD-ն նպատակ ունի ապահովել նախագծի իրականացումը՝ առանց սահմանված բյուջեն գերազանցելու: Այն խթանում է թիմային աշխատանքը և համագործակցությունը բոլոր շահագրգիռ կողմերի միջև՝ ապահովելով նախագծային լուծումների համապատասխանությունը ֆինանսական սահմանափակումներին, ինչպես նաև TVD-ի միջոցով կարելի է բարելավել էկոլոգիական ցուցանիշները, ինչպես օրինակ՝ ռեսուրսների կառավարում, CO_2 արտանետումների կրճատում և շրջակա միջավայրի պաշտպանություն [11]:

Հոդվածում վերլուծվել է TVD մեթոդի կիրառման փորձը շինարարական նախագծերում՝ դիտարկելով դրա սկզբունքները, գործարկման մեխանիզմները, առավելություններն ու առկա սահմանափակումները: Ուսումնասիրության վերջնական նպատակն է պարզել, թե ինչպես է իրականացվում նպատակային արժեքի կառավարումը TVD միջավայրում՝ միաժամանակ գնահատելով մեթոդի կիրառելիությունը հայկական շինարարական շուկայում:

Ուսումնասիրության արդյունքները կնպաստեն TVD մեթոդի արդյունավետ կիրառմանը, ինչը կնպաստի շինարարական նախագծերի ֆինանսական կառավարման բարելավմանը, արժեքի կորստի նվազեցմանը և ներդրումային գրավչության բարձրացմանը:

Այս աշխատանքը նպատակ ունի բարձրացնել շինարարության ոլորտի ներդրումային գրավչությունը: Հաշվի առնելով TVD-ի ինտեգրացիոն բնույթը և ինտեգրման գործընթացների բարդությունը՝ մեթոդն առավել նպատակահարմար է կիրառել մեծածավալ կամ բարդ շինարարական նախագծերում, մինչ փոքր նախագծերում արդյունավետությունը կարող է սահմանափակ լինել:

Հոդվածի գիտական նորույթն արտահայտվում է TVD մեթոդի միջազգային փորձի համակողմանի վերլուծությամբ և դրա տեղայնացված կիրառական մոդելի ձևակերպմամբ Հայաստանի

շինարարական միջավայրի համար՝ հաշվի առնելով ազգային շուկայի առանձնահատկությունները, պայմանագրային մոդելները և պետական գնումների համակարգը:

Նյութեր և մեթոդներ

Հետազոտության մեթոդաբանական հիմքը

Հետազոտությունն իրականացվել է գրականության բովանդակային վերլուծության հիման վրա՝ ներառելով IGLC-ի նյութեր, Lean Construction Institute-ի զեկույցներ, ինչպես նաև TVD-ի կիրառման իրական նախագծային օրինակներ: Մեթոդաբանական հիմքում դրված է համեմատական վերլուծության մոտեցումը, որը թույլ է տալիս բացահայտել TVD-ի առավելություններն ավանդական մատակարարման մոդելների համեմատ: Վերլուծական շրջանակն ընդգրկում է TVD-ի սկզբունքները, այդ սկզբունքների իրական կիրառումը և մեթոդի արդյունավետությունը տարբեր տիպի նախագծերում:

Տեսական հիմքեր և մեթոդի ձևավորումը

TVD-ն առաջացել է արտադրական ոլորտում կիրառվող նպատակային արժեքի հաշվարկի (Target Costing/TC) հարմարվողական կիրառությունից շինարարության ոլորտում: TC-ը կառավարման գործիք է, որը ներառում է կազմակերպության գործունեության և դրանց համապատասխան ծախսերի կազմակերպում, համապատասխանեցում և մշակում՝ հասնելու այն շահութաբերության մակարդակին, որը նախապես սահմանված է ղեկավարության կողմից:

Հասկանալ TC-ի սկզբունքները կարևոր նախապայման է TVD մեթոդի իմացության համար, քանի որ վերջինս հենց TC-ի կառուցվածքային հարմարեցումն է շինարարական նախագծերի կառավարմանը:

Շինարարության ոլորտում TC-ի կիրառման առաջին փորձերը կատարվել են 2000 թ. Մեծ Բրիտանիայում՝ Նիկոլինիի և գործընկերների կողմից, սակայն արդյունքները եղել են բացասական՝ պայմանավորված անարդյունավետ գործարար փորձով և ոչ ճշգրիտ ծախսագնահատումներով: Միայն 2004 թ. ԱՄՆ-ում Բալլարդն ու Ռայզերը կարողացան ապահովել TC-ի հաջող կիրառություն շինարարական ոլորտում: Հետագայում, 2007 թ, Հալ Մակոմբերը, Գրեգ Հաուելը և Ջեք Բարբեյրոն ներկայացրեցին TVD տերմինը՝ ընդգծելով դրա ուղղակի կապը TC մեթոդի հետ:

Բալլարդի սահմանմամբ՝ TVD-ն կառավարման պրակտիկա է, որի նպատակն է առավելագույն արժեքի ստեղծումը՝ սահմանված նպատակային արժեքի սահմաններում, որը հաճախ գտնվում է շուկայի միջին արժեքից ցածր: Միևնույն ժամանակ, TVD-ն հանդես է գալիս որպես շարունակական բարելավման և կորուստների նվազեցման մեթոդ: Այլ սահմանման համաձայն՝ TVD-ի հիմնական գաղափարն այն է, որ պատվիրատուի կողմից ընկալվող արժեքը (հաշվի առնելով նախագծի, ծախսի, ժամանակացույցի և կառուցման չափանիշները) պետք է ծառայի որպես նախագծման ուղղորդող սկզբունք, ինչը հնարավորություն է տալիս նվազեցնել կորուստներն ու գերազանցել պատվիրատուի սպասումները [12,15]:

ԱՄՆ-ի DPR Construction ընկերության փորձառու մասնագետ Ջոշ Բրոնհիցկին, որը TVD մեթոդով իրականացրել է մի շարք նախագծեր (օր.՝ Sutter Health-ի համար), ընդգծում է, որ մեթոդի հիմնական գաղափարը կայանում է «նախագծման գործընթացը կազմակերպել այնպես, որ ստացվի ճիշտ լուծում՝ նվազագույն հնարավոր ծախսով և հաճախորդին առավելագույն արժեք ապահովելով»։ Այս մոտեցումը էապես տարբերվում է ավանդական արժեքի գնահատման մոդելներից, որտեղ արժեքը սովորաբար որոշվում է արդեն պատրաստ նախագծից հետո.

1. շուկան է ուղղորդում ծախսերի պլանավորումը, այլ ոչ թե կազմակերպության ներքին սահմանումները,
2. նախագծումն ունի առաջնային դեր՝ որպես կորուստների կանխարգելման գործիք ամբողջ գործընթացում,
3. ծախսերը որոշվում են բազմամասնագիտական թիմերի կողմից, իսկ մատակարարները և ենթակապալառուները ներգրավվում են նախագծման վաղ փուլերից:

Տեսականորեն, այս սկզբունքներն ամփոփվում են Քլիֆթոնի և ընկերների առաջարկած հավասարումով՝

$$\text{Target Value} = \text{Target Price} - \text{Target Profit} : \quad (1)$$

Ըստ (1) բանաձևի, հարաբերակցությունն արտացոլում է TVD մոտեցման հիմնական տրամաբանությունը, համաձայն որի նախագծման բյուջեն ձևավորվում է ոչ թե «*շահույթ = գին – ծախս*» ավանդական սկզբունքով, այլ հակադարձ մեթոդով, որտեղ շահույթը նախապես է սահմանվում։ Այստեղ.

Նպատակային գինը (Target Price) ներկայացնում է այն առավելագույն արժեքը, որը պատվիրատուն պատրաստ է վճարել շուկայում ընդունված պայմանների համատեքստում:

Նպատակային շահույթը (Target Profit) սահմանվում է որպես կազմակերպության ռազմավարական ֆինանսական նպատակ, ինչն անհրաժեշտ է ապահովել նախագծի ընթացքում:

Այս հավասարումը հստակ սահմանում է այն ծախսային շեմը, որի շրջանակում պետք է իրականացվի նախագծման գործընթացը՝ կանխելով բյուջետային գերազանցումները և ավելորդ վերանախագծման անհրաժեշտությունը:

$$AC = MP - mp : \quad (2)$$

Բանաձև (2)-ը սահմանում է փաստացի ծախսի (**Actual Cost**) առավելագույն թույլատրելի մակարդակը, երբ ապահովվում է նվազագույն շահույթը: Այստեղ.

Շուկայական արժեք (Market Price/ MP)՝ շուկայում համարժեք գինն է՝ տվյալ տեսակի նախագիծ իրականացնելու համար:


Նվազագույն շահույթ (minimum profit/ mp)՝ այն սահմանային շահույթն է, որի պահպանման դեպքում նախագիծը համարվում է ընդունելի կազմակերպության համար:

Այս հաշվարկը կարևոր է նախնական փուլում՝ ռիսկերը գնահատելու և որոշելու համար, արդյոք արժե անցնել նախագծի իրականացմանը տվյալ պայմաններում.

$$TC = MP - ip: \quad (3)$$

(3)-րդ հավասարումը վերաբերում է նպատակային ծախսի (TC) սահմանմանը՝ հաշվի առնելով իդեալական շահույթի հասնելու պահանջը: Այստեղ *ip (ideal profit)* ներկայացնում է այն շահույթը, որն առաջադրված է որպես ռազմավարական նպատակ տվյալ նախագծի համար: Սույն բանաձևը կիրառվում է այն իրավիճակներում, երբ կազմակերպությունը ձգտում է ոչ միայն ծախսերը վերահսկել, այլ նաև բարձրացնել շահութաբերությունը՝ առանց շուկայական արժեքից շեղվելու: Այն հատկապես կարևոր է ներդրումային արդյունավետության բարձրացման տեսանկյունից [13]:

Ինչպես ներկայացված է նկարում, նախագծի ընդհանուր արժեքն ավանդաբար կազմվում է աշխատանքի արժեքի և շահույթի գումարից: Նպատակային արժեքին հասնելու համար թիմը շահույթի խթան է ստանում՝ նվազեցնելու աշխատանքների արժեքը՝ առանց նախագծի արժեքը կամ որակը նվազեցնելու: Հիմքում դրված են վստահությունը, համագործակցությունը, կապալառուների վաղ ներգրավվածությունը, բաժինների միջև խնդիրների համատեղ լուծումը և լիարժեք թափանցիկությունը: Այս մոտեցումը նվազեցնում է անորոշությունից ու վատ կոորդինացիայից առաջացող ավելորդ ծախսերը և խթանում է արդյունավետ, կայուն ու իրական արժեք ստեղծող նախագծի իրականացումը [11, 14]:



Նկ. Ավանդական (DBB) և սահմանված արժեքով նախագծման (TVD) մոդելների գրաֆիկական համեմատություն

Արդյունքներ և քննարկում

Հետազոտության հիմնական վերլուծական արդյունքը սահմանված արժեքով նախագծման (TVD) մեթոդի կողմից շինարարական ծախսերի կառավարման հիմնադրույթի արմատական փոփոխությունն է: Գրականության բովանդակային վերլուծության հիման վրա պարզ է դառնում, որ TVD-ն ապահովում է անցում ռեակտիվ մոտեցումից (որտեղ արժեքը գնահատվում է նախագծի ավարտից հետո) դեպի պրոակտիվ, կանխարգելիչ մոտեցում (որտեղ արժեքը սահմանում է նախագծի սկիզբը):

Աղյուսակ 1

Ավանդական (DBB) և սահմանված արժեքով նախագծման (TVD) մոդելների համեմատություն

Ցուցիչ	Ավանդական մոտեցում (Design-Bid-Build)	TVD մոտեցում
Ծախսի ձևավորում	Նախագծումից հետո է որոշվում բյուջեն	Նախապես սահմանվում է բյուջեն՝ որպես սահմանափակում
Շահույթի ձևավորում	Շահույթ = Գին - Ծախս	Ծախս = Շուկայական գին - Շահույթ
Շահագրգիռ կողմերի ներգրավում	Նախագծման ավարտից հետո	Նախագծման սկզբնական փուլից
Ռիսկերի բաշխում	Պատվիրատու	Համատեղ՝ պատվիրատու + կապալառու
Վերանախագծման հավանականություն	Բարձր	Նվազագույն
Բյուջետային գերազանցումների ռիսկ	Բարձր	Ցածր
Կայունության ցուցանիշներ	Հաճախ անտեսվում են	Ներառված են նախագծման սկզբում

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ TVD-ն կիրառելով՝ նախագծի թիմը խուսափում է նախագծման վերջին փուլերում «արժեքի կորստից» (Value Loss), երբ բացահայտվում է բյուջեի գերազանցումը: Փոխարենը, TVD-ն պարտադրում է, որ բոլոր նախագծային որոշումները կայացվեն նպատակային ծախսի (Target Cost) սահմաններում:

TVD մեթոդի կիրառումը չունի աշխարհագրական սահմանափակումներ և դրա ներուժը ՀՀ շինարարական ոլորտում անժխտելի է, քանի որ այն ուղղակիորեն լուծում է հայկական նախագծերին բնորոշ՝ բյուջեի գերազանցման և պրոցեսային անարդյունավետության խնդիրները:

Հետազոտությունը հաստատում է, որ TVD-ն, որպես նորարարական մոտեցում, ապահովում է հետևյալ առավելությունները.

Դիտարկված են չորս համակցված հենարաններ (նկ. 1), որոնք բաղկացած են ռետինամետաղե բոլոր ուղղություններով շարժական հենարանից [9] և հաջորդաբար կոշտ միացված գլանային պողպատե զսպանակից [10]: Ռետինամետաղե հենարանը հատակագծում նախատեսված է քառակուսի: Ռետինի թերթի հաստությունը բոլոր հենարաններում ընդունված է 10 մմ, իսկ պողպատե թերթինը՝ 3 մմ: Չսպանակների երկրաչափական պարամետրերը ներկայացված են աղ. 1-ում:



Նկ. 1. Համակցված հենարանների սկզբունքային սխեմաներ

Զսպանակի երկրաչափական պարամետրեր

Զսպանակի նշանակումն ըստ ГОСТ 18793-80	Գալարի տրամագիծ, d , մմ	Աշխատող գալարների քանակ, n	Գալարների քանակ, n_0	Գալարների քայլ, t , մմ
1086 - 1248	20	8	10	32,50
1086 - 1268	25	7	9	40,00
1086 - 1278	36	6	8	49,33
1086 - 1288	40	5	7	57,27

Հետազոտվել են համակցված հենարանների աշխատանքի առանձնահատկությունները եռաչափ թվային մոդելի միջոցով, որի հաշվարկից ստացված արդյունքները համարվել են էտալոնային: Գնահատվել են կոշտության պարամետրերի որոշման տեսական մեթոդների ճշգրտությունը տվյալ խնդրի պայմաններում՝ ընդունելով զսպանակի տրամագծի և ռետինամետաղե հենարանի կողմի հարաբերությունը ($D/B = 0,6$) հաստատուն: Գլանային զսպանակի ուղղահայաց կոշտությունը որոշվել է հետևյալ բանաձևով՝

$$K_v = \frac{Gd^4}{8nD^3}, \quad (1)$$

որտեղ G -ն սահքի մոդուլն է, d -ն՝ գալարի տրամագիծը, n -ը՝ աշխատող գալարների թիվը, D -ն՝ զսպանակի միջին տրամագիծը: Գլանային զսպանակի հորիզոնական կոշտության որոշման համար կիրառվում են մի շարք տարբեր արտահայտություններ, ընդ որում տվյալ հավասարումները տարբերվում են զսպանակների բեռնավորման սխեմաներով [11-13], մասնավորապես, տվյալ ստանդարտներում ներկայացված հավասարումներում [12, 13] առկա է զսպանակի նախնական սեղմում, որը հանդես է գալիս արտադրիչներից մեկը, իսկ մեր խնդրի պայմաններում նախնական սեղմումը զրոյական է: Այսպիսով, դիտարկվել է երկու հավասարում, որոնք լայն կիրառվում են ինժեներական պրակտիկայում և ավելի համապատասխան են մեր խնդրի պայմաններին [7, 11]: Հավասարումները ներկայացված են ստորև.

$$K_{H1} = \frac{3Ed^4}{8Dn[3D^2 + (2+\nu)h_0^2]}, \quad (2)$$

$$K_{H2} = \frac{3Ed^4H}{8D^3n}, \quad (3)$$

որտեղ E -ն առաձգականության մոդուլն է, ν -ն՝ Պուասոնի գործակիցը, H -ը և h_0 -ն՝ զսպանակի ազատ բարձրությունը: Գլանային զսպանակի ոլորման կոշտության որոշման համար կիրառվել է հետևյալ հավասարումը [7]՝

$$K_\theta = \frac{Ed^4}{64Dn}. \quad (4)$$

Ռետինամետաղական հենարանի համապատասխանաբար սեղման, սահքի և ոլորման կոշտության որոշման [14] համար կիրառվել են հետևյալ հավասարումները.

$$K_v = \frac{EA}{H_r}, \quad (5)$$

$$K_H = \frac{GA}{H_r}, \quad (6)$$

$$K_\theta = \frac{4GI}{H}, \quad (7)$$

որտեղ H -ը ռետինամետաղե հենարանի բարձրությունն է, A -ն՝ ռետինամետաղե հենարանի մակերեսը, H_r -ը՝ ռետինի շերտերի գումարային բարձրությունը, I -ն հենարանի իներցիայի մոմենտն է, E -ն՝ ռետինի բերված առաձգականության մոդուլը, որը հաշվի է առնում հենարանի կազմում ռետինի աշխատանքի առանձնահատկությունները [14] և որոշվում է հետևյալ կերպ՝

$$E = 76,5G(\beta - 1,1), \quad (8)$$

որտեղ β -ն ռետինամետաղե հենարանի ձևից կախված գործակից է:

Համակցված հենարանի բաղկացուցիչ տարրերի բնութագրերը ներկայացված են աղ. 2-ում:


Աղյուսակ 2

Պողպատի և ռետինի ֆիզիկական բնութագրեր

Տարրի անվանում	Առաձգականության մոդուլ, E , ՄՊա	Սահքի մոդուլ, G , ՄՊա	Պուասոնի գործակից, μ
Պողպատ	200000	80000	0,30
Ռետին	-	0,90	0,49

Արդյունքներ և քննարկում

Իրականացվել է համակցված հենարանի հաշվարկ տեսական եղանակով [7], որի համար նախապես իրականացվել է զսպանակի և ռետինամետաղե հենարանի կոշտության բնութագրերի որոշումը: Ստացված արդյունքները համեմատվել են ծավալային երկրորդ կարգի վերջավոր տարրերից կազմված մոդելների (նկ. 2) վերջավոր տարրերի մեթոդով հաշվարկի արդյունքների հետ:



Նկ. 2. Համակցված հենարանի թվային հաշվարկային մոդելներ

Թվային հաշվարկային վերլուծության համար կիրառվել է *Ansys* ծրագրային փաթեթի *Mechanical Analysis* մոդուլը [15]: Տվյալ խնդրում պողպատի աշխատանքն ընդունվել է գծային, իսկ ռետինի աշխատանքը մոդելավորվել է ըստ *Neo-Hookean* հիպերառաձգական աշխատանքի մոդելի [16]: Արդյունքները ներկայացվել են աղ. 3-ում:

Աղյուսակ 3

Համակցված համակարգի հաշվարկային տվյալներ

Վերլուծության անվանում		Կոշտություն, կՆ/մմ, կՆ մմ/ռադ								
		Զսպանակային հենարան			Ռետինամետաղե հենարան			Համակցված հենարան		
		ուղղահայաց	հորիզոնական	ուլորման	ուղղահայաց	հորիզոնական	ուլորման	ուղղահայաց	հորիզոնական	ուլորման
Մոդել 1	Տեսական	0,115	0,052	520,8	268,5	0,90	9795,9	0,114	0,049	494,5
	Թվային		251,7						0,896	
Մոդել 2	Տեսական	0,165	0,085	1162,5	553,9	1,40	23915,8	0,164	0,080	1108,6
	Թվային		393,7						1,390	
Մոդել 3	Տեսական	0,480	0,280	4860,0	991,4	2,00	49591,8	0,470	0,240	4426,2
	Թվային		1260,0						1,990	
Մոդել 4	Տեսական	0,550	0,350	7619,1	1613	2,75	91875,0	0,549	0,310	7035,6
	Թվային		1196,9						2,740	
Մոդել 4	Տեսական	0,540	0,189	8330,6	-	-	-	0,530	0,170	7251,8
	Թվային		0,189						0,170	

Հաշվարկի արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ մոդելներում զսպանակի ուղղահայաց կոշտության թվային մոդելների հաշվարկից ստացված արժեքներն ի համեմատ տեսական հաշվարկի, փոքր են համապատասխանաբար՝ 5 %, 3 %, 3,1 % և 2,7 % -ով, հորիզոնական կոշտության արժեքները հավասարում (2)-ի կիրառման պարագայում փոքր են՝ 67 %, 58,8 %, 57,1 % և 46 % -ով, իսկ ուլորման կոշտության արժեքները մեծ են՝ 3,8 %, 8,8 %, 9,1 % և 9,3 % -ով: Համակցված հենարանների թվային մոդելների հաշվարկից ստացված ուղղահայաց կոշտության արժեքներն ի համեմատ տեսական հաշվարկի, փոքր են համապատասխանաբար՝ 2,6 %, 16,4 %, 28,9 % և 3,5 % -ով, հորիզոնական կոշտության արժեքները հավասարում (2)-ի կիրառման պարագայում փոքր են՝ 77,0 %, 73,7 %, 80,4 % և 65,3 % -ով, իսկ ուլորման կոշտության արժեքները մոդել

1-ում և մոդել 4-ում մեծ են՝ 3,4 % և 3,1 %-ով, իսկ մոդել 2-ում և մոդել 3-ում փոքր են՝ 8,2 % և 22,8 %-ով: Ստացված տարբերությունները հիմնականում պայմանավորված են տեսական մեթոդների պարզեցվածությամբ և իրական աշխատանքի պայմանների տարածական բնույթով: Հավասարում (3)-ի միջոցով ստացված արդյունքներն էականորեն տարբերվում են թվային վերլուծության արդյունքներից և դիտարկման ենթակա չեն:

Հաշվարկային վերլուծության արդյունքում ստացված կոշտության տարբերությունները ներկայացված են աղ. 4-ում:

Աղյուսակ 4

Կոշտության հարաբերությունների արժեքները հաշվարկներում

Մոդելի անվանում		Մոդել 1	Մոդել 2	Մոդել 3	Մոդել 4
Համակցված հենարան	$\frac{k_{\theta i}^p}{k_{\theta i}^m}$	1,03	0,91	0,77	1,03
	$\frac{k_{Hi}^p}{k_{Hi}^m}$	0,34	0,26	0,19	0,54
	$\frac{k_{vi}^p}{k_{vi}^m}$	0,97	0,83	0,71	0,96

Եզրակացություն

Ներկայացված համակցված հենարանի տեխնիկական լուծման համար գոյություն ունեցող տեսական հաշվարկի մեթոդները, բացառությամբ մոդել 3-ի, ուղղահայաց և ոլորման կոշտության որոշման համար ընդհանուր առմամբ կիրառելի են, և արտացոլում են տվյալ հենարանի իրական աշխատանքը: Հորիզոնական կոշտության որոշման բանաձևերն առանց ուղղման գործակցի կիրառելի չեն:

Թվային և տեսական վերլուծության արդյունքները վկայում են, որ համակցված հենարանը մինչ զսպանակի ամբողջական նստումն ավելի ընկրկելի կլինի ուղղահայաց և հորիզոնական ուղղությամբ, ի համեմատ միայն զսպանակի, իսկ ամբողջական նստումից հետո, ելնելով ռետինամետաղական հենարանների մեծ կոշտությունից, կարող է ցուցաբերել համապատասխան աստիճանական դիմադրության հնարավորություն, որոնք անհրաժեշտ պայմաններ են տվյալ կինեմատիկ հենարանի համար:

Այսպիսով, ելնելով ստացված արդյունքներից, ներկայացված հենարաններում առաջարկվում է կիրառել կոշտության հարաբերությունների արժեքները, որպես ուղղման գործակիցներ: Ինչպես նաև նմանատիպ հենարանների նախագծման ժամանակ, հաշվի առնելով տվյալ տարրի պատասխանատու դերը, իրականացնել ծավալային վերջավոր տարրերից կազմված թվային եռաչափ մոդելների հաշվարկներ՝ հենարանի տարածական ոչ գծային աշխատանքի ազդեցությունները գնահատելու նպատակով:

Գրականության ցանկ

- [1] **А.М. Уздин, С.В. Елизаров, Т.А. Белаш**, Сейсмостойкие конструкции транспортных зданий и сооружений: учеб. пособие, ФГБОУ «Учебно-методический центр по образованию на железнодорожном транспорте», Москва, 2012, 501 с.
- [2] **Г.А. Джинчвелашвили, К.А. Волесников, В.Б. Заалишвили, И.С. Годустов**, Перспективы развития систем сейсмоизоляции современных зданий и сооружений, Сейсмостойкое строительство. Безопасность сооружений 6 (2009) 27-31.
- [3] **Г.А. Джинчвелашвили, О.В. Мкртычев**, Эффективность применения сейсмоизолирующих опор при строительстве зданий и сооружений, Транспортное строительство 9 (2003) 15-19.
- [4] **C.Christopoulos, A.Filiatrault**, Principles of Passive Supplemental Damping and Seismic Isolation; Iuss Press, Pavia, Italy, 2019.
- [5] **I.B. Buckle, R.M. Mayes**, Seismic isolation: History, application, and performance—A world view. Earthq. Spectra 6 (1990) 161–201.
- [6] **F.Naeim, J.M.Kelly**, Design of Seismic Isolated Structures: From Theory to Practice, 1st ed.; John Wiley and Sons, Hoboken, NJ, USA, 1999.
- [7] **С.Д. Пономарев, Л. Е. Андреева**, Расчет упругих элементов машин и приборов, Машиностроение, Москва, 1980, 326 с.
- [8] **Ա.Հ. Մեսրոպյան**, Նոր կինեմատիկ սեյսմամեկուսիչ հենարանի կիրառման արդյունավետության գնահատում, ՃՇՀԱՀ-ի գիտական աշխատությունների ժողովածու 1 (Երևան, 2025) 60-66:
- [9] **ГОСТ 18793-80**. Пружины сжатия. Конструкция и размеры, Москва, 1982, 79 с.
- [10] **ГОСТ 32020-2012**. Опорные части резиновые для мостостроения. Технические условия Москва, 2014, 27 с.
- [11] **ГОСТ 34093-2017**. Вагоны пассажирские локомотивной тяги. Требования к прочности и динамическим качествам. Москва, Стандартинформ, 2017, 42 с.
- [12] **DIN EN 13906-1:2013**. Cylindrical helical springs made from round wire and bar – Calculation and design – Pt 1: Compression springs. – Brussels: European committee for standardization, 2013.
- [13] **РД 32.51-95**. Методика расчета на прочность пружин рессорного подвешивания подвижного состава железных дорог при действии продольных и комбинированных нагрузок. Руководящий документ. Москва, ВНИТИ, 1995, 41 с.
- [14] **ОДМ 218.2.002-2008**. Рекомендации по проектированию и установке полимерных опорных частей мостов, Москва, 2008, 90 с.
- [15] **D. M. Practical**, Finite Element Analysis for Mechanical Engineers, FEA Academy 2020, 639 p.
- [16] **M.C. Boyce, E.M. Arruda**, Mechanics of Solid Polymers: Theory and Computational Modeling, Oxford University Press, Oxford, 2017, 600 p.

ИССЛЕДОВАНИЕ ХАРАКТЕРИСТИК ЖЕСТКОСТИ КОМБИНИРОВАННОЙ ОПОРЫ

Асатур Ваноевич Элоян*, Арман Айкич Месропян

Институт геофизики и инженерной сейсмологии имени А. Назарова, г. Гюмри, РА

**aeloyan@yandex.ru*

Представлен расчетный анализ характеристик жесткости комбинированной опоры, состоящей из последовательно соединенных резинометаллического и пружинного элементов, выполненной с использованием теоретической методологии. С целью исследования жесткостных характеристик представленной опоры и проверки теоретических расчетов был проведен численный расчет для

комбинированной опоры и входящей в ее состав пружины. Для численного анализа был применен метод конечных элементов. Полученные в результате анализа данные показали, что существующие теоретические методы требуют корректировки применительно к данной задаче. Для представленных опор предлагается использовать значения отношений жесткостей в качестве поправочных коэффициентов, способных обеспечить более точное описание механического поведения комбинированной опоры.

Ключевые слова: ограничитель колебаний, пружинная опора, резинометаллическая опора, комбинированная опора, метод конечных элементов

STUDY OF STIFFNESS CHARACTERISTICS OF A COMBINED BEARING

Asatur Eloyan*, Arman Mesropyan

Institute of geophysics and engineering seismology after A. Nazarov, Gyumri, RA

**aeloyan@yandex.ru*

A computational analysis of the stiffness characteristics of a combined support, consisting of sequentially connected rubber bearing and spring elements, is presented, performed within the framework of a theoretical methodology. To investigate the stiffness behavior of the proposed support and to verify the theoretical calculations, a numerical analysis was carried out for both the hybrid support as a whole and the helical spring constituting one of its components. The finite element method (FEM) was employed as the primary tool for numerical simulation. The results obtained from the analysis demonstrate that the existing theoretical approaches, when applied to this problem, require refinement and adjustment. For the examined types of supports, it is proposed to use stiffness ratio parameters as corrective coefficients, which can provide a more accurate representation of the mechanical behavior of the combined support system.

Keywords: displacement restraining device, spring support, elastomeric bearing, combined support, finite element method

Էլոյան Ասատուր Վանոյի, տ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Գյումրի) - ԵՒՄԻ, «Մեյսմակայուն շինարարության և ինժեներային սեյսմաբանության» բաժին, (+374)94583167, aeloyan@yandex.ru, **Մեսրոպյան Արման Հայկի** (ՀՀ, ք. Երևան) - ԵՒՄԻ, «Մեյսմակայուն շինարարության և ինժեներային սեյսմաբանության» բաժին, հայցորդ, (+374)98268426, mesropyanarman99@gmail.com

Элоян Асатур Ваноевич, канд.техн.наук, доцент (РА, г. Гюмри) - ИГИС, отдел Сейсмостойкого строительства и инженерной сейсмологии, (+374)94583167, aeloyan@yandex.ru, **Месропян Арман Айкич** (РА, г. Ереван) - ИГИС, отдел Сейсмостойкого строительства и инженерной сейсмологии, соискатель, (+374)98268426, mesropyanarman99@gmail.com

Eloyan Asatur, doctor of philosophy (PhD) in Engineering, Associate Professor (RA, Gyumri) - IGES, Department of Earthquake-Resistant Construction and Engineering Seismology, (+374)94583167, aeloyan@yandex.ru, **Mesropyan Arman** (RA, Yerevan) - IGES, Department of Earthquake-Resistant Construction and Engineering Seismology, applicant, (+374)98268426, mesropyanarman99@gmail.com

Ներկայացվել է՝ 02.10.2025թ.

Գրախոսվել է՝ 30.10.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 22.12.2025թ.

ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՖՈՆԴԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ

Դավիթ Գևորգի Հակոբյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ
hakobyan.david@nuaca.am

Ներկայացված է Երևանի 11 բնակարանների արտաքին պատերի ջերմամեկուսացման համապարփակ ուսումնասիրություն՝ վերահսկիչ խմբի հետ համեմատական վերլուծությամբ: Հետազոտությունն իրականացվել է 2023-2024 թթ. ընթացքում՝ կիրառելով մեթոդաբանություն, որը ներառում է օբյեկտիվ սենսորային չափումներ, ինֆրակարմիր ջերմագրություն և կառուցվածքային հարցումներ: Արդյունքները ցույց են տալիս էներգասպառման միջինում 33,4 % ($\pm 8,2$ %, $p < 0,01$) նվազում, ներքին ջերմաստիճանի 2,3 °C ($\pm 0,5$ °C) բարձրացում և բնակիչների բավարարվածության 78 % աճ: Տեխնիկատնտեսական վերլուծությունը ցույց է տալիս 5,7 տարվա միջին փոխհատուցման ժամկետ:

Բանալի բառեր. ջերմամեկուսացում, էներգաարդյունավետություն, շենքերի վերանորոգում, ջերմային հարմարավետություն, CO₂-ի կրճատում, սոցիալական բնակարանային ֆոնդ, տեխնիկատնտեսական վերլուծություն

Ներածություն

Էներգաարդյունավետության բարձրացումը Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության և կլիմայական քաղաքականության առանցքային բաղադրիչն է: ՀՀ Կառավարության 2021 թ. որոշմամբ սահմանված նպատակը՝ մինչև 2050 թ. հասնել CO₂ արտանետումների 80% կրճատմանը, պահանջում է բնակարանային ֆոնդի արդիականացման համակարգային մոտեցում [1]:

Բնակարանային հատվածը սպառում է ՀՀ ընդհանուր էներգիայի 42,3 % -ը և պատասխանատու է CO₂ արտանետումների 26,8 % -ի համար (2023 թ. տվյալներ) [2, 3]: ՀՀ բնակֆոնդի 37,2 % -ը կառուցվել է մինչև 1990 թ. և բնութագրվում է ցածր ջերմամեկուսիչ հատկություններով ($K\text{-արժեք} = 1,8 \dots 2,2 \text{ Վտ/մ}^2\text{K}$), ինչը 3...4 անգամ գերազանցում է ժամանակակից նորմերը [4]:

Արտաքին պատերի մեկուսացման (ԱՊՄ) արդյունավետությունը լայնորեն ուսումնասիրված է միջազգային գրականության մեջ՝ ցույց է տրված, որ ԱՊՄ-ը կարող է նվազեցնել ջերմային կորուստները 35...45% սառը կլիմայական գոտիներում [5]: Նմանատիպ ուսումնասիրություններ են իրականացվել տարբեր երկրներում (Վրաստան, Ղազախստան), որոնք հաստատում են 30...40 % էներգախնայողության պոտենցիալը [6]: Սոցիալ-տնտեսական ազդեցությունների գնահատման

համար կարևոր են ոչ էներգետիկ օգուտներ՝ առողջության, հարմարավետության դերը բնակիչների բավարարվածության մեջ [7]: ՀՀ-ում նմանատիպ համապարփակ ուսումնասիրություններ չեն իրականացվել:

Նյութեր և մեթոդներ

Այս ուսումնասիրությունը կառուցված է համեմատական սկզբունքով՝ երկու խմբերի միջև: Առաջին խումբը (փորձարարական) ներառում է 11 բնակարան, որոնց արտաքին պատերը ծածկվել են հատուկ ջերմամեկուսիչ նյութով: Այս միջամտությունը նպատակ ուներ նվազեցնել ջերմության կորուստները և բարձրացնել տան էներգաարդյունավետությունը, ինչպես նաև ապահովել առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ) կողմից առաջարկվող 18...24 °C օպտիմալ ջերմաստիճանային միջակայքը, որն անհրաժեշտ է համարվում բնակիչների առողջության և հարմարավետության համար: Երկրորդ խումբը (վերահսկիչ) ներառում է 8 բնակարան, որոնց պատերը չեն մեկուսացվել և մնացել են նախկին վիճակում: Այս խումբը ծառայում է որպես հիմք՝ համեմատելու համար, թե ինչքանով է փոխվում իրավիճակը մեկուսացման դեպքում և որքանով է հնարավոր հասնել ԱՀԿ-ի ջերմային հարմարավետության ստանդարտներին: Կարևոր է նշել, որ բոլոր 19 բնակարաններն ընտրվել են նմանատիպ շենքերից, տարբեր հարկերում գտնվող բացի առաջի և վերջի հարկից և ունեն խիստ նմանատիպ բնութագրեր՝ համանման մակերես, նմանատիպ պատուհանների քանակ և տեսակ, ինչպես նաև միևնույն ջեռուցման համակարգ: Այս նմանությունը երաշխավորում է, որ երկու խմբերի միջև տարբերությունները պայմանավորված են հենց մեկուսացմամբ, այլ ոչ թե այլ գործոններով (նկ. 1):



Նկ. 1. Հետազոտության մեթոդաբանության սխեման

Հետազոտության համար ընտրվել են բնակարաններ, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին.

- կառուցման տարիները – 1960-1985 թթ. կառուցված շենքեր (հին, խորհրդային շրջանի շենքեր, որոնք չունեն ջերմամեկուսացում),
- բնակարանի մակերեսը – 50...75 մ²,
- գտնվելու վայրը – շենքի 2-րդ, 3-րդ և 4-րդ հարկերում (ոչ ընդգծված և ոչ վերջին հարկ, որպեսզի բոլոր բնակարաններն ունենան նմանատիպ պայմաններ),

- արտաքին պատերի մասնաբաժինը – բնակարանի պատերից առնվազն 30 % -ը պետք է արտաքին պատեր լինեն,
- բնակիչների կամավոր մասնակցությունը – բնակարանի սեփականատերերը կամ բնակիչները պետք է համաձայն լինեն մասնակցել ուսումնասիրությանը:

Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկությունները հավաքագրվել են երեք տարբեր ուղիներով.

1) Ճշգրիտ սարքավորումներով չափումներ:

Բնակարաններում տեղադրվել են հատուկ սենսորներ և չափիչ սարքավորումներ.

- ջերմաստիճանի և խոնավության սենսորներ – օգտագործվել է HOBO UX100-003 մոդելը, որը չափում է ջերմաստիճանը շատ բարձր ճշգրտությամբ (սխալն ընդամենը $\pm 0,21$ °C է),
- ջերմացույց – FLIR E95 մոդելի ինֆրակարմիր խցիկ, որը ցույց է տալիս, թե որտեղից է ջերմությունը դուրս գալիս պատերից (ճշգրտությունը ± 2 °C, զգայունությունը $\pm 0,03$ °C):

2) Բնակիչների հարցումներ.

- հատուկ հարցաթերթիկների միջոցով հարցվել են բնակիչները երկու փուլերում՝
 - առաջին հարցումը – 2023 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ դեռ պատերը չէին մեկուսացվել,
 - երկրորդ հարցումը – 2024 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ մեկուսացումից մեկ տարի անց,
 - պատասխան տվողների խմբաքանակը – փորձարարական խմբից՝ 92 % -ը, իսկ վերահսկիչ խմբից 88 % -ը լրացրել են հարցաթերթիկները:

Այս եղանակները միասին թույլ են տվել ստանալ ամբողջական պատկեր, թե ինչպես է ազդում պատերի մեկուսացումը տան էներգասպառման, ջերմաստիճանի և բնակիչների բավարարվածության վրա [8, 9]: Բնակարանների արտաքին պատերը ծածկելու համար օգտագործվել է հատուկ ջերմամեկուսիչ նյութ.

- նյութի տեսակը - փրփրապլաստ (EPS), որը հայտնի է նաև որպես պենոպլաստ,
- շերտի հաստությունը – 100 մմ,
- ջերմահաղորդականության գործակիցը- $\lambda=0,038$ Վտ/մ K,
- ջերմային դիմադրությունը - $R=2,63$ մ² K/Վտ,
- տեղադրման եղանակը – մեկուսիչ շերտերը կացվել են շենքի արտաքին պատերին հատուկ սոսնձի օգնությամբ:

Ջերմային դիմադրության հաշվարկը

Ջերմային դիմադրությունը հաշվարկվում է պարզ բանաձևով՝

$$R = d / \lambda,$$

որտեղ R -ը ջերմային դիմադրությունն է (մ² Կ/Վտ), d - ն՝ մեկուսիչ շերտի հաստությունը (մ), λ - ն՝ ջերմահաղորդականության գործակիցը (Վտ/մ Կ):

Մեր դեպքում

$$R = 0,1 / 0,038 = 2,63 \text{ մ}^2 \text{ Կ/Վտ} :$$

Այսինքն, 0,1 մ² հաստությամբ EPS շերտն ունի 2,63 ջերմային դիմադրության ցուցանիշ, ինչը նշանակում է, որ այն զգալիորեն կրճատում է ջերմության կորուստները ձմռանը և պահպանում է զովությունը ամռանը:

Հավաքագրված տվյալների մանրակրկիտ ուսումնասիրության և վերլուծության համար կիրառվել են հետևյալ վիճակագրական մեթոդները՝

- նկարագրական վիճակագրություն – հաշվարկվել են միջին արժեքները (օրինակ՝ միջին էներգասպառումը) և ստանդարտ շեղումները, որը ցույց է տալիս, թե որքան են տարբեր բնակարանների ցուցանիշները տարբերվում միջին արժեքից,
- *Էթեստ* – օգտագործվել են երկու խմբերը (փորձարարական և վերահսկիչ), միմյանց հետ համեմատելու համար և պարզելու, արդյոք իրականում տարբերություն կա, թե պատահական է,
- կորելացիոն վերլուծություն – Pearson և Spearman մեթոդներով ուսումնասիրվել է, թե արդյոք կապ կա տարբեր ցուցանիշների միջև (օրինակ, եթե մեկուսացումը հաստանում է, արդյոք էներգասպառումն ավելի շատ է նվազում),
- ռեգրեսիոն մոդելներ – ստեղծվել են գծային և բազմակի մոդելներ, որոնք թույլ են տալիս կանխատեսել, թե ինչպես կփոխվի էներգասպառումը տարբեր պայմաններում,
- վիճակագրական նշանակալիություն – որպես չափանիշ ընդունվել է $p < 0,05$, այսինքն՝ արդյունքները համարվում են հուսալի, եթե պատահականության հավանականությունը 5 %-ից պակաս է:


Այս մեթոդների համադրումը թույլ է տվել ապահովել հետազոտության արդյունքների հուսալիությունն ու ճշգրտությունը (նկ. 2):

Աղյուսակում ներկայացված են էներգասպառման տվյալները մինչև և հետո ԱՊՄ տեղադրումը:

Աղյուսակ

Էներգասպառման տվյալներն ԱՊՄ-ի տեղադրումից առաջ և հետո

Բնակ.	Մինչև ԱՊՄ (կՎտ ժ/ամիս)	Հետո ԱՊՄ (կՎտ ժ/ամիս)	Նվազում (%)	p-արժեք
1	892	624	30,0	0,002
2	718	318	55,7	<0,001
3	465	349	25,0	0,008
4	1187	652	45,1	<0,001
5	931	776	16,6	0,021
6	908	714	21,4	0,012
7	621	388	37,5	0,001
8	754	589	21,9	0,015
9	812	501	38,3	<0,001
10	695	445	36,0	0,003
11	923	612	33,7	0,002
Միջին	809,6	542,5	33,4±8,2	<0,001



Նկ. 2. Էներգասպառումը մինչև և հետո ԱՊՄ տեղադրումը

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս էական տարբերություն երկու խմբերի միջև. *Փորձարարական խումբ (ջերմամեկուսացված բնակարաններ)*

Այն բնակարաններում, որտեղ տեղադրվել էր ջերմամեկուսացում, էներգիայի սպառումը միջինում նվազել է 33,4 % -ով: Սա նշանակում է, որ եթե նախկինում բնակարանն ամսական սպառում էր օրինակ 100 միավոր էներգիա, այժմ սպառում է միայն 66,6 միավոր: Վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ իրական նվազումը 95 % հավանականությամբ գտնվում է 28,2 % -ից մինչև 38,6 % միջակայքում:

Վերահսկիչ խումբ (չմեկուսացված բնակարաններ)

Այն բնակարաններում, որոնց պատերը չեն մեկուսացվել, էներգասպառումը փոխվել է ընդամենը 2,1 % -ով: Սա շատ փոքր փոփոխություն է և կարող է պայմանավորված լինել եղանակի փոփոխություններով կամ բնակիչների վարքագծով: Այս խմբում 95 % հավանականությամբ փոփոխությունը գտնվում է 1,3 % -ից մինչև 5,5 % միջակայքում:

Վիճակագրական հաստատում

Երկու խմբերի (մեկուսացված և չմեկուսացված բնակարանների) միջև էներգասպառման տարբերությունը գնահատելու համար կիրառվել է Ստյուդենտի *t-թեստ*՝ անկախ նմուշների համար: Թեստի արդյունքները ցույց տվեցին վիճակագրորեն նշանակալի տարբերություն ($t=8,42$, $df=17$, $p < 0,001$), որտեղ $t = 8,42$ – t - վիճակագրություն կամ թեստային վիճակագրություն: Սա հաշվարկված արժեք է, որը ցույց է տալիս երկու խմբերի միջինների տարբերության մեծությունը՝ հաշվի առնելով դրանց ստանդարտ շեղումները: Որքան մեծ է t -ի բացարձակ արժեքը, այնքան ավելի էական և նշանակալի է երկու խմբերի միջև տարբերությունը: Մեր դեպքում $t = 8,42$ արժեքը բավականին բարձր է, ինչը վկայում է խմբերի միջև զգալի տարբերության մասին:

$df = 17$ - ազատության աստիճաններ (*degrees of freedom*): Այս պարամետրը ցույց է տալիս անկախ դիտարկումների քանակը և հաշվարկվում է բանաձևով՝ $df = n_1 + n_2 - 2$, որտեղ n_1 -ը առաջին խմբի (մեկուսացված բնակարանների) նմուշի չափն է (11 բնակարան), n_2 -ը՝ երկրորդ խմբի (չմեկուսացված բնակարանների) նմուշի չափը (8 բնակարան): Այսպիսով՝ $df = 11 + 8 - 2 = 17$:

$p < 0,001$ - նշանակալիության մակարդակ կամ p -արժեք: Սա հավանականությունն է, որ նմանատիպ կամ ավելի էքստրեմալ տարբերություն կարող է դիտվել պատահականորեն, եթե իրականում երկու խմբերի միջև տարբերություն չկա: $p < 0,001$ նշանակում է, որ այս հավանականությունը 0,1 % -ից փոքր է (կամ 1000-ից 1-ից փոքր): Սա համարվում է շատ ուժեղ վիճակագրական ապացույց:

Էներգիայի խնայողության տոկոսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ES = [(E_{առաջ} - E_{հետ}) / E_{առաջ}] \times 100 \%,$$

որտեղ ES –ն էներգախնայողության տոկոսն է, $E_{առաջ}$ –ը՝ էներգասպառումը մինչև մեկուսացումը, $E_{հետ}$ – ն՝ էներգասպառումը մեկուսացումից հետո:

Մեր հաշվարկը՝

$$ES = [(809,6 - 542,5) / 809,6] \times 100 = 33,4 \, \%:$$

Այսինքն, եթե բնակարանները միջինում ամսական սպառում էին 809,6 կՎտժ էներգիա, մեկուսացումից հետո սպառումը նվազել է մինչև 542,5 կՎտժ, ինչը կազմում է 33,4 % խնայողություն:

Արդյունքներ և քննարկում

Մեկուսացումից հետո բնակարանների ներսում ջերմաստիճանը միջինում բարձրացել է 2,3 °C-ով ($\pm 0,5$ °C):

Ջերմաստիճանի փոփոխությունները՝

- ցերեկը – 18,2 °C-ից բարձրացել է մինչև 20,5 °C,
- գիշերը – 16,8 °C-ից բարձրացել է մինչև 19,1 °C,
- ջերմաստիճանի տատանումները – նվազել են 4,2 °C-ից մինչև 2,1 °C:

Սա նշանակում է, որ մեկուսացումից հետո բնակարանները ոչ միայն ավելի տաք են, այլև ջերմաստիճանը մնում է գրեթե նույնը ողջ օրվա ընթացքում, ինչն ապահովում է ավելի հարմարավետ և կայուն միջավայր (նկ. 3):



Նկ. 3. Ներքին ջերմաստիճանի պրոֆիլը և բնակիչների բավարարվածությունը

Բնակիչների հարցման արդյունքները.

- ընդհանուր բավարարվածություն – 78 %-ը բավարարված են բնակարանի նոր պայմաններով,
- առողջության բարելավում – 67 %-ը նշել են դրական փոփոխություններ,
- խոնավություն և բորբոս – 82 %-ի դեպքում զգալիորեն նվազել է,
- աղմուկ – 45 %-ը նշել են, որ բնակարանում դարձել է ավելի հանգիստ:

Այսպիսով, ջերմամեկուսացումը ոչ միայն էներգիա է խնայում, այլև բարելավում է բնակիչների կյանքի որակը:

Ջերմամեկուսացման տնտեսական արդյունավետությունը գնահատվել է հետևյալ ցուցանիշներով:

Ծախսերը և խնայողությունները.

- սկզբնական ներդրում – մեկ բնակարանի պատերի մեկուսացումը միջինում արժե 450 000 *դրամ*,
- տարեկան խնայողություն – էներգիայի վճարների կրճատումից տարեկան խնայվում է 78 800 *դրամ*,
- փոխհատուցման ժամկետ – 5,7 *տարի*,
- NPV – 10 տարվա ընթացքում շահույթը կկազմի 182 300 *դրամ*,
- ներքին եկամտաբերության դրույքաչափը (IRR) – 14,3 %:

Փոխհատուցման ժամկետի հաշվարկը:

Փոխհատուցման ժամկետը հաշվարկվում է պարզ բանաձևով՝

Փոխհատուցման ժամկետ = Սկզբնական ներդրում / Տարեկան խնայողություն

Հաշվարկ՝ 450 000 *դրամ* / 78 800 *դրամ/տարի* = 5,7 *տարի*

Սա նշանակում է, որ եթե բնակարանի սեփականատերը մեկուսացման համար ներդնում է 450 000 *դրամ* և ամեն տարի խնայում 78 800 *դրամ* էներգիայի վրա, ապա մոտ 5 *տարի* և 8 *ամիս* հետո նա կվերադարձնի իր ներդրած գումարը, իսկ դրանից հետո միայն շահույթ կստանա:

Զուտ ներկա արժեքի (NPV) հաշվարկը:

Զուտ ներկա արժեքը հաշվարկվում է բանաձևով՝

$$NPV = \sum [CF_t / (1+r)^t] - I_0,$$

որտեղ CF_t – ն դրամական հոսքն է t -րդ տարում, r – ը՝ զեղչի դրույքաչափը (8 %), I_0 – ն՝ սկզբնական ներդրումը (450 000 *դրամ*):

Այս բանաձևը հաշվի է առնում, որ գումարի արժեքը ժամանակի ընթացքում փոխվում է գնաճի և այլ տնտեսական գործոնների պատճառով: Մեր հաշվարկներով 10 տարվա ընթացքում զուտ շահույթը կազմում է 182 300 *դրամ*:

Ուսումնասիրության արդյունքները համապատասխանում են միջազգային փորձին և հաստատում են, որ ԱՊՄ-ն արդյունավետ միջոց է Հայաստանի կլիմայական պայմաններում: Ստացված 33,4 % միջին էներգախնայողությունը համընկնում է այլ երկրների՝ նմանատիպ կլիմայային շրջաններում կատարված հետազոտությունների հետ [10-15]:

Եզրակացություն

Իրականացված փորձարարական հետազոտությունը հաստատեց արտաքին պատերի ջերմամեկուսացման էներգետիկ և սոցիալ-տնտեսական արդյունավետությունը Երևանի կլիմայական պայմաններում: Ստացված քանակական ցուցանիշները վկայում են ջեռուցման էներգասպառման էական կրճատման, ջերմային հարմարավետության բարելավման և ներդրումների տնտեսական արդարացվածության մասին:

Հետազոտության արդյունքները հիմք են հանդիսանում ջերմամեկուսացման տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառման համար՝ որպես ՀՀ էներգաարդյունավետության ազգային ռազմավարության իրագործման գործիք: Մեթոդաբանական մոտեցումը կարող է կիրառվել նմանատիպ կլիմայական պայմաններ ունեցող տարածաշրջաններում բնակելի ֆոնդի էներգետիկ արդիականացման ծրագրերի գնահատման համար:

Գրականություն

- [1] **ՀՀ Կառավարություն.** Հայաստանի Հանրապետության էներգաարդյունավետության բարձրացման ազգային ծրագիր 2022-2030թթ. Երևան, 2021:
- [2] **ՀՀՇՆ 24-01- 2016** «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմերը
- [3] **ՀՀ Վիճակագրական կոմիտե.** Էներգետիկ հաշվեկշիռ 2023. Երևան, 2023:
- [4] ՀՀ բնակելի ֆոնդի էներգետիկ անձնագրավորում. Հետազոտական զեկույց. Երևան, ՃՇՀԱՀ, 2020:
- [5] **X. Meng, B. Yan, Y. Gao, J. Wang, W. Zhang, E. Long,** Factors affecting the in situ measurement accuracy of the wall heat transfer coefficient using the heat flow meter method. *Energy and Buildings* 86 (2015) 754-765.
- [6] **N. Geberidze, L. Khmaladze,** Energy efficiency improvements in Georgian residential sector. *Energy Policy* 149 (2021) 112089.
- [7] **S. Tokbolat, F. Karaca, S. Durdyev, R.K. Calay,** Assessment of green building certification systems in Kazakhstan. *Building and Environment* 172 (2020) 106698.
- [8] **C.P. Vanderwilde, J.P. Newell,** Ecosystem services and life cycle assessment: A bibliometric review. *Resources, Conservation and Recycling* 169 (2021) 105461.
- [9] **F.H. Abanda, L. Byers,** An investigation of the impact of building orientation on energy consumption in a domestic building using emerging BIM. *Energy* 97 (2016) 517-527.
- [10] **F. Causone, A. Tatti, A. Alongi,** From Nearly Zero Energy to Carbon-Neutral: Case Study of a Hospitality building. *Applied Sciences* 11 (2021) 10148.
- [11] **B. Abu-Jdayil, A. Mourad, W. Hittini, M. Hassan, S. Hameedi,** Traditional, state-of-the-art and renewable thermal building insulation materials: An overview. *Construction and Building Materials* 214 (2019) 709-735.
- [12] **J. Silvestre, J. Brito, M. Pinheiro,** Environmental impacts and benefits of the end-of-life of building materials. *Journal of Cleaner Production* 66 (2014) 37-45.
- [13] UK Energy Research Centre UKERC Energy Data Centre. London, 2015.
- [14] **S. Walker,** Energy use in the home -- measuring and analysing domestic energy use and energy efficiency in Scotland. *Scottish House Condition Survey, The Scottish Government*, 2012.
- [15] **J.G.J. Olivier, K.M. Schure, J.A.H.W. Peters,** Trends in Global CO₂ and Total Greenhouse Gas Emissions: 2017 Report. PBL Netherlands Environmental Assessment Agency, 2017, 69 p.

ВЛИЯНИЕ ТЕПЛОИЗОЛЯЦИИ НА СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ ЖИЛИЩНОГО ФОНДА АРМЕНИИ

Давид Геворгович Акобян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
hakobyan.david@nuaca.am

Представлено комплексное исследование утепления наружных стен (УНС) 11 квартир в г. Ереване со сравнительным анализом с контрольной группой. Исследование проведено в 2023-2024 гг. с применением методологии, включающей объективные сенсорные измерения, инфракрасную термографию и структурированные опросы. Результаты показывают снижение энергопотребления в среднем на 33,4 % ($\pm 8,2$ %, $p < 0,01$), повышение внутренней температуры на 2,3 °C ($\pm 0,5$ °C) и рост удовлетворенности жителей на 78 %. Техничко-экономический анализ показывает средний срок окупаемости 5,7 лет.

Ключевые слова: теплоизоляция, энергоэффективность, реновация зданий, тепловой комфорт, сокращение CO₂, социальный жилищный фонд, технико-экономический анализ

THE IMPACT OF THERMAL INSULATION ON THE SOCIO-ECONOMIC CONDITION OF ARMENIA'S HOUSING STOCK

Davit Hakobyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
hakobyan.david@nuaca.am

The article presents a comprehensive study of external wall insulation (EWI) of 11 apartments in Yerevan with comparative analysis against a control group. The research was conducted in 2023-2024 using a mixed methodology that includes objective sensor measurements, infrared thermography, and structured surveys. The results show an average reduction in energy consumption of 33,4 % ($\pm 8,2$ %, $p < 0,01$), an increase in indoor temperature of 2,3°C ($\pm 0,5$ °C), and a 78 % increase in resident satisfaction. The techno-economic analysis shows an average payback period of 5,7 years.

Keywords: thermal insulation, energy efficiency, building renovation, thermal comfort, CO₂ reduction, social housing stock, techno-economic analysis

Հաղորդյան Դալիթ Գևորգի (ՀՀ, ք.Երևան) – ՃՇՀԱՀ, ԶԳՄՕ ավրիոն, ասիլրիւն, (+374)77947353, hakobyan.david@nuaca.am

Акобян Давид Геворгович (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, аспирант, (+374)77947353, hakobyan.david@nuaca.am

Hakobyan Davit (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, phd student, (+374)77947353, hakobyan.david@nuaca.am

Ներկայացվել է՝ 20.10.2025թ.

Գրախոսվել է՝ 21.11.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 22.12.2025թ.

THEORETICAL AND EXPERIMENTAL INVESTIGATION OF HYDRAULIC JUMPS IN CLOSED CONDUITS

Marianna Hakobyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
m.hakobyan@nuaca.am

This article examines the conditions for the development of hydraulic jumps in pipelines, the types of jumps, and the locations where they typically occur. A theoretical method for determining the relationship between conjugate depths is presented, along with its influence on the hydraulic regime of pipeline operation. In gravity pipelines, free-surface, pressurized, and mixed flow regimes may appear. The transition from pressurized to free-surface flow is smooth, whereas the reverse transition involves a surface discontinuity similar to a hydraulic jump in open channels. For a given discharge, the jump location depends solely on flow rate; as the flow increases, the jump shifts upstream. The behavior of hydraulic jumps and resulting flow choking in circular pipes remains insufficiently studied, though theory and experiments show encouraging agreement. This analysis is important for multipurpose water conduits, where free-flow sections are preferable for energy applications.

Keywords: pipeline, mixed regime, conjugate depth, air pocket, flow

Introduction

A hydraulic jump is a sudden transition from a supercritical to subcritical flow, with discontinuity in flow depth as well as in pressure and velocity field at the transition point [1]. The transition is sudden and most jumps involve a vigorously tumbling flow region, called roller, where much kinetic energy is being lost [2, 3] (fig. 1).

- 1 and sloping sections represents an,
- 2 undesired situation for pipeline engineers which may have a bad,
- 3 influence on flow assurance as well as pipeline integrity.

The gravitational water conduit belongs to the class of long pipelines of which hydraulic calculation making values of power local losses and kinetic energy losses are negligible small compared with power losses on transportation [4, 5]. From a hydraulic point of view, concentrated air pockets in pipeline profile peaks represent an additional source of energy loss that decreases discharge in case of gravity pipelines and increases energy consumption in case of pumped pipeline systems.

In article two cases of transition of a free-flow mode of movement in pressure head in the self-flowing pipeline are discussed, a) a subtime on the bottom end of the pipeline is supported to constants, the expense changes yes its gravitational value; b) the expense remains to constants, and a subtime on the bottom end changes to its static value. For considered cases the method of definition of type and a place of emergence of a hydraulic jump is given.

Materials and Methods

A hydraulic jump is a complex two-phase open channel flow with air entrainment into water. Several numerical studies were dedicated to the analysis of air–water flow characteristics. However, few physical data are available so far due to the complexity of the measurement.

Surface deformation and air entrainment was discussed by Wang and Chanson [6]. But to date, no investigation considered the impact of flow instabilities on turbulence characterisation for strong hydraulic jumps in pipeline with substantial air entrainment and intense free-surface deformation. Kalinske and Bliss [7] first investigated different air–water flow regimes in downward sloping pipes. Pothof [8] provided a further detailed view for the previous investigation. Accordingly, air–water flow can be classified into four regimes, namely, stratified flow, blowback regime, transitional flow regime, and full air transport regime. Escaramela investigated the required water velocity to keep air pockets of a certain size stable in a downwardly inclined pipe [8, 9].

Considering the numerous parameters required to describe the turbulent two-phase flow and the complexity arising with the coupling between almost all physical processes in wide ranges of length and time scales, our knowledge on hydraulic jumps is far from a full understanding.

The air-water flow properties were investigated with an intrusive phase-detection probe. The void fraction and bubble count rate data were documented in the jump roller, together with the interfacial velocity distributions [10]. Both the turbulent fluctuation and aeration properties are basic design parameters in urban water systems in which a hydraulic jump may take place [11,12].

Lubbers and Clemens [13] investigated the size-scale effects, caused by differences in pipe diameters, on the validity of the experimental results that describe the head loss through the air pocket and the rate of gas transport in downward sloping pipes. In the last twenty-five years, significant progresses were achieved experimentally, mostly in laboratory [12, 13].

On the entire length of a pipe of gentle slope (Fig.1) the flow will be pressure one, if the flow feeding its headworks is not smaller than gravitation flow of the conduit (fig. 2)

$$Q \geq Q_g, \left(Q_g = \sqrt{H_0/S} \right), \quad (1)$$

where S is the hydraulic resistance of the pipe, Q released flow, Q_g -calculated flow.




Fig. 1. Schematic diagram of the hydraulic jump




Fig. 2. Hydraulic free jump

If $Q < Q_g$ and there is a h_0 overpressure at the lower point of the pipeline, then a mixed regime of the fluid flow is developed in the pipe, at that on the $L - L_1$ length of the upper part of the pipe a non-pressure flow is developed, and on the L_1 length of the lower part a pressure flow is developed. If the pipe's own i_0 islope is greater than critical slope corresponding the Q flow, then at the pressure flow section b_2 type curve sets up known in professional literature, therefore, at the pipe's entrance section a critical h_{cr} depth sets up and on the surface – atmosphere pressure [14] (fig. 3). The depth along the flow direction decreasing tends to

the depth of uniform flow. Thus, at the non-pressure section flow the fluid stream is rough, and at the initial pressure section – smooth. Therefore, the fluid flow passage from non-pressure regime to pressure one, actually is a passage from rough flow to smooth one, due to which transition phenomenon is a classic hydraulic jump.



Despite researchers having studied these phenomena, air binding is still commonly found in aqueducts, since there is a lack of understanding on the movement of air bubbles and pockets in closed conduits. An experimental investigation was conducted to validate the proposed analytical method. A characteristic feature of the jump is the large amount of entrained air bubbles seen in fig. 4.



Fig. 4. Hydraulic jump in a siphon of pipes

Conjugate depths of hydraulic jump developed in open-channel flow depending on the change of the downstream reach, always are conjugate, that is the increase of one of them is accompanied by a decrease of the other one, for functions of these depths jumps are equal.

Experimental study of the above described phenomena was carried out in the hydraulic research laboratory of the institute of Water Problems and Hydro-engineering after Academician I.V. Eghiazarov, using an experimental setup made of glass pipes of 50 mm diameter (fig. 5).



Fig. 5. Experimental visualization showing air bubbles and hudroulic jump in pipeline

It is obvious that the greater of the conjugate depths of the jump developed in the closed channel is determined by the diameter of the pipe $h_2 = D/i_0$ and is independent of the $Q < Q_g$ flow intensity. On the other hand at the lower point of the pipe h_0 pipe the change of retaining pressure is accompanied by displacement of the place where the jump occurs, during which the flow remains unchanged. Thus, if h_0 increases, the jump place travels upward along the length of the pipe, therefore, the smaller of conjugate depths of the jump grows, and the larger one remains unchanged. Therefore, in the general case of a hydraulic jump developed in a closed channel we arrive at a very important conclusion – conjugate depths can also be non conjugate, that is their jump functions can be unequal. This is an important peculiarity of the closed-channel hydraulic jump.

Results and Discussion

Another peculiarity of the closed channel hydraulic jump is its occurring place relatively large displacement depending on the flow release condition $Q_g > Q = \text{const}$ retaining pressure change and retaining pressure $h_* = \text{const}$ condition flow change. Let us note that in this case the flow increase is accompanied with jump place upward travel and v.v. and the smaller of the jump conjugate depths can be changed in the range $(h_{cr} \dots h_0)$ between critical and normal depths. It is evident that in this interval there is a boundary h_0 depth which will be conjugation of the conjugated large depth $h_2 = D/i_0$. We now determine h_1 depth by equality of its and conjugate jump functions.

The function of the jump function can be written as

$$\Pi(h) = \frac{\alpha Q^2}{gA} + yA, \quad (2)$$

where A is the area of the effective cross-section, y is the distance from the gravity centre of the effective cross-section area to the free surface (fig. 6).




Fig. 6. Cross-section of the pipe

For the circular cross-section, we have

$$A = \frac{R^2}{2} (\beta - \sin\beta), \quad y = R \left(\frac{4}{3} \frac{\sin^3 \frac{\beta}{2}}{\beta - \sin\beta} - \cos\beta \right), \quad (R = D/2). \quad (3)$$

Jump functions will have the following views

$$\Pi(h_*) = \frac{\alpha Q^2}{g R^2 (\beta - \sin\beta)} + \left(\frac{4}{3} \frac{\sin^3 \frac{\beta}{2}}{\beta - \sin\beta} - \cos\beta \right) \frac{R^3}{2} (\beta - \sin\beta), \quad \Pi(D) = \frac{\alpha Q^2}{g \pi R^2} + yA. \quad (4)$$

Equalizing jump functions, we get

$$\frac{6\alpha Q^2}{g R^5} = \frac{[3\pi\beta - 3\pi\sin\beta - 4\sin^3 \frac{\beta}{2} - 3\cos\beta(\beta - \sin\beta)]\pi(\beta - \sin\beta)}{2\pi - \beta + \sin\beta}. \quad (5)$$

It follows from the obtained equation that to each value of $Q < Q_g$ flow running by water conduit corresponds a certain β angle and therefore a certain h_* value of a boundary depth. That is, from equation by the $Q < Q_g$ value is determined angle β

$$h_* = R \left(1 - \cos \frac{\beta}{2} \right). \quad (6)$$

The distance L_1 from the point where the jump occurs to the lower basin is determined geometrically by finding power loss of the pressure floe section.

It is not difficult to determine the above L_1 distance

$$L_1 = \frac{h_0}{i_0 - \frac{Q^2}{K^2}}, \quad (7)$$

where K is the pipe capacity.

It follows from (7) that increase of flow is accompanied by the jump point displacement to the head basin.

As far as the jump point depends on h_0 and Q moves along non-pressure section, then the boundary jump initiation probability is very small. Consequently, to determine the initial depth of the jump is reasonable to use the technique proposed in this paper which consists in finding the distance L_1 of the jump development place, then determining h_1 depth form free surface b_2 type curve equation [14].

Let us now differentiate to types of a jump which is developed in a closed channel. With this end in view we compare h_* boundary and conjugate small h_1 depths corresponding to the given flow. If $h_1 > h_*$ then call the jump approached or suppressed, and if $h_1 < h_*$ - remote, as in case of open channel. It should be noted that dividing jumps into types is not an informal action. First, let us note that kinetic energy of a rough stream in a drowned section where jumps occur is smaller than that of the removed jump section and its dissipation caused by a quiet stream is more perfect. Continuous exchange of air and fluid particles takes place

in the section of jump. In the place of the drowned jump feebly marked aeration is observed. Small air bubbles are developed in the lower part of the effective cross-section, then they moved to its top and with high velocity escape the fluid stream without being entrained by the stream, and dynamic equilibrium of air and fluid particles is established.

At the site of the remote jump relatively tiny particles of air in the form of bubbles are entrained by the fluid stream through the lower part of the section the existing large bubbles move, gradually accelerating, in the opposite direction to the surface of the jump section. As a result removed jump possesses entrainment property.

The hydraulic jump occurred in a closed canal is a dangerous phenomenon especially for open pipelines.

It causes jerks of the pipe which lead to destruction of free supports. Therefore, if a hydraulic jump is detected it is necessary to take special emergency measures to stop it. To provide smooth operation of a pipeline by a valve which will gradually close the pipe by throttling and without changing the flow, establishing pressure flow along the entire length of the pipeline.

Conclusion

The hydraulic jump occurred in a closed canal is a dangerous phenomenon especially for open pipelines.

It causes jerks of the pipe which lead to destruction of free supports. Therefore, if a hydraulic jump is detected it is necessary to take special emergency measures to stop it. To provide smooth operation of a pipeline by a valve which will gradually close the pipe by throttling and without changing the flow, establishing pressure flow along the entire length of the pipeline.

Հունանյան Մխիթար Նիկոլի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Ջրային համակարգերի, հիդրոտեխնիկայի և հիդրոէներգետիկայի ամբիոն, մագիստրանտ, (+374)98780330, jevo007@mail.ru, **Սահակյան Արամ Աշոտի, տ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Շինարարության ֆակուլտետ, դեկան, (+374)77522555, sahakyan.aram@nuaca.am, **Բալջյան Պարգև Հովհաննեսի, տ.գ.դ., պրոֆեսոր** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Ջրային համակարգերի, հիդրոտեխնիկայի և հիդրոէներգետիկայի ամբիոն, (+374)93823541, baljyan-1951@list.ru, **Ստեփանյան Ռիմա Կոստանդինի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն, մագիստրանտ, (+374)98328722, rimastepanyan2002@gmail.com

Унанян Мхитар Николович (РА, г. Ереван) – НУАКА, кафедра Водных систем, гидротехники и гидроэнергетики, магистрант, (+374)98780330, jevo007@mail.ru, **Саакян Арам Ашотович, канд.техн.наук, доцент** (РА, г. Ереван) – НУАКА, Строительного факультета, декан, (+374)77522555, sahakyan.aram@nuaca.am, **Балджян Паргев Оганесович, доктор техн. наук, профессор** (РА, г. Ереван) – НУАКА, кафедра Водных систем, гидротехники и гидроэнергетики, (+374)93823541, baljyan-1951@list.ru, **Степанян Рима Костандиновна** (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Экономики, права и управления, магистрант, (+374)98328722, rimastepanyan2002@gmail.com

Hunanyan Mkhitar (RA, Yerevan) - NUACA, Department of Water Systems, Hydraulic Engineering and Hydropower Engineering, master's student, (+374)98780330, jevo007@mail.ru, **Sahakyan Aram, Doctor of Philosoph (Ph.D) in Engineering, Associate Professor** (RA, Yerevan) - NUACA, Dean of the Construction Faculty, (+374)77522555, sahakyan.aram@nuaca.am, **Balgian Pargev, Doctor of Technical Sciences, Professor** (RA, Yerevan) - NUACA, Department of Water Systems, Hydraulic Engineering and Hydropower Engineering, (+374)93823541, baljyan-1951@list.ru, **Stepanyan Rima** (RA, Yerevan) – NUACA, Department of Economics, Law and Management, master's student, (+374)98328722, rimastepanyan2002@gmail.com

Ներկայացվել է՝ 05.09.2025թ.

Գրախոսվել է՝ 17.10.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 22.12.2025թ.

**ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՇԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ
ԾԱԽՍԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

Չինար Վահանի Ներսեսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

chinar.nersesyan@mail.ru

Հոդվածում ներկայացված է ճանապարհային երթևեկության կազմակերպման անկատարյալ լինելուց տնտեսության կորուստների կառուցվածքը: Ուսումնասիրվել են բնակավայրերում և նրանց մոտեցումներում տրանսպորտային միջոցների կորցրած ժամանակի արժեքը: Տրանսպորտային միջոցների՝ ճանապարհային կորցրած ժամանակով որոշվել է տնտեսության ծախսերը (կորուստները)՝ կապված ուղևորների ճանապարհային գտնվելու հետ: Բնակավայրերում և նրանց մոտեցումներում առաջացած ճանապարհատրանսպորտային պատահարներից առանձնացվել են տնտեսության ուղղակի (անմիջական) կորուստները և անուղղակի ծախսերը:

***Բանալի բառեր.** տրանսպորտաշահագործական ծախս, ճանապարհ, տնտեսության կորուստ, անկատարյալ կազմակերպում, պատահարներ*

Ներածություն


Ճանապարհային երթևեկության կազմակերպման ճարտարագիտական գործունեությունը ներառում է [1].

- ճանապարհային երթևեկության հետազոտության տեղեկատվության ձևավորում,
- ճանապարհափողոցային ցանցի վրա ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) կուտակման տեղերի («սև կետերի») հայտնաբերում,
- ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործման նպատակով միջոցառումների նախագծում և տնտեսական հիմնավորում,
- ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործման տեղային և համալիր միջոցառումների իրացման մասնակցություն,
- ՃՏՊ-ի վայրում վթարափրկարարական աշխատանքների ընթացքում ճանապարհային երթևեկության կազմակերպման օպերատիվ փոփոխում:

Ինչպես ցույց են տալիս արտասահմանյան և հայրենական փորձը՝ ավտոմոբիլացումը տնտեսության վրա հսկայական ազդեցությունից, մարդկանց համար հարմարավետություն ստեղծելուց բացի, կարող է առաջացնել մի շարք բացասական հետևանքներ, որոնք հատկապես շոշափելի են խոշոր քաղաքներում՝ ՃՏՊ-երը, օդային ավազանի աղտոտվածությունը, տրանսպորտային խճողումները, խցանումները և երթևեկության արագության կտրուկ նվազումը [2]:

Նյութեր և մեթոդներ

Ճանապարհային երթևեկության կազմակերպման բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունավետության գնահատման ժամանակ կարևոր խնդիրներից է հանդիսանում սոցիալ-տնտեսական կորուստների հայտնաբերումը և որոշումը, որոնք կախված են երթևեկության կազմակերպման անկատարյալ լինելուց (նկ.):



Նկ. Ճանապարհային երթևեկության կազմակերպման անկատարյալ լինելուց տնտեսության կորուստների կառուցվածքը

Ճանապարհային երթևեկության կազմակերպման բարելավման միջոցառումների արդյունավետությունը գնահատվում է ոչ միայն երթևեկության անվտանգության, այլ նաև ճանապարհի թողունակության և ավտոտրանսպորտի արտադրողականության բարձրացումից [3, 4]:

Արդյունքներ և քննարկում

Բնակավայրերի սահմաններում տրանսպորտաշահագործական ծախսերը որոշվում են երկու եղանակով.

- բեռների և ուղևորների փոխադրման տարեկան ծավալի ինքնարժեքի հաշվարկով, եթե ճանապարհային երթևեկության կազմակերպման կատարելագործման միջոցառումներն իրականացվում են մեծ երկարությամբ ճանապարհահատվածներում,
- կամ ժամանակի արժեքի հաշվարկով, որը ծախսում են տրանսպորտային միջոցները, եթե միջոցառումները կրում են տեղային բնույթ, օրինակ, երթևեկության կազմակերպման կատարելագործման միջոցառումներ՝ բնակավայրերում, ավտոճանապարհների հատումներում և հարակցումներում վերգետնյա կամ ստորգետնյա հետիոտնային անցումների կառուցում և այլն:

Քանի որ հետազոտական աշխատանքներն իրականացվել են բնակավայրերի սահմաններում և նրանց մոտեցումներում, ապա տրանսպորտային միջոցների կորցրած ժամանակի արժեքն առանձին ճանապարհափողոցային ցանցի հատվածի համար որոշվում է հետևյալ բանաձևով [2, 5].

$$C_{\delta\mu} = \sum_{i=1}^n T_{\text{տր.}} S_{d_i} d_i, \quad (1)$$

որտեղ $T_{\text{տր.}}$ -ն ավտոմոբիլային ամբողջ հոսքի տարեկան ժամանակային ծախսն է, *ալ/տ./ժ*, n –ը՝ դիտարկվող հատվածում շարժակազմի տեսակների թիվը, S_{d_i} -ն 1 *ալ/տ./ժ*-ի արժեքն է, *դրամ*, d_i -ն՝ որոշ տեսակի ավտոմոբիլների միավոր մասը:

Բնակավայրերում ավտոճանապարհների միևնույն մակարդակի չկարգավորվող փոխհատումներում տրանսպորտային միջոցների ժամանակի ծախսը տարեկան կլինի՝

$$T_{\delta\mu} = \frac{365 N_{\text{երկ.}} t_0}{3600 K_{\text{ան.}}}, \quad (2)$$

որտեղ $N_{\text{երկ.}}$ -ը երկրորդական ուղղությամբ ավտոճանապարհի վրա “պիկ” ժամանակահատվածում երթևեկության ինտենսիվությունն է, *ալ/տ./ժ*, t_0 -ն՝ մեկ ավտոմոբիլի միջին ուշացումը, *վ*, $K_{\text{ան.}}$ -ն՝ օրվա ընթացքում երթևեկության անհամաչափության գործակիցը (կարող է ընդունվել $K_{\text{ան.}} = 0,1$):

Առավել դժվարություն է ներկայացնում ավտոմոբիլի միջին ուշացման որոշելը: Չկարգավորվող խաչմերուկում (առավելության նշանների առկայության դեպքում) երթևեկությունը գլխավոր ուղղությամբ իրականացվում է գործնականում առանց ուշացումների: Ճանապարհի երկրորդական ուղղությամբ հետագա երթևեկության համար վարորդը հարկադրված է սպասել մինչև հիմնական ճանապարհով երթևեկող ավտոմոբիլների միջև առաջանա բավականին ժամանակային միջակայք:

Այսպիսով, մեկ ավտոմոբիլի ուշացումը կախված է երկրորդական ուղղությամբ խաչմերուկին մոտեցող ավտոմոբիլի կորցրած ժամանակից, երբ վարորդը սպասում է գլխավոր ուղղությամբ ընդունելի միջակայքի առաջացմանը: Նմանատիպ առաջադրանքները լուծվում են

հավանականության մոդելավորման տեսանկյունից: Այդ դեպքում մեկ ավտոմոբիլի միջին ուշացումը որոշվում է հետևյալ արտահայտությամբ [4, 5].

$$t_0 = \frac{e^{N_{ql} \cdot t_{uh}} - N_{ql} \cdot t_{uh} - 1}{N_{ql} - N_{tpr} \cdot (e^{N_{ql} \cdot t_{uh}} - N_{ql} \cdot t_{uh} - 1)}, \quad (3)$$

որտեղ e -ն բնական լոգարիթմի հիմքն է, N_{ql} -ն՝ գլխավոր ճանապարհի ուղղությամբ երթնեկության ինտենսիվությունը, $ավտ./վ$, t_{uh} -ն՝ սահմանային միջակայքը, $վ$, որը ճանապարհի երկրորդական ուղղությունից խաչմերուկ մուտք գործող ավտոմոբիլի սահմանային միջակայքն է, երկգոտի ճանապարհի փոխհատման դեպքում $t_{uh} = 6 \dots 8$ $վ$, ձախ շրջադարձի դեպքում՝ $10 \dots 13$ $վ$, աջ շրջադարձի դեպքում՝ $4 \dots 7$ $վ$, N_{tpr} -ը՝ երկրորդական ուղղությամբ մեկ գոտու երթնեկության ինտենսիվությունը, $ավտ./վ$: Կարգավորվող խաչմերուկներում ավտոմոբիլի միջին ուշացումը հիմնականում կախված է լուսացուցային կարգավորման ռեժիմից և որոշվում է Վեբստերի բանաձևով [4]:

Տնտեսության ծախսերը (կորուստները), կապված ուղևորների ճանապարհին գտնվելու հետ, որոշվում է տրանսպորտային միջոցների՝ ճանապարհին կորցրած ժամանակով [5-7].

$$C_{ուղ.} = T_{տր.} \cdot S_{ղ.} \cdot (d_{ավթ.} \cdot \beta_{ավթ.} \cdot \eta_{ավթ.} + d_{թ.} \cdot \beta_{թ.} \cdot \eta_{թ.}) , \quad (4)$$

որտեղ $T_{տր.}$ -ը՝ տարվա ընթացքում բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների կորցրած ժամանակն է, $ավտ.ժ$, $S_{ղ.}$ -ն՝ մեկ ժամ երթուղում գտնվող ուղևորների և հետիոտների կորուստների միջին մեծությունը, $d_{ավթ.}$ և $d_{թ.}$ -ն՝ համապատասխանաբար ավտոբուսների և թեթև մարդատար ավտոմոբիլների միավոր մասը տրանսպորտային հոսքում, $\beta_{ավթ.}$ և $\beta_{թ.}$ -ն՝ համապատասխանաբար ավտոբուսների և թեթև մարդատար ավտոմոբիլի լիալցման անվանական տարողությունները, $\eta_{ավթ.}$ և $\eta_{թ.}$ -ն՝ համապատասխանաբար ավտոբուսների և թեթև մարդատար ավտոմոբիլի տեղավորման միջին գործակիցները:

ՀՀ ավտոճանապարհներին ՀՏՊ-երի արդյունքում ամեն տարի գոհվում են 300-ից ավելի մարդ և 6000-ից ավելին ստանում են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Վթարների ժամանակ վնասվում և քայքայվում են մեծաքանակ նյութական արժեքներ՝ ավտոմոբիլներ, բեռներ, տարբեր ճարտարագիտական կառույցներ և այլն [8-10]:

Կարելի է ՀՏՊ-երից առանձնացնել տնտեսության կորուստների երկու տեսակներ՝

- ուղղակի (անմիջական) կորուստներ՝ ավտոտրանսպորտային ձեռնարկությունների, ճանապարհաշահագործական հիմնարկների, բեռնափոխադրող ընկերությունների ծախսերը, ոստիկանական և քննչական մարմինների՝ ՀՏՊ-ի հետաքննման, տուժածների բժշկական սպասարկման ծախսերը, տուժածներին հիվանդաթերթիկների վճարումը, պետական մարմինների կողմից սոցիալական ապահովություն (կենսաթոշակ), ապահովագրական ընկերությունների կողմից փոխհատուցման ծախսերը,
- անուղղակի ծախսերին են դասվում. արտադրական ձեռնարկությունների, աշխատակիցների նյութական ոլորտի, արտադրական կազմերի խախտման և սոցիալ-հոգեբանական կորուստները:

Մեկ ճանապարհատրանսպորտային պատահարից գումարային կորուստները (*η_{բա}*) կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով [5].

$$\eta = \sum (\eta_{1i} + \eta_{2i} + \eta_{3i} + \eta_{4i} + \eta_{5i} + \eta_{6i}), \quad (5)$$

որտեղ η_{1i} -ն վնասված ավտոմոբիլների տեղափոխման, վերականգնման և նորոգման ծախսերն են, ինչպես նաև տրանսպորտային միջոցների պարապուրդից կորուստները, η_{2i} -ն՝ ՃՏՊ-ի հետևանքով բեռների վնասվելուց կորուստները, η_{3i} -ն ծախսեր են, կապված ավտոճանապարհների, կառույցների (մետաղական պաշտպանիչներ, երթևեկության կարգավորման տեխնիկական միջոցներ, կամուրջների ճաղավանդակներ, ուղեանցների հենապոստներ և այլն) հետ, η_{4i} -ն ծախսերն են, կապված երթևեկության պայմանների խաթարման հետ (տրանսպորտային միջոցների ուշացումները, գերավազքերը՝ շրջանցման երթուղի ուղղելու դեպքում և երթևեկելի մասի մաքրումը ՃՏՊ-ի հետևանքներից), η_{5i} -ն՝ ոստիկանության և հետաքննող մարմինների ծախսերը, η_{6i} -ն՝ կորուստները, որոնք կապված են մարդու ներգրավումը ՃՏՊ-ի մեջ (ազգային եկամտի մասի կորուստ, բուժման ծախսեր, հիվանդաթերթիկի վճարում, թոշակի, նպաստի տրամադրում և այլն), i - ն՝ մեկ ՃՏՊ-ի մեջ ներգրավված տրանսպորտային միջոցների, բեռների մարդկանց թիվը:

Եզրակացություն

- Ճանապարհային երթևեկության կազմակերպման բարելավման միջոցառումների արդյունավետությունը գնահատվում է ոչ միայն երթևեկության անվտանգության, այլ նաև ճանապարհի թողունակության և ավտոտրանսպորտի արտադրողականության բարձրացումից:
- Բնակավայրերի սահմաններում տրանսպորտաշահագործական ծախսերը որոշվում են բեռների և ուղևորների փոխադրման տարեկան ծավալի ինքնարժեքի հաշվարկով կամ ժամանակի արժեքի հաշվարկով, որը ծախսում են տրանսպորտային միջոցները:
- ՃՏՊ-երից կարելի է առանձնացնել տնտեսության կորուստների երկու տեսակներ՝ ուղղակի (անմիջական) կորուստներ և անուղղակի ծախսեր:

Գրականության ցանկ

- [1] **Г.И. Клинковштейн, М.Б. Афанасьев**, Организация дорожного движения, Транспорт, Москва, 2007, 230 с.
- [2] **С.Н. Боярский**, Экономика автомобильного транспорта, Екатеринбург, 2018, 26 с.
- [3] **А.Г. Левашев**, Повышение эффективности организации дорожного движения. Иркутск, 2004, 20 с.
- [4] **Ю.А. Кременец**, Технические средства организации дорожного движения, Транспорт, Москва, 2005. 279 с.
- [5] **В.А. Аксенов, Е.П. Попова**, Экономическая эффективность рациональной организации дорожного движения, Транспорт, Москва, 2007, 127 с.
- [6] **Ю.А. Ставничий**, Дорожно-транспортная сеть и безопасность движения пешеходов, Транспорт, Москва, 2003, 72 с.
- [7] **Г.Я. Волошин**, Анализ дорожно-транспортных происшествий, Транспорт, Москва, 1997, 239 с.

- [8] Հայաստանի ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարություն, Երևան, 2023, 138 էջ:
- [9] ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների 2023-2033թթ. ռազմավարություն, Երևան, 2022, 92 էջ:
- [10] Стокгольмская декларация, Третья всемирная министерская конференция по безопасности дорожного движения: достижение глобальных целей к 2030 г., Стокгольм, 19–20 февраля 2020. 52 с.

ОПРЕДЕЛЕНИЕ ТРАНСПОРТНО-ЭКСПЛУАТАЦИОННЫХ РАСХОДОВ НА ГРАНИЦАХ НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ

Чинар Вагановна Нерсисян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
chinar.nersesyan@mail.ru

Представлена структура экономических потерь, обусловленных несовершенством организации дорожного движения. Исследована стоимость времени, потерянного транспортными средствами в населенных пунктах и на подходах к ним. На основе времени, потерянного транспортными средствами в пути, определены экономические затраты (убытки), связанные с пребыванием пассажиров в пути. Выделены прямые (непосредственные) и косвенные затраты экономики от дорожно-транспортных происшествий, происходящих в населенных пунктах и на подходах к ним.

Ключевые слова: *транспортно-эксплуатационные расходы, дорога, экономические потери, несовершенство организации, аварии*

DETERMINATION OF TRANSPORT OPERATING COSTS IN THE BORDERS OF SETTLEMENT

Chinar Nersesyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
chinar.nersesyan@mail.ru

The article presents the structure of economic losses resulting from the imperfection of road traffic organization. The value of time lost by vehicles within settlements and on their approaches has been studied. Based on the time vehicles spend delayed on the road, the economic costs (losses) related to passengers' travel time have been determined. The direct (immediate) economic losses and indirect costs caused by road traffic accidents occurring within settlements and on their approaches have been identified separately.

Keywords: *transport operating cost, road, economic loss, imperfect organization, accidents*

Ներսիսյան Չինար Վահանի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Շինարարական մեքենաներ և երթևեկության կազմակերպման ամբիոն, ասիստենտ, (+374)77490858, *chinar.nersesyan@mail.ru*

Нерсисян Чинар Вагановна (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Строительных машин и организации движения, ассистент, (+374)77490858 *chinar.nersesyan@mail.ru*

Nersesyan Chinar (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, assistant, (+374)77490858, *chinar.nersesyan@mail.ru*

Ներկայացվել է՝ 17.11.2025թ.

Գրախոսվել է՝ 01.12.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 22.12.2025թ.

**ԳԱԶԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՒՄ ՀՈԳՆԱԾԱՅԻՆ ԵՎ
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՊԼԱՍՏԻԿ ԴԵՖՈՐՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ
ՀԵՏԱԶՈՏՈՒՄ**

**Միհրան Գրիգորի Ստակյան*, Նարինե Վիլիկի Փիրումյան,
Անգին Վիկտորի Մարտիրոսյան, Աշոտ Յուրիի Սաֆարյան**

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

**stakyan.mihran@yandex.ru*

Դիտարկվում են գազատրանսպորտային համակարգի մայրուղային խողովակաշարերի եռակցված կարերում ընթացող ցիկլային երևույթները, որոնք որոշակի աշխատաժամանակից հետո կարող են հանգեցնել կարերի հոգնածային քայքայումների և դադարեցնել բնականոն գազամատակարարումը: Նշված երևույթները բացառելու նպատակով առաջադրված է եռակցված կարերի կրողունակության բարձրացման տեխնոլոգիա, որը կատարվում է շրջազրոմամբ գործող հոլովակային ամրացնող սարքով: Սարքում տեղակայված այլ մեխանիզմով կատարվում է նաև ամրացված շերտի երեսապատում հակակոռոզիոն ծածկույթով: Տվյալ աշխատանքում նախկին հետազոտությունների վերլուծությամբ և եռակցված կարերի պլաստիկ ամրացված շերտերում ենթամակերևութային միկրոկարծրությունների բազմաքանակ չափումներով կատարված է ազդող գործոնների ցուցանիշների գնահատում և ֆունկցիոնալ կապերի ձևակերպում, որոնք բազմապարամետրական բնույթ են կրում: Արդյունքում հնարավոր է գնահատել հետազոտվող նյութերի և երևույթների համալիր ազդեցությունը ցուցանիշների օպտիմալ արժեքները ստանալու նպատակով:

Բանալի բառեր. *գազատրանսպորտային համակարգ, խողովակաշար, եռակցված կար, մակերևութային ամրացման պլաստիկ դեֆորմացիա, հոգնածային դիմադրություն, գործոնների համալիր գնահատում*

Ներածություն

Գազատրանսպորտային համակարգի (ԳՏՀ) նախագծման, պատրաստման և տեղակայման արդի վիճակը բնութագրվում է կոնստրուկցիայի թողարկման ծավալների կտրուկ աճով, որակի ցուցանիշների անշեղ բարձրացմամբ և բնական գազի սպառման շուկաներում մրցակցային պայմանների տարեցտարի խստացմամբ: Նշված պահանջները ենթադրում են համակարգի ստեղծման և իրացման ողջ գործընթացում կատարել յուրաքանչյուր առանձին միջոցառման կատարելագործում, որոնց մեջ հատկապես առանձնանում են կոնստրուկցիոն տարրերի պատրաստման և վերջնամշակման գործընթացները, որոնք և ձևավորում են պատասխանատու էլեմենտների աշխատանքային մակերևույթների աշխատունակության անհրաժեշտ ցուցանիշները:

Արդի շրջանում արտադրանքի զանգվածային և խոշոր խմբաքանակներով թողարկումը և արտադրության կազմակերպմանն առնչվող ֆինանսական ծախսերի մեծացումը պահանջներ են առաջադրում կատարված հետազոտությունների համալիր դասակարգմամբ մշակել կոնստրուկտորատեխնոլոգիական մեթոդիկա, որն ընդհանրացնելով կատարված հետազոտությունների արդյունքները, հնարավորություն կընձեռի մի շարք գործողությունների համալիր գնահատմամբ իրականացնել հետևյալ ընթացակարգերը.

- կոնստրուկցիայի պատասխանատու էլեմենտներում համեմատաբար էժան՝ միջին ածխածնային և ցածր լեզիրված կոնստրուկցիոն պողպատների ընտրություն և ամրացման տեխնոլոգիաների կիրառում,
- ամրացված էլեմենտների ենթամակերևութային շերտերում մնացորդային սեղմող լարումներով և բարձր միկրոկարծրությամբ օպտիմալ խորության ստեղծում, որը զգալիորեն կբարձրացնի հոգնածային դիմադրությունը և մաշակայունությունը,
- ամրացման գործընթացի համալիր մաթեմատիկական մոդելի և փոխկապակցված ֆունկցիոնալ կապերի ստեղծում:

Նյութեր և մեթոդներ

Նշված հիմնախնդիրն իրականացնելու համար անհրաժեշտ է քննարկել հետևյալ հարցերը.

1. ուսումնասիրել աշխատանքային մակերևութների միկրոերկրաչափական պարամետրերի օպտիմիզացման գործընթացները մակերևութային պլաստիկ դեֆորմացման (ՄՊԴ) մեթոդի կիրառմամբ և դրանց ազդեցությունն էլեմենտների աշխատունակության հիմնական ցուցանիշների վրա,
2. ամրացման տեխնոլոգիական պարամետրերի և դեֆորմացված մակերևութային շերտերի ֆիզիկամեխանիկական ցուցանիշների միջև ֆունկցիոնալ կապերի բացահայտման նպատակով մշակել ամրացված գլանական մակերևութային շերտերի միկրոկարծրությունների չափման մեթոդիկա և գրաֆիկական սխեմա՝ ըստ դեֆորմացված շերտերի խորացման չափի,
3. նախկին և առկա հետազոտություններում ստացված տվյալների հիման վրա ձևավորել և դուրս բերել բազմապարամետրական ֆունկցիոնալ կապեր էլեմենտների նյութագիտական և երկրաչափական ցուցանիշների, ամրացման տեխնոլոգիաների պարամետրերի և դեֆորմացված մակերևութային շերտերի ֆիզիկամեխանիկական ցուցանիշների խմբերի միջև:

Հետազոտության գիտամեթոդական հիմքը՝ դա պատասխանատու էլեմենտներում ՄՊԴ տեխնոլոգիաների և ամրացված մակերևութային շերտերում ընթացող ֆիզիկամեխանիկական գործընթացների ուսումնասիրումը և տեսական նկարագրումն է: Հետազոտության տեսական մասը հիմնված է կոնստրուկցիոն մեխանիկայի և մաթեմատիկական վիճակագրության դրույթների վրա, որոնք թույլ են տալիս ներկայացնել նշված գործընթացների մաթեմատիկական մոդելները:

Այդ նպատակով օգտագործվել են ստանդարտ համակարգչային ծրագրեր (*Wolfram Mathematica* և *այլն*), որոնցում օպտիմալ լուծումներ առաջադրելու համար ընդգրկված են նաև լրացուցիչ ենթածրագրեր [1, 2]:

Կիրառված է նաև համակարգային վերլուծության մեթոդը, ըստ որի դասակարգվել և ընտրվել են առավել գործնական նշանակություն ունեցող տարբերակները, որոնց համար կարելի է ստանալ բազմապարամետրական ֆունկցիոնալ կապեր:

Արդյունքներ և քննարկում

Ինչպես վկայում են կոտրվածքաբանական և տեխնիկական արատաորոշման հետազոտությունները, կոնստրուկցիոն համակարգերում վնասվածքների զգալի մասը (մոտ 75%-ը) հոգնածային բնույթ է կրում, որի պատճառով առաջնային է դառնում տարրերի հոգնածային դիմադրության բարձրացման համալիր միջոցառումների կիրառումը: Այս տեսակետից կարևոր նշանակություն է ստանում հաշվանախագծային և տեխնոլոգիական գործընթացների համալիր ուսումնասիրումը: Առաջին դեպքում անհրաժեշտություն է դառնում հաշվարկներում քվանտիլային հոգնածային գծերի հավասարումների օգտագործումը, որը թույլ է տալիս հուսալիության գնահատումներում ցիկլային ամրության և երկարակեցության ցուցանիշները ներկայացնել չքայքայման հավանականության տրված մակարդակով, իսկ երկրորդ դեպքում՝ ԳՏՀ-ի էլեմենտներում ՄԴՊ-ի կիրառումը, որը տեխնոլոգիապես հեշտ իրականացվող և տնտեսապես ընդունելի մեթոդ է և թույլ է տալիս ցիկլային ամրության ցուցանիշները բարձրացնել 1,5...2,0 անգամ, իսկ երկարակեցության ցուցանիշները 2...4-ի սահմաններում:

Տվյալ ոլորտում կատարված աշխատանքները հիմնականում վերաբերվել են որոշակի դասի կոնստրուկցիաների և տեխնոլոգիական սարքավորումների պատասխանատու էլեմենտների և հանգույցների կրողունակության բարձրացման նպատակով ամրացման նոր տեխնոլոգիաների առաջադրմանը, սարքավորումների և դեֆորմացնող գործիքների կոնստրուկցիաների մշակմանը, ներգործման ֆիզիկական մեթոդների ընդլայմանը և դրանց համակցված կիրառմանը: Համեմատաբար քիչ են ուսումնասիրված մակերևութային շերտերում ամրացման երևույթների օրինաչափությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն տրված ծառայության ժամկետում աշխատանքային մակերևութների կրողունակության ապահովման, ինչպես նաև կոռոզիոն, շփական և հոգնածային ներգործումները (առանձին կամ համատեղ) հնարավորինս նվազացնելու և որպես արդյունք՝ մակերևութային վնասվածքները շերտի խորությամբ ներթափանցմանը դիմակայելու տեսակետից [3, 4]:

Տվյալ հետազոտության թեմայով ՃՇՀԱՀ-ում նախագծված է մայրուղային գազատարներում եռակցված կարերի մակերևութային ամրացման համար նախատեսված և շրջաօլորման սկզբունքով գործող հոլովակային ամրացնող սարքի կոնստրուկցիան, որը նաև երեսապատում է ամրացված շերտը հակակոռոզիոն ծածկույթով: Նշված երկու միջոցառումները (կոնստրուկցիա և ամրացման տեխնոլոգիա) արտոնագրված են Հայաստանում [5, 6]:

Նշված միջոցառումների համալիր և տարբեր զուգորդումներով դիտարկումը, ինչպես նաև դրանցից որևէ մեկի առաջնայնության ընդունումը կոնստրուկցիաների նախագծման և խոշոր խմբաքանակներով թողարկման պայմաններում առաջադրում են այդ գործընթացների մաթեմատիկական մոդելավորում և դիտարկվող միջոցառումների ցուցանիշների օպտիմալացում: Դա թույլ կտա բնագավառի հետազոտություններում հիմնախնդիրների լուծման համար ընդունված դիֆերենցիալ սկզբունքից անցում կատարել նշված միջոցառումների համալիր և համակարգված մեթոդիկային, բացահայտել դիտարկվող պարամետրերի միջև ֆունկցիոնալ կապեր և առաջադրել ամրացման օպտիմալ գործընթացներ:

Յուրաքանչյուր առանձին դեպքում ամրացման եղանակի ընտրությունը պահանջում է լարվածային վիճակի և մնացորդային լարումների բնույթի մանրակրկիտ հետազոտում լարումների կուտակիչների տարբեր տիպերի առկայության դեպքում: Այդ պատճառով ամրության բարձրացման օպտիմալ մեթոդի և դրա պարամետրերի որոշումը կայացվում է բնապայման փորձարկումների հիմքի վրա, որոնք նմանակում են էլեմենտների աշխատանքի պայմանները, հաշվի առնելով մնացորդային լարումների փաստացի բաշխումը լարումների կուտակիչի տվյալ տիպի դեպքում (նկ. 1):

Տվյալները ցույց են տալիս, որ պողպատի դիմացկունության սահմանի վրա այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են՝ պոկման դիմադրությունը, պլաստիկությունը և լարումների կուտակիչների նկատմամբ զգայունությունը, սերտ կապված և փոխապայմանավորված են: Այս դեպքում մեծ նշանակություն ունեն նաև միկրոկառուցվածքի յուրահատկությունները՝ դրա համասեռությունը, կազմվածքը (մարտենսիտային կամ տրոստիտային) և մետաղալուծությունը, ոչ մետաղական հավելանյութերի առկայությունը և պինդ լուծույթում ածխածնի պարունակությունը [7-9]:



Նկ. 1. Լարումների կուտակիչով էլեմենտի մակերևութային ամրացման սխեմատիկ տեսքը.

1 – չամրացված էլեմենտի սահմանային աշխատանքային էպյուրը, 2 – չամրացված էլեմենտի ամրության մակարդակը, 3 – մնացորդային սեղմող լարումների բաշխումը մակերևութային դեֆորմացումից հետո, 4 և 4' – 1 և 3 էպյուրների գումարային արդյունքն ամրացումից հետո

$\sigma_{R(v)}$, $\tau_{R(v)}$ դիմացկունության սահմանների աճի վրա զգալի ազդեցություն ունեն նաև ամրացման տեխնոլոգիական պարամետրերը (V , S , t , F) և հատկապես F նորմալ ուժը, որի օպտիմալ արժեքի դեպքում կարելի է ստանալ այդ սահմանների առավելագույն արժեքները (նկ. 2):



Նկ. 2. Տարբեր միկրոկառուցվածքային 45XH կոնստրուկցիոն պողպատի ցիկլային ծոման ($\sigma_{R(v)}$, կոր 1) և ցիկլային ուղորման ($\tau_{R(v)}$, կոր 2) դիմացկունության սահմանների փոփոխությունները շրջագլորման F ուժից. $\circ$ – մարտենսիտային, $\bullet$ – տրոստիտային միկրոկառուցվածքներ

Ամրացված էլեմենտների հոգնածային դիմադրության աճը, որը պայմանավորված է մնացորդային սեղմող լարումների առաջացմամբ և դեֆորմացված շերտի հատկությունների բարենպաստ համակազմով, էլեմենտի առավելագույն ամրացման սահմաններում հասանելի է դառնում նյութի մակերևութային շերտերի դիմադրության, մինչև կրիտիկական երկարությամբ հոգնածային ճաքերի առաջացման, իսկ դրանց կրիտիկական երկարության դեպքում՝ ճաքերի արդյունավետ արգելակման շնորհիվ:

Հոգնածային դիմադրության բնութագրերը որոշելու համար օգտագործում են քվանտիլային հոգնածային գծերի ընտանիքի հավասարումները, որոնց պարամետրն է չքայքայման հավանականության $P(N)$ մակարդակը, ներկայացված $P(z)$ նորմալ բաշխման նորմավորված ֆունկցիայի z_p քվանտիլով և որոնք ունեն հետևյալ տեսքը [3].

- $N \leq 5 \cdot 10^6$ տիրույթում (քվանտիլային գծերի ձախ հատվածը).

$$N \leq N_{G(v)}, \quad \lg N = (\lg \bar{N}_v + z_p s_{Nr(v)}) - (\bar{m}_{(v)} + z_p s_{m(v)})(\lg \sigma - \lg \bar{\sigma}_{(v)}) = C_{(v)} - m_{(v)} \lg \sigma, \quad (1)$$

- $N > 5 \cdot 10^6$ տիրույթում (քվանտիլային գծերի աջ հատվածը).

$$N > N_{G(v)}, \quad \lg N_{G(v)}, \quad \lg \bar{\sigma}_{R(v)} = (C_{(v)} - \lg N_{G(v)}) / m_{(v)}: \quad (2)$$

(1)-(2) – ում բերված են հետևյալ մեծությունները.

$$m_{(v)} = \bar{m}_{(v)} + z_p s_{m(v)}, \quad C_{(v)} = \bar{C}_{(v)} + z_p s_{C(v)}, \quad \bar{m}_{(v)} = \bar{r}_{(v)} / S_{N(v)}^2, \\ \bar{C}_{(v)} = \bar{m}_{(v)} \lg \bar{\sigma}_{(v)} + \lg N_{(v)}, \quad S_{Nr(v)} = S_{N(v)} \sqrt{(1 - r_{(v)}^2)(n - 1) / (n - 2)}, \quad (3)$$

$$S_{m(v)} = (S_{N(v)} / S_{\sigma(v)}) \sqrt{(1 - r_{(v)}^2)(n - 2)}, \quad S_{C(v)} = S_{Nr(v)} + S_{m(v)} \lg \sigma_{(v)}:$$

Կատարելով համապատասխան ձևափոխություններ՝ $N_{G(v)}$ -ի համար, համաձայն (1)-(3)-ի կստացվի.

$$\lg N_{G(v)} = \lg \bar{N}_{G(v)} + z_p (s_{C(v)} - s_{m(v)} \lg \sigma_{R(v)} - \bar{m}_{(v)} s_{\sigma R(v)}) = \lg \bar{N}_{G(v)} + z_p s_{NG(v)}$$

$$\text{կամ } \lg N_{G(v)} = \lg \bar{N}_{G(v)} + z_p (s_{C(v)} - s_{m(v)} \lg \bar{\sigma}_{R(v)} - m_{(v)} s_{\sigma R(v)}) = \lg \bar{N}_{G(v)} + z_p s_{NG(v)}, \quad (4)$$

որտեղ $N_{G(v)}$ -ի ընդհանրական միջին քառակուսային շեղումը՝

$$s_{NG(v)} = (s_{C(v)} - s_{m(v)}lg\sigma_{R(v)} - \overline{m}_{(v)}s_{\sigma_{R(v)}})$$

կամ $\acute{s}_{NG(v)} = (s_{C(v)} - s_{m(v)}lg\overline{\sigma}_{R(v)} - m_{(v)}s_{\sigma_{R(v)}})$: (5)

Նույն ձևով՝

$$lg\sigma_{R(v)} = lg\overline{\sigma}_{R(v)} + z_p s_{\sigma_{R(v)}}: (6)$$

Աշխատանքի նպատակն է ի հայտ բերել ամրացման էֆեկտի գումարային ազդեցությունն էլեմենտների երկրաչափական պարամետրերի, ձևերի, մակերևութային անհարթությունների և վերջնական արդյունքում դրանց դիմացկունության միջնարժեքային սահմանի վրա, ինչպես նաև որոշելու ամրացման տեխնոլոգիայի օպտիմալ ռեժիմները՝ հոգնածային դիմադրության գործակիցների տրված արժեքների դեպքում: Հաշվի առնելով տարբեր գործոնների ազդեցության ողջ տիրույթը և նախկինում կատարված լայնածավալ հետազոտությունները՝ որպես ելակետային վերցվել և դասակարգվել են փորձարկումների այն տեսակները, որոնք վերաբերում են առավել շատ օգտագործվող 40X մակնիշի կոնստրուկցիոն պողպատից (ջերամշակումը՝ նորմալիզացում, $\sigma_B = 920 \text{ ՄՊա}$, $HB = 215...250$) պատրաստված էլեմենտներին, որոնց աշխատանքային մակերևույթները ենթարկվել են պլաստիկ շրջազլորման և փորձարկվել են ցիկլային ծոմամբ կամ համատեղ ծոմամբ և ոլորմամբ ([10-13], հոգնածային փորձարկումների մոտ 665 խմբաքանակներ), որոնցից ընտրված են առավել նշանակալից 64-ը, որոնք դասակարգված են ըստ d տրամագծի, $\overline{\alpha}_\sigma$ լարումների կուտակման գործակցի և Δh ամրացման շերտի խորության [14]:

Արդյունքում ստացվել են քվանտիլային հոգնածային գծերի 64 ընտանիքների հավասարումներ: Նշված փորձարկումները դասակարգված են ըստ հետազոտված գործոնների (նյութագիտական, կոնստրուկցիոն, տեխնոլոգիական, շահագործական) համատեղ և տարբեր զուգորդումներով ազդեցության, որը նախկինում համակարգված բնույթ չի կրել: Բացահայտվել են այդ գործոնների ցուցանիշների տարաբնույթ և փոխադարձ ֆունկցիոնալ կապերը: Նման մոտեցումը կարևոր նշանակություն ունի նախագծման փուլում ցուցանիշների հիմնավորված արժեքների կիրառման նպատակով, որոնք ընտրված են ըստ գործոնի առաջնայնության, իսկ մնացածները՝ ըստ հաջորդականության և որն էլ կապահովի գազատարի օպտիմալ կոնստրուկցիայի մշակումը: Այդ կապակցությամբ առաջադրված է բազմապարամետրական ֆունկցիոնալ կապ [12]՝

$$\Phi_1[(F, V, S), (d, \alpha_\sigma), (\Delta h, HV, HV_{max}), (R_a, R_z, R_{max}), (\overline{C}_{(v)}, \overline{m}_{(v)}, lgN_{G(v)}, \sigma_{R(v)})] = 0, (7)$$

որը փոխարինված է պարամետրական հավասարումների համակարգով՝

$$\begin{aligned} \Delta h &= f_1(F, V, S), & HV &= \varphi_1(\Delta h), & \overline{C}_{(v)} &= \varphi_6(\overline{m}_{(v)}), \\ HV_{max} &= f_2(F, V, S), & HV_{max} &= \varphi_2(\Delta h), & \overline{m}_{(v)} &= \varphi_7(HV_{max}), \\ R_a &= f_3(F, V, S), & \overline{\sigma}_{R(v)} &= \varphi_3(\Delta h, d, \alpha_\sigma), & \overline{m}_{(v)} &= \varphi_8(\Delta h), \\ R_z &= f_4(F, V, S), & d &= \varphi_4(\overline{\sigma}_{R(v)}, \alpha_\sigma, \Delta h), & \overline{\sigma}_{R(v)} &= \varphi_9(lg\overline{N}_{G(v)}), \\ R_{max} &= f_5(F, V, S), & \overline{m}_{(v)} &= \varphi_5(\overline{\sigma}_{R(v)}), & lg\overline{N}_{G(v)} &= \varphi_{10}(\Delta h): \end{aligned} (8)$$

Հավասարումների (8) համակարգի կիրառմամբ ցիկլային երկարակեցությունների հաշվարկներ կատարելու համար անհրաժեշտ է օգտագործել հոգնածային գծերի հավասարումների

$\overline{m}_{(v)}$, $\overline{C}_{(v)}$, $\overline{\sigma}_{R(v)}$ և $\overline{N}_{G(v)}$ պարամետրերին առնչվող ֆունկցիոնալ կապերը: Այդ պարամետրերի առաջնայնության սկզբունքը թելադրվում է իրականացվող հետազոտության շրջանակներում կոնստրուկցիոն տարրերի հոգնաձային դիմադրության վրա գործոններից (հաշվանախագծային, տեխնոլոգիական, շահագործական) որևէ մեկի ազդեցության գերակայության հաշվառման դեպքում: Օրինակ, $\overline{\sigma}_{R(v)} = \varphi_9(lg\overline{N}_{G(v)})$ ֆունկցիայի համար հնարավոր են արգումենտի և պարամետրերի առաջնայնության զուգորդումների հետևյալ տարբերակները.

$$\begin{aligned} 1. \quad (lg\overline{N}_{G(v)}, \alpha_\sigma, d, \Delta h), \quad 3. \quad (lg\overline{N}_{G(v)}, d, \alpha_\sigma, \Delta h), \quad 5. \quad (lg\overline{N}_{G(v)}, \Delta h, \alpha_\sigma, d), \\ 2. \quad (lg\overline{N}_{G(v)}, \alpha_\sigma, \Delta h, d), \quad 4. \quad (lg\overline{N}_{G(v)}, d, \Delta h, \alpha_\sigma), \quad 6. \quad (lg\overline{N}_{G(v)}, \Delta h, d, \alpha_\sigma), \end{aligned} \quad (9)$$

որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է հոգնաձային դիմադրության հետազոտման որոշակի դեպքին: Դիտարկված են (9)-ի 1 և 2 տարբերակները, որոնցում ՄՊԴ-ի կիրառման դեպքում առաջնայնություն է տրվում էլեմենտի (հանգույցի) եզրագծի տեսքին (α_σ) և կոնստրուկտիվ չափերին (d):

Օգտագործելով նախկինում կատարված փորձարարական ուսումնասիրությունների նշանակալի ծավալը, կազմված է (3) պարամետրերի տվյալների բազա՝ առավել շատ կիրառվող 40X մակնիշի կոնստրուկցիոն պողպատի համար: Թվով 64 քվանտիլային հոգնաձային գծերի հավասարումների $\overline{\sigma}_{R(v)}$, $\overline{C}_{(v)}$, $\overline{m}_{(v)}$, $lg\overline{N}_{G(v)}$ գուգանիշները դասակարգված են ըստ α_σ , Δh և d պարամետրերի (նկ. 3)՝

$$\begin{aligned} \alpha_{\sigma 1} &= 1,00 \dots 1,05, & \overline{\alpha}_{\sigma 1} &\approx 1,00, & \Delta h_1 &= 0, & d_1 &= 7,5 \text{ մմ}, \\ \alpha_{\sigma 2} &= 1,06 \dots 1,50, & \overline{\alpha}_{\sigma 2} &\approx 1,25, & \Delta h_2 &= 0,05 \text{ մմ}, & d_2 &= 10 \text{ մմ}, \\ \alpha_{\sigma 3} &= 1,51 \dots 2,00, & \overline{\alpha}_{\sigma 3} &\approx 1,75, & \Delta h_3 &= 0,10 \text{ մմ}, & d_3 &= 15 \text{ մմ}, \\ \alpha_{\sigma 4} &= 2,01 \dots 3,50, & \overline{\alpha}_{\sigma 4} &\approx 2,75, & \Delta h_4 &= 0,15 \text{ մմ}, & d_4 &= 20 \text{ մմ}: \end{aligned} \quad (10)$$

Դիտարկվող տրամագծային միջակայքը համապատասխանում է հոգնաձային փորձարկումներում օգտագործված փորձանմուշների չափերին, որոնք հիմնականում վերցված են $d = 7,5, 10$ և 15 և $20,0$ մմ արժեքներով՝ ելնելով կիրառված ստանդարտ հոգնաձային փորձարկման սարքավորումների հնարավորություններից: Դեֆորմացված շերտի $\Delta h = 0,05 \dots 0,15$ մմ խորությունը ստացվում է փորձանմուշների մակերևույթները



Նկ. 3. $\overline{\sigma}_{R(v)} = \varphi_9(lg\overline{N}_{G(v)})$ ֆունկցիայի արգումենտի և պարամետրերի առաջնայնության սխեման (9)-ի կ. 2-ի համար, ըստ I, ..., IV մակարդակների՝ ($\overline{N}_{G(v)} - \alpha_\sigma - \Delta h - d$)

$V = 52,2$ մ/բ, $F = 100...500$ Ն և $S = 0,050...0,155$ մմ/պտ ամրացման ռեժիմով մշակելու դեպքում:

Արտադրական պայմաններում առավելագույն արդյունքի հասնելու նպատակով F -ի մեծությունը կարելի է ավելի բարձր վերցնել, որն էլեմենտների $d = 20...60$ մմ տրամագծերի դեպքում հիմնավորված է: Տվյալ հետազոտության շրջանակում փորձանմուշների $d = 7,5...20$ մմ տրամագծերի համար F -ի արժեքները սահմանափակված են լայնական մնացորդային դեֆորմացիաներից և տրամագծերի փոփոխություններից խուսափելու պայմաններից ելնելով, սակայն նույնիսկ F -ի նշված արժեքների դեպքում ակնհայտ են էլեմենտների ամրության և երկարակեցության աճի միտումները:

Տվյալների քանակական գնահատումները, որոնք իրականացված են ցիկլային ամրության և երկարակեցության հարաբերական մեծություններով ($\delta\bar{\sigma}_{R(v)} = \bar{\sigma}_{R(v)} / \bar{\sigma}_R$, $\delta\bar{N}_{G(v)} / \bar{N}_G$), բացահայտում են ՄՊԴ-ի դրական ազդեցությունն այդ չափանիշների վրա (աղյուսակ):

Եթե հարթ փորձանմուշների համար $\Delta h_4 = 0,15$ մմ-ի դեպքում՝ $\delta\bar{\sigma}_{R(v)} = 1,16...1,27$, ապա $\bar{\alpha}_{\sigma 4}$ - համար այդ աճը հասնում է $\delta\bar{\sigma}_{R(v)} = 1,53...1,88$: Մյուս էական փոփոխությունը բացահայտվում է հարթ և լարումների կուտակիչներով փորձանմուշների տվյալների համեմատման դեպքում: Եթե չամրացված փորձանմուշների համար նշագրված է $\delta\bar{\sigma}_{R(v)} = 0,38...0,43$ արժեքների միջակայքը, ապա ՄՊԴ-ի դեպքում այն հասնում է $\delta\bar{\sigma}_{R(v)} = 0,67...0,70$, ապահովելով ամրության մոտ 27 % աճ (աղյուսակ, կկ. 5,...,8): Այդ աճն առավել նշանակալի է, եթե համեմատվում են լարումների զգալի կուտակիչներով փորձանմուշների տվյալները (աղյուսակ, կ. 4). $\Delta h_4 = 0,15$ մմ-ի դեպքում այն հասնում է $\delta\bar{\sigma}_{R(v)} = 1,53...1,88$, այսինքն՝ ամրացման տեխնոլոգիայի ազդեցությունը հատկապես արդյունավետ է լարումների կուտակման բարձր աստիճանի դեպքում, որը բնորոշ է իրական կոնստրուկցիոն տարրերին և գործնական նշանակություն ունի:

Համեմատաբար ցածր աճի մակարդակ առկա է նաև ցիկլային երկարակեցությունների գնահատման դեպքում: Համաձայն փորձարարական տվյալների [10-12], $\bar{N}_{G(v)}$ -ի զգալի աճ հանդես է գալիս իրական կոնստրուկցիաներում Δh_i -ի բարձր արժեքների դեպքում ($\bar{N}_{G(v)} = (8...12) \cdot 10^6$), սակայն լարումների կուտակիչների առկայության պարագայում $\bar{N}_{G(v)}$ -ն, որպես կանոն, հարթ փորձանմուշների նկատմամբ որոշակիորեն ցածր է, որն էլ առկա է նաև ներկա հետազոտությունում:

Աղյուսակ

Փորձանմուշների հարաբերական ցիկլային ամրության և երկարակեցության փոփոխությունները

N°	$\bar{\alpha}_{\sigma}$	Δh , մմ	$d_1, \dots, d_4$, մմ	$\delta\bar{\sigma}_{R(v)}$	$\delta\bar{N}_{G(v)}$
Նույն $\bar{\alpha}_{\sigma}$ -ի, բայց $\Delta h_i = 0, 0,05, 0,10$ և $0,15$ մմ-ի դեպքում					
1	1,00	0	7,5...20,0	1,0	1,0
		0,05		1,01...1,07	0,48...0,64
		0,10		1,06...1,15	0,55...0,63
		0,15		1,16...1,27	1,04...1,51
2	1,25	0		1,0	1,0
		0,05		1,04...1,29	0,86...0,96
		0,10		1,06...1,33	0,83...0,96
		0,15		1,15...1,38	0,77...0,90

Աղյուսակի շարունակություն

3	1,75	0		1,0	1,0
		0,05		1,05...1,31	0,61...0,79
		0,10		1,16...1,43	0,67...0,84
		0,15		1,26...1,54	0,70...0,86
4	2,75	0		1,0	1,0
		0,05		1,31...1,54	0,79...0,83
		0,10		1,39...1,69	0,84...0,88
		0,15		1,53...1,88	0,88...0,91
Հարթ ($\overline{\alpha}_{\sigma_1} = 1,00, \Delta h_1 = 0$) և լարումների զգալի կուտակիչով ($\overline{\alpha}_{\sigma_4} = 2,75$) փորձանմուշների տվյալների համեմատման դեպքում					
5	1,00	0	7,5...20,0	0,38...0,43	0,64...0,81
6		0,05		0,56...0,58	0,52...0,64
7	2,75	0,10		0,59...0,63	0,54...0,70
8		0,15		0,67...0,70	0,59...0,73

Այն զգալի է հարթ փորձանմուշների փորձարկումներում՝ $\delta \bar{N}_{G(v)} = 1,04...1,51$, $\bar{\alpha}_{\sigma_4} = 2,75$ -ի դեպքում նվազում է մինչև $\delta \bar{N}_{G(v)} = 0,88...0,91$, իսկ հարթ և լարումների կուտակիչներով փորձանմուշների տվյալների համեմատման դեպքում՝ $\delta \bar{N}_{G(v)} = 0,59...0,73$ (աղյուսակ, կ. 8):

Եզրակացություն

ՄՊԴ տեխնոլոգիական հետազոտությունների վերլուծությամբ (665 խմբաքանակ փորձարկումներ) ընտրված և դասակարգված են առավել օգտագործվող 45 և 40X մակնիշի պողպատներից պատրաստված կոնստրուկցիոն էլեմենտների ամրության և երկարակեցության ցուցանիշներն ըստ բեռնվածության ռեժիմների, եզրագծի ձևերի և չափերի, ինչպես նաև մակերևութային ամրացման տեխնոլոգիական պարամետրերի (64 խմբաքանակ փորձարկումներ), որոնցով ձևակերպված է տվյալների բազա:

ՄՊԴ գործընթացների արդյունավետությունը մեքենամասերի ցիկլային ամրության և երկարակեցության վրա գնահատելու նպատակով, ըստ տվյալների բազայի և միկրոկարծրության կատարված չափումների դիտարկված է միջնարժեքային հոգնածային կորերի պարամետրերի և մակերևութային շերտերի ֆիզիկամեխանիկական ցուցանիշների հարաբերակցությունը ՄՊԴ պարամետրերից: Ձևակերպված են բազմապարամետրական ֆունկցիոնալ կապեր նշված մեծությունների միջև ըստ ազդող գործոնների ցուցանիշների առաջնայնության սկզբունքի, որոնք փաստորեն ՄՊԴ գործընթացի մաթեմատիկական մոդելներն են:

Կատարված համալիր հետազոտության արդյունքով ստացվել են հետևյալ որակական և քանակական գնահատականները.

- ՄՊԴ տեխնոլոգիայի օպտիմալ պարամետրերի կիրառման դեպքում հնարավոր է բարձրացնել էլեմենտների ցիկլային ամրությունը 1,2...1,5 անգամ, իսկ ցիկլային երկա-

րակեցությունը՝ 2,5...3,5 անգամ, մոտեցնելով 40X մակնիշի կոնստրուկցիոն պողպատների ֆիզիկամեխանիկական բնութագրերը բարձր ածխածնային և լեգիրված պողպատների համապատասխան մեծություններին,

- էլեմենտներում լարումների չափավոր կուտակման դեպքում ($\alpha_\sigma = 1,1 \dots 1,7$) ամրացման տեխնոլոգիան հնարավորինս նվազեցնում և նույնիսկ վերացնում է լարումների կուտակման և մասշտաբային գործոնի բացասական ազդեցությունները,
- մակերևութային ամրացման տեխնոլոգիայի կիրառումը թույլ է տալիս ԳՏՀ-ի նախագծման, թողարկման և շահագործման գործընթացներում լուծել ուղիղ և հակադարձ բնույթի հիմնախնդիրներ և ցածր ինքնարժեքի կոնստրուկցիոն պողպատների կիրառմամբ ապահովել տնտեսական արդյունավետություն:

Գրականության ցանկ

- [1] **М.Г. Стакян, Л.Г. Оганесян, Г.А. Манукян,** Корреляционный и регрессионный анализ результатов испытаний, Алгоритмы и программы: Инф. бюлл. ВНИТИЦентр, ГФАП, СССР, ЦИФ 5 (1990) 7 с.
- [2] **М.Г. Стакян, Т.Э. Джрбашян, А.С. Мнацаканян,** Вероятностные методы расчета относительной прочности и долговечности деталей машин, Алгоритмы и программы: Инф. бюлл. Всеросс. науч.-техн. инф. центра 3-6 (1992) 9 с.
- [3] **Ю.Г. Матвиенко,** Диаграммы трещиностойкости тел с надрезами и трещинами, Проблемы машиностроения и надежности машин 3 (2004) 53-57.
- [4] **ASTM E 1820-99a,** Standart Test Method for Measurement of Fracture Toughness, 2001.
- [5] **ՀՀ Արտոնագիր № 756У,** Եռակցված խողովակների կցվանքային կարերի վերջնամշակման սարք/ **Մ.Գ. Ստակյան, Ն.Վ. Փիրումյան, Հ.Ս. Ղազարյան,** 16.08.2022, 12 էջ:
- [6] **ՀՀ Արտոնագիր № 762У,** Գազատար խողովակների կցվանքային եռակցված կարերի ամրության և երկարակեցության բարձրացման եղանակ/ **Մ.Գ. Ստակյան, Ն.Վ. Փիրումյան, Հ.Ս. Ղազարյան,** 16.09.2022, 11 էջ:
- [7] **S. Neubert, A. Pittner, M. Rethmeier,** Numerical sensitivity analysis of TRIP-parameter K on weld residual stresses for steel S355J2+N, Journ. Therm. Sresses. 39 (2016) 201-219.
- [8] **R. Ossenbrink,** Thermomechanische Schweißsimulation unter Berücksichtigung von Berichte des Lehrstuhls Fuge- und Schweißtechnik der BTU Cottbus-Senftenberg, Band 2, 2009, 166 p.
- [9] **J. Rech, A. Moisan,** Surface integrity in finish hard turning of case-hardened steels, Int. Journ. of Machine Tools and Manufacture 43(5) (2003) 543-550.
- [10] **И.М. Жарский и др.,** Технологические методы обеспечения надежности машин, Высшая школа, Минск, 2010, 336 с.
- [11] **В.П. Когаев,** Расчеты на прочность при напряжениях, переменных во времени, Машиностроение, Москва, 2003, 232 с.
- [12] **М.Г. Стакян, М.С. Торосян,** Оценка показателей сопротивления усталости валов транспортных средств, подвергнутых поверхностному упрочнению, Сб. мат.междунар. науч.-практ. конф.: «Логистика, Транспорт, Природообустройство», 8-9 окт. 2015, Ереван, 2015, 101-109.
- [13] **Т.Ю. Степанова,** Технология поверхностного упрочнения деталей машин, Иваново, 2009, 64 с.
- [14] **Մ.Գ. Ստակյան, Ն.Վ. Փիրումյան, Ա.Վ. Մարտիրոսյան,** Գազատրանսպորտային համակարգերում էլեմենտների լարվածային վիճակի հետազոտումը, ՃՇՀԱՀ գիտ. աշխ. 1(91) (2025) 128-139:

КОМПЛЕКСНОЕ ИССЛЕДОВАНИЕ ПРОЦЕССОВ УСТАЛОСТИ И ПОВЕРХНОСТНОГО ПЛАСТИЧЕСКОГО ДЕФОРМИРОВАНИЯ ЭЛЕМЕНТОВ ГАЗОТРАНСПОРТНОЙ СИСТЕМЫ

Мигран Григорьевич Стакян*, Нарине Виликовна Пирумян,
Ангин Викторовна Мартirosян, Ашот Юрьевич Сафарян

Национальный университет архитектуры и строительства Армении, г.Ереван, РА,

*stakyan.mihran@yandex.ru

Рассмотрены циклические явления, протекающие в сварных швах магистральных трубопроводов газотранспортной системы, которые после определенного срока работы могут свести к усталостным разрушениям швов, приостанавливать нормальную газоподачу. Для предотвращения указанных явлений предложена технология повышения несущей способности сварных швов, которая выполняется упрочняющим роликовым устройством, действующим по круговой обкатке. По монтированному в устройстве механизму производится также нанесение антикоррозионного покрытия. В данной работе анализом результатов ранее выполненных исследований и значительными измерениями микротвердостей в подслоях упрочненных сварных швов выполнена оценка показателей действующих факторов и получены функциональные связи, которые носят многопараметрический характер. В результате можно оценить комплексное воздействие исследуемых материалов и явлений с целью получения оптимальных значений их показателей.

Ключевые слова: газотранспортная система, трубопровод, сварной шов, поверхностная упрочняющая пластическая деформация, усталостное сопротивление, комплексная оценка факторов

COMPREHENSIVE STUDY OF FATIGUE AND SURFACE PLASTIC DEFORMATION PROCESSES IN GAS TRANSMISSION SYSTEM ELEMENTS

Mihran Stakyan*, Narine Pirumyan, Angin Martirosyan, Ashot Safaryan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

*stakyan.mihran@yandex.ru

Cyclic phenomena occurring in the welds of the main pipelines of the gas transmission system are considered, which after a certain period of operation can cause fatigue failure of the seams and discontinue normal gas supply. In order to prevent these phenomena, a technology has been proposed to increase the bearing capacity of welds, which is performed by means of a reinforcing roller device, which is operating in a circular run-in. An anti-corrosion coating is also applied by means of a mechanism mounted in the device. In this paper, by analyzing the results of previous studies and on the basis of significant measurements of microhardnesses in the sublayers of plastically hardened welds, the indicators of the acting factors are evaluated and functional relationships are formulated, which are multiparametric in nature. In summary, it is possible to evaluate the complex impact of the studied materials and phenomena in order to obtain optimal values of their indicators.

Keywords: gas transmission system, pipeline, weld, surface hardening deformation, fatigue resistance, comprehensive assessment of factors

Ստակյան Միհրան Գրիգորի, տ.գ.դ., պրոֆեսոր (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, ավագ գիտաշխատող, (+374)10554362, (+374)33554560, stakyan.mihran@yandex.ru, **Փիրումյան Նարինե Վիլիկի, տ.գ.թ.** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, ավագ գիտաշխատող, (+374)77700901, pirumyan@gmail.com, **Մարտիրոսյան Անգին Վիկտորի, տ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Մաթեմատիկայի, շինարարական մեխանիկայի և ֆիզիկայի դեպարտամենտ, (+374)94762396, angin84@mail.ru, **Սաֆարյան Աշոտ Յուրիի, ճ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեսության, պատմության և ժառանգության ամբիոն, (+374)77700904, ayusafaryan@gmail.com

Стакян Мигран Григорьевич, д.т.н., профессор (РА, г. Ереван) - НУАСА, старший научный сотрудник, (+374)10554362, (+374)33554560, stakyan.mihran@yandex.ru, **Пирумян Нарине Виликовна, к.т.н.** (РА, г. Ереван) - НУАСА, старший научный сотрудник, (+374)77700901, pirumyan@gmail.com, **Мартиросян Ангин Викторевна, к.т.н., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, департамент Математики, строительной механики и физики, (+374)94762396, angin84@mail.ru, **Сафарян Ашот Юрьевич, канд.архит., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теории, истории и наследия архитектуры, (+374)77700904, ayusafaryan@gmail.com

